ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

# ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 2 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ — 1906

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

(նկար Եղիշէ Թադէոսեանի)

իւղատիպ մեծադիր պատկերը (96×66 սանտ.) տպուած Լայպցիգի Էմիլ Պինկաուն անուանաւոր գործարանում 14 գոյնով։

Գինն է առանց ճանապարհի ծախքի 3 ռ.

Միևնոյն պատկերը, տպուած միևնոյն դիրքով **ԿՏԱՒԻ** վերայ, վաճառւում է իւրաքանչիւր օրինակը 15 ռուբլիով։ Ցանկացողները կարող են դիմել մեզ, ուղարկելով պատկերի արժէքը։ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

—

1. Խմբագրութիւնը ոչ մի չը տպուելու յղուած չէ վերադարձնում. ցանկացողները յեռ ստանայ՝ կամ պէտք է թերթերը դիմեն յեռ ստանալու եւ կամ ուղարկեն փոստի ծախքը։

2. Խմբագրութիւնը իրաւունք ունի հարկաւոր դէպքում փոփոխել կամ կրճատել տպագրուելի յղուածները։

3. Խմբագրութեան ուղարկած յղուածները պէտք է լինեն գրուած մաքուր, պարզ եւ մի երեսի վերայ. մանաւանդ պարզ պէտք է գրել յատուկ անուններն ու օտարազգի բառերը։

4. Խմբագրութիւնը իրաւունք ունի բոլոր յղուածները ենթարկել իւր ուղղագրութեան։

5. Թարգմանական յղուածների հետ միշտ պէտք է ուղարկել եւ բնագիրը, առանց որի ոչ մի թարգմանութիւն չի կարող տպուել։

6. Խմբագրութեան զանազան հարցերով դիմողները պարտաւոր են ուղարկել պատասխանի համար նամակադրոշմ։

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 50 կոպէկ դրամով կամ նամակադրոշմով։

8. «Լուսաւոր» որեւէ համար չը ստանալու դէպքում պէտք է յայտնել խմբագրութեան առանձին նամակով մի ամսուայ ընթացքում, որպէս զի կարողանանք պաշտամաւոր դիտում անել փոստային վարչութեան։



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

# ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 2 ՓԵՏՐՈՒԱՐ

Արագատիպ Ա. Քուլթաթելաձէի
ԹԻՖԼԻՍ — 1906

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—


I *Մամիկոնեան տոհմը Հայոց պատմութեան մէջ* ԱՐՇԱԿ ԱԴԱՊԵԱՆ . . . . . 5

II *Նոր իսրայէլի սաղմոսներ.* ՅՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆ 18

III *Սուլթանի գահակալութեան տարեդարձը.* Մ. ՇԻՈՏ . . . . . 22

IV *Հայ ազգի կեանքի եւ մահուան խնդիրը.* ԳԷՈՐԳ ԱՀԱՐՈՆԵԱՆ . . . . . 34

V *Աւետարանի եղբայրները.* ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱԴԷ 46

VI *Հարաւի այրին.* Ց. ԽԱՆԵԼԱՐԵԱՆ. . . . 63

VII *Սոսկալի պատիժ. Թարգմ.* ՊԱՏՐԻԿ . . 64

VIII *Այս տարին էլ...* Տ. ՇՈՒԼՈՒԵԱՆՑ . . 68

IX *Փրիդրիխ Էնգէլս Կարլ Կաուցկու.* Բ. ԹՈՐՈՍՅԵԱՆՑ . . . . . 69

X *Թագաւորի դասը. գերմ. փոխադ.* ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս. . . . . 81

XI ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

*Վիրահատութիւն առանց ցաւի.* ՕՐ. ՆՈՒՍԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ . . . . . 89

XII ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

*1. Գիւլիստանցի. Մկա վախ չունիմ։ 2. Ռ. Հաուպտման. Զուլֆակներ. դրամա թարգմ. ռուս. տ.* Ս. ԱՐՏԵՄԵԱՆ։ ԲՐԻՋ։—*Ստացուած գրքեր* . . . . . 91

XIII ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*Հայ—Թուրքական համագումարը։* ԳԱՐԵԳ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ։ *Գարունը հայոց աշխարհում. հայ գիւղացու պէտքերը. ի՞նչ տեսակ օգնութիւն է հարկաւոր նորան. գործունէութեան ընդար-*

ծակ ասպարէզ։—Ս. Էջմիածնի միաբանութիւնը սթափւում է։ Խորհրդակցութիւն դպրոցական գործի համար։ դպրոցական համագումար։—Երեւանի թեմական դպրոցի աշակերտների գործադուլը. Ղարաբաղի թեմի դպրոցի աշակերտների պահանջները եւ Ներսիսեան Դպրոցի աշակերտների դասադուլը։—Թիֆլիզի հայոց բարեգործական ընկերութիւնը։ Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը եւ նորա գործունէութիւնը։ Դրամատիքական ընկերութիւն։ «Հայկազեան քաղաքակրթական միութիւն»։—Պետական խորհուրդ եւ Պետական Դուման։—Ներքին լուրեր։—Նամակներ խմբագրութեան. Լուսայ նուիրողներ . . . . . 99

XIV ՄԱՀԳՈՅԺ

Մինաս Խունունց։ . . . . . 117

XV ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1. Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն։ 2. Ճաշկերոյթ 'ի պատիւ Ջէմս Բրայսի։ ՀԱԳ. Արտասահմանի հայերի հեռագիրներ նախ. Ռուզվէլտին։ Ռուզվէլտի մերժումը . . . . . 119

VI ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ . . . 123

XVII ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . 125

XVIII ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ժ. Ժ. Ռուսսօ. Էմիլ. գիրք. Բ. գերմ. թարգ. ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ . . 107—122

# ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՏՈՀՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(287—855)

(Պատմական հայեացք)

## I

Մամիկոնեան տոհմի ծագման մասին յայտնի երկու աղբիւր ունենք—Մովսէս Խորենացին և Սեբէոսը։ Երկուսն էլ խօսում են Մամիկոնեան տոհմի Ճենաստանից կամ այժմեան Չինաստանից Հայաստան գալու մասին, համաձայն չեն միայն գալու ժամանակի ու եկողների անունների վերաբերութեամբ. համաձայն են, սակայն, երկու գլխաւոր կէտում՝ առաջին, որ Մամիկոնեան տոհմը, քաղաքական յեղափոխութեան երեսից փախչելով Չինաստանից, ապաւինել է նախ Պարսկաստան և ապա այնտեղից Հայաստան. և, երկրորդ, որ այդ տոհմը՝ նախարարական շատ նշանաւոր ցեղից լինելով՝ Թագաւորից յետոյ երկրորդ պատիւն է ունեցել իւր բուն հայրենիքում։

Չինացի Նորեկ Մամգուն իշխանն, ըստ Խորենացու, որի անունը ժամանակի ընթացքում հայերը փոխելով Մամիկոն ու ազգը Մամիկոնեան դարձրին, իբրև պատմական անձնաւորութիւն, հանդէս է գալիս երրորդ դարի վերջերում—287 թուականներին. այն ժամանակները, երբ Խոսրով Մեծի որդի Տրդատը հռովմէական զօրքով գալիս էր հօր գահին տիրելու։

Աղմկալից ժամանակներ էին այդ ժամանակները. հայրենիքի ազատութեան գործին նուիրուած երիտասարդ թագաժառանգը կարօտ էր ազնիւ, անձնուրաց, հայրենի ազատութեան ոգին ըմբռնող պետական գործիչների։ Այդ տեսակէտից բարոյական մեծ պարտք կայ մեզ վրայ ծանօթանալու Մամիկոնեան տոհմի անձնուրաց ներկայացուցիչների հետ, որոնք զարդարել են մեր ազգի պատմութիւնը իրենց ազնիւ ձգտումներով ու աննման քաջագործութիւններով։ Երկու խօս-

քով պատկերացնենք այդ ժամանակուայ հայերի քաղաքական դրութիւնը ժամանակակից մեծ պետութիւնների վերաբերութեամբ։ Մինչև երրորդ դարի սկզբները Ք. յ. մեր ազգը գտնուում էր երկու մեծ պետութեան արանքում. արևմտեան կողմից հռովմէական կայսրութիւնն էր, արևելեան կողմից՝ Պարթևական պետութիւնը։ Հռովմէական քաղաքականութիւնը սկսած Օգոստոս կայսեր օրից, թէև դէմ էր Հայաստանի զօրանալուն, բայց չէր էլ ուզում նրա կործանումը. հայոց թագաւորութիւնը Հռոմի համար մի պատնէշ էր Պարթևների և հիւսիսային լեռնականների դէմ, իսկ Պարթևական պետութիւնը այդ միջոցներում, թուլացած ներքին երկպառակութիւններից, այն ոյժը չունէր, որ մենակ կարողանար կլանել Հայաստանը։ Այդ հանգամանքները բաւական նպաստաւոր էին հայոց թագաւորութեան գոյութիւնն ապահովելու համար։

Հայերի քաղաքական դրութիւնը վատացաւ, երբ պարթևների տեղ հանդէս եկան պարսիկներն իրենց ազգային, Սասանեան թագաւորներով (226) և Հռոմի տեղ յոյները (395) Բիւզանդիոնի թագաւորներով։ Պարթևական պետութեան մէջ կատարուած քաղաքական յեղափոխութիւնը կատարեալ դժբախտութիւն էր հայերիս համար, ըստորում, արևելքում մեր ազգը, կորցնելով անվտանգ հարևան, նրա տեղ վաստակում էր կենսունակ, հետևապէս, վտանգաւոր հարևան։ Այդ յեղափոխութեան ժամանակ, ըստ Խորենացու, թագաւորում էր Հայաստանում Տրդատի հայր Խոսրով I Մեծը. նա շատ լաւ ըմբռնեց այդ քաղաքական յեղափոխութեան ճակատագրական նշանակութիւնը հայերիս համար, այդ պատճառով էլ հռովմայեցիների օգնութեամբ դուրս եկաւ գահը վերադարձնելու Արշակունի պարթևներին և Պարսից նորահաստատ Արտաշիր I թագաւորին հալածեց այժմեան Աղուանստանի կողմերը՝ տիրելով Պարսկաստանի արևմտեան մասին, բայց իւր վերջնական նպատակին ոչ միայն չկարողացաւ հասնել, այլ և կորցրեց թագը։ Պարսից Արտաշիր թագաւորը աշկարա չկարողանալով դիմադրել Խոսրովին, դաւադրութեամբ սպանել տուեց նրան և Հայաստանին տիրացաւ (261) ամբողջ 26 տարի։ Ահա այս դժբախտ ժամանակներն էր, որ Մամիկոնեանք երևացին Հայաստանում. այս ժամանակներն էր, որ Տրդատը դալիս էր հայոց թագաւորութիւնը վերականգնելու և դրա համար, ասում եմ, կարօտ էր նա ազնիւ, եռանդուն գործիչների, որովհետև, գահին տիրելու համար, հայոց թագաժառանգը ստիպուած

էր ոչ միայն արտաքին հզօր թշնամու դէմ կռուել, այլ և ներքին ապստամբութիւնները զսպել։

Այդպիսի ապստամբներից էր Սլկունեաց Սղուկ իշխանը, որն ամրանալով Եփրատի ակունքի վրայ՝ Ողկան բերդում՝ աւերածութիւններ էր անում Տարօնում։ Տրդատ ժամանակ չունէր անձամբ զսպելու այդ ապստամբութիւնը, այդ պատճառով Սղուկի իշխանութիւնը խոստացաւ նրան, ով կսպանէր ապստամբին՝ ճնշելով ապստամբութիւնը։ Այդ յանձնարարութիւնը ճարպիկութեամբ և արագ գլուխ բերեց Մամիկոնեանների նախահայր Մամգունը, և թագաւորը խոստման համաձայն Մամգունին տուեց Տարօնի իշխանութիւնը. այդպիսով, Տարօնը դարձաւ Մամիկոնեան տոհմի բնակավայրը։ Մամիկոնեան տոհմի ներկայացուցիչները աղգիս պատմութեան մէջ յիշւում են 568 տարուայ ընթացքում, և ժամանակի այդ տարածութեան վրայ սփռուած են այդ ազնիւ ցեղի հերոսները մեր աղգի պատմութեան էջերում։ Մեր երեք պատմագրերից Մովսէս Խորենացին եթէ խօսում է Մամիկոնեանց ծագման մասին՝ միւս երկու պատմիչները—Եղիշէն ու Փարպեցին—զեղում են իրենց բոլոր շնորհքը, որպէս զի վառ գոյներով պատկերացնեն յետագայ սերունդների առաջ այդ աղգի հերոսների ազնիւ ձգտումները, կատարած վեհ գործերը, և այդ բոլոր նկարագրութիւններից կարմիր թելի պէս մի գիծ ենք նշմարում Մամիկոնեան սերնդի բնաւորութեան մէջ—տեսնում ենք ներշնչուած վեհ զգացումներով, անկեղծ՝ անձնուրաց հայրենասիրութիւնը դրոշմած նրանց հերոսական ճակատին։ Եւ հենց այդ էր պատճառը, որ Մամիկոնեաններին խէթ աչքով էին նայում պարսիկները ու յոյները։ Այդ երկու արքունիքը, մինն աշկար, միւսը դաղտնի, հետամուտ էին այդ տոհմը վերջացնելու, ըստորում, աղգային դիմադիր կուսակցութեան պարագլուխ էին համարում Մամիկոնեաններին։

Ատում էին Մամիկոնեաններին և մեր հայ նախարարներից շատերը, որոնք թշնամի պետութիւնների ձեռին անարգ գործիք դարձած, անձնական շահերին զոհ էին բերում աղգային շահերը։ Մամիկոնեաններն, ընդհանրապէս, ժամանակակիցներից չմիթարուեցին, չխնդացին, և իրենց կեանքը մաշեցին գործելով, կռուելով օտարամոլ նախարարների դէմ։ Վկայ են՝ Վասակ, Մուշեղ և Մանուէլ Մամիկոնեան սպարապետները Արշակունեաց օրով. Վարդանը, Վահանը կրօնական պատերազմների ժամանակ. Գայլ-Վահան, Սմբատ, Վահան Կամսարական

պարսկական տիրապետութեան վերջին շրջանում և Տիրան, Մուշեղ եղբայրները արաբական արշաւանքների ժամանակ։

II

Սասանեան թագաւորները 83 տարուայ ընթացքում (226—309) անյաջող փորձեր էին անում ուժով գրաւել Հայաստանը. այդ ձգտումն, ի հարկէ, դէմ էր հռովմայեցոց քաղաքականութեան, որոնք Հայաստանը պատնէշ էին համարում նոյն Սասանեան պետութեան դէմ. սակայն ժամանակի ընթացքում փոխուեցին քաղաքական հանգամանքները՝ Պարսկաստանն սկսեց զօրեղանալ Շապուհ II-ի օրով (309—379) և հռովմայեցոց Յովիանոս կայսրն ստիպուեց 363-ի դաշնադրութեամբ ոչ միայն Միջագետքը թողնել Պարսկաստանին, այլև՝ Հայաստանն իւր բախտին—որ նշանակում է՝ եթէ Պարսկաստանը կարողանար նուաճել Հայաստանը, Հռոմը դէմ ոչինչ չունէր։

Քաջահաճութիւնը չէր, որ ստիպում էր հռովմայեցոց կայսրին ձեռք քաշել իւր վաղեմի՝ աւանդական քաղաքականութիւնից, այլ՝ բարդուող հանգամանքների ոյժը—Հռոմի տեղը նեղ էր՝ գերմանական ազգերը յարձակումներ էին անում նրա հիւսիսային սահմանների վրայ, չէր կարողանում միաժամանակ համ գերմանական թարմ ազգերին դէմ կենալ, համէլ արևելքում իւր դաշնակցին պաշտպանել ուժեղ Պարսկաստանի դէմ։ Այդ ժամանակի Հայաստանի թագաւորն էր Արշակ II (353—368) որին ժամանակակից էին ժամանակագրական կարգով՝ Կոստանդ, Յուլիանոս, Յովիանոս. և վերջին երկու՝ Վաղենտիանոս ու Վաղէս եղբայրները, իսկ Պարսից թագաւորներից Շապուհ II Երկայնակեացը, որը հենց դաշնադրութեան թուին (363) հայոց թագաւորից անպայման հնազանդութիւն պահանջեց։

Արշակ II լաւ հասարեց մեռնել, քան Հայաստանը Պարսից ձեռը տալ. սակայն հայ նախարարներից շատ քչերն էին իրենց թագաւորի պէս մտածում. աւատական ոգին, միութեան գաղափարի բացակայութիւնը թելադրեց նրանցից շատերին անցնել թշնամու կողմը, որը խոստանում էր ոչ միայն ձեռը չտալ աւատական իրաւունքներին, այլև նոր արտօնութիւններ շնորհել նրանց։ Ժամանակի կաթողիկոս Ներսէս Մեծը, զուրկ քաղաքականութիւնից, իբրև կրօնական, իբրև ժամանակի որդի՝ ամեն բանի վրայ նայում էր զուտ կրօնական տեսակէտից։ Գնէլի սպանման գործը, որ հետևանք էր միայն Տիրիթի գար-

Շելի դաւադրութեան և Արշակի նրան հաւատալուն,—Ներսէս մեծին հոգով հեռացրեց Արշակից։

Հայաստանի քաղաքական այդպիսի փափուկ պարագաներում Ներսէս Մեծի բռնած դիրքը աւելի ևս ծանրացրեց հայոց թագաւորի դրութիւնը։ Այսպիսի աննպաստ հանգամանքներում սկսուեց հայ-պարսկական պատերազմը, որ քաշեց չորս կամ հինգ տարի (363—367—9)։

Արշակ II չյուսահատուեց, դաշը կապեց հոների ու ալանների հետ ու նրանց օգնական զօրքերով սկսեց ասպատակել Պարսից արևմտեան գաւառները—Ատրպատականը. այս ճակատագրական պատերազմների ժամանակ հայոց զօրքերի ընդհանուր հրամանատարը՝ սպարապետն էր Վասակ Մամիկոնեան, որ այդ պատերազմների շունչն ու ոգին էր։ Հայերը մեծ տոկունութիւն ցոյց տուին՝ 23 մեծ ընդհարումներում, ըստ Փաւստոսի, զգալի ջարդ տուին պարսիկներին. սակայն երկարատև պատերազմը տնտեսական տագնապ յառաջ բերեց երկու պետութեան մէջ էլ. բայց, չնայած այդ կարևոր հանգամանքին, Արշակ կամենում էր մինչև վերջին շունչը պատերազմել։

Եսամոլ հայ նախարարները իրար ետևից թողին Արշակին և անցան Շապուհի կողմը. ժողովուրդը յուսահատուեց և միայն Վասակ Մամիկոնեանն էր, որ սիրտ էր տալի Արշակին՝ թև ու թիկունք դառնալով նրա համար։

Դաւաճան նախարարների մէջ յայտնի էր իւր ազգատոհմով Մերուժան Արծրունին, անպիտանների անպիտանը, որին մեր պատմիչները վատանշան են անուանում։ Մերուժանին Պարսից արքունիքը թագ էր խոստացել, և դաւաճանը, թշնամու զօրքերի առաջն ընկած, աւերում էր մայր Հայաստանը։

Վասակ սպարապետը ջանք էր անում բռնի, կամ սպանի դաւաճանին, բայց չէր լինում՝ գարշելին, պատմագրի խօսքերով, ... միածի ճողոպրեալ մազապուր փախչէր՝—ձիով փախչում, ազատուում էր։

Պատերազմի վերջերում, երբ դաւաճանութիւնը ընդհանուր կերպարանք առաւ հայ նախարարների մէջ, որոնք Արշակի զօրանալը ձեռնտու չէին համարում իրենց մասնաւոր շահերի համար,—Մերուժանը կարողացաւ արատաւորել Մամիկոնեանների անունը՝ իւր թակարդը գցելով Վասակ Մամիկոնեանի եղբայր Վահանին, որը Մերուժանի մօրեղբայրն էր։ Վահան այնքան կուրացաւ, մինչ, Մերուժանի նման, հաւատը փոխեց, և դրա համար էլ Շապուհ

փեսայացրեց նրան՝ կնութեան տալով իւր քոյր Որմզդուխտին։

Մերուժանն ու Վահանը մեծ չարիքներ հասցրին մեր երկրին, մանաւանդ Արշակի գերուժից ու Վասակ Մամիկոնեանի մահից յետոյ։ Վահանի դաւաճանութիւնը միակ, բայց անջնջելի արատ պիտի մնար Մամիկոնեան ազնիւ տոհմի անուանվրայ, եթէ այդ արատը չսրբուէր նոյն Վահանի հարազատ որդի Սամուէլի ձեռով, որ հաւատը փոխելու և դաւաճան դառնալու համար սպանեց թէ իւր հօրը և թէ խորթ մօրը ու ինքը փախաւ Խաղտեաց—այժմեան Տրապիզոնի կողմերը։

Շապուհ, կամենալով վերջ տալ ձանձրալի պատերազմին, խաղաղութեան առաջարկութիւններ արաւ Արշակին. առաջարկից, որ գայ անձամբ Պարսկաստան՝ եղբայրական խաղաղութիւնն ամրապնդելու համար։ Արշակ ոյժ չունէր պատերազմը շարունակելու, սպառուել էին նրա միջոցները. իւր մօտ Վասակ սպարապետն էր մնացել միայն և իւր աներ՝ Սիւնեաց Անդովկ իշխանը։ Ներսէս մեծը չէր սիրում Արշակին Գնելին սպանելու ՝ու կինն առնելու համար, և այդ բաւական էր, որ ժողովուրդը սառչէր Արշակից։ Արշակ II իւր դէմ ունենալով, այդպիսով, Ներսէս մեծի հեղինակութիւնը, և հպատակների սնտարբերութիւնը, անճարացած, Վասակ Մամիկոնեանի հետ գնաց Պարսկաստան Շապուհին ներկայանալու (367-ին կամ 68-ին), որը երդմամբ հաւատացրել էր, թէ ոչինչ վնաս չի հասցնելու հայոց թագաւորին։

Թողնում ենք Արշակի ընդունելութեան պատմութիւնը, որովհետև այդ չի մեր նպատակը. այսքանը կասենք, որ Շապուհ շղթայակապ հայոց քաջարի թագաւորին ցմահ բանտարկութեան ուղարկեց Պարսկաստանի հարաւը—Անյուշ բերդը, ուր և անձնասպանութեամբ վերջ դրեց իւր կեանքին անբախտ թագաւորը։

Բերենք այստեղ Ղազար Փարպեցուց այն պատմական տեսարանը, որ տեղի ունեցաւ Շապուհի և Վասակ Մամիկոնեանի մէջ. այդ տեսարանը կենդանացնում է մեր առաջ անմահ սպարապետին, և ցոյց է տալիս թէ ինչ մարդիկ է տուել Մամիկոնեան տոհմը։ Արշակից յետոյ միւս առաւօտ Շապուհ հրամայում է ներկայացնել իրեն հայոց սպարապետ՝ Վասակ Մամիկոնեանին. Վասակն աչքովն ընկնելիս աւագանիների առաջ Շապուհ թափում է իւր թոյնը նրա վրայ։

—Աղուէս, դո՛. էիր այսքան խռովութիւնների պատճառը, այնքան տարի մեզ չարչարողը, այնքան արիների (պարսիկ-

ների) արիւն թափողը... գիտէ՞ս, ինչ մահ է սպասում՝ աղուէսի նման եմ սպանել տալու քեզ։

Զվհատուեց, լեզուն չծամեցե Վասակ, և տուեց հետևեալ աւելի խրոխտ պատասխանը։

—Մտիցդ գցե՞լ ես իմ մեծութիւնը... մինչև այժմ աչքիդ առիւծ էի, հիմա աղուէս դարձայ քեզ համար։ Քանի որ ազատ Վասակն էի՝ հսկայ էի երևում աչքիդ. ոտիս մինը մի սարի վրայ դրած, միւսը՝ այլ, աջն էի շարժում՝ աջ լեռն էր գլուխը գետին խոնարհում, ձախն էի շարժում, ձախն էր այդպէս անում։

—Այդ ինչ լեռներ են,-զառնացած հարցրեց Շապուհ։

—Այդ լեռներից մինը Պարսկաստանն էր, միւսը՝ Յունաստանը,- վերջին պատասխանը տուեց Վասակ։

Շապուհ, տեսնելով ուր է հասնում Վասակի համարձակութեան սահմանը, հրամայեց մորթել անմահ հերոսին, մաշկել, մորթին խոտով լցնել ու դնել Արշակի առաջ Անյուշ բերդում... Այսպիսի անմման համարձակութեամբ զոհուեց հայրենիքի ազատութեան վեհ գաղափարի համար հայոց սպարապետ Վասակ Մամիկոնեանը։

III

Սոսկալի էր հայերի դրութիւնը Արշակի գերուժից և Վասակ Մամիկոնեանի հերոսական մահից յետոյ. երկիրն անտէր էր մնացել. Շապուհ, դիմադրութեան չհանդիպելով՝ առժամանակ քարուքանդ չարաւ Հայաստանը։ Նրա արիւնարբու Զիկու ու Կարէն զօրավարները հիմնայատակ արին հայ նշանաւոր քաղաքներից Զարեհաւան, Զարիշատ, Վան, Երուանդաշատ, Վաղարշապատ, Արտաշատ, Նախիջևան. Մասիս չղթայի հարաւային ու հիւսիսային կողմերից—Արաքսի հովտից, Տուրուբերանից ու Վասպուրականից կէս միլիոնից աւել գերի տարան Պարսկաստան։ Այդ գերեվարութեան հետ չի կարելի համեմատել ոչ արաբներինը, ոչ յոյներինը և ոչ թաթարներինը. աւելի՝ հայի տունը քանդող այդ գերեվարութեան հետ կարելի է համեմատել միայն Շահաբաս մեծի գերեվարութիւնը (1603)։

Հայոց Փառանձեմ թագուհին, ամրացած արքայական գանձերով Արտագերեց բերդում, աչքը ճամբի, օրէցօր սպասում էր իւր Պապ որդու օգնութեանը, որ պատանդ էր Յունաց արքունիքում։ Փառանձեմի տասներեք ամիս - մինչև վերջին շունչ դիմանալը՝ կտրուած հայոց աշխարհից, ցոյց է տալիս, թէ ժամանակի հասարակական կազմը ինչ տեսակ կանանց տիպեր է

եղել տալիս. բայց՝ անասելի, անպատմելի դառը եղաւ Փառանձեմի վախճանը գերուելուց յետոյ։

Շապուհ հայոց թագուհուն տուեց իւր զինուորների ձեռը որ բռնաբարեն, նախապէս ինքը տալով օրինակ քստմնելի լրբութեան։ Կամենալով լկտիութեան աստիճանն աւելի բարձրացնել՝ Շապուհ հրամայեց որ բոլոր հայ իշխանների կանանց ժողովեն Զարեհաւանի հրապարակը, որի կողքին ցած էր թողել իւր վրանը. Շապուհ ձիով շրջում էր հայ կանանց մէջ և գեղեցիկներին ընտրում, իւր վրանը տանում... Այդ ժամանակ էր, որ Սիւնեաց Անդովկ իշխանի կինը թքեց Շապուհի լկտի երեսին։

Շապուհի վարմունքը հայոց Փառանձեմ թագուհու և հայ նախարարների կանանց հետ մի կողմից եթէ ցոյց է տալի արևելեան թագաւորի լկտիութիւնը, միւս կողմից բաց է անում մեր առաջ՝ թէ իւր անցեալ օրերում ինչ սոսկալի տանջանքներ է քաշել հայ ժողովուրդը և ինչպիսի՞ հազուագիւտ ոգեկան արիութեամբ դիմացել նրանց...

Այդ միջոցի հռոմայեցոց կայսրներն էին Վալենտիանոս և Վալէս եղբայրները, որոնցից առաջինը արևմտեան մասի վրայ էր, երկրորդն՝ արևելեան կամ յունաց։ Երկու եղբայրն էլ անմիջապէս Յովիանոսի մահից յետ (364) սկսեցին թագաւորել. Վալէսի թագաւորութիւնը միայն եղբօր թագաւորութիւնից չորս տարի աւել քաշեց—(364—379), այսինքն՝ Շապուհի մահուան տարին։

Այդ աղմկայոյզ, տագնապալից և յուսահատութեան օրերում դարձեալ Մամիկոնեան տոհմն է, որ հայրենիքի պաշտպան է հանդիսանում—հայերը դիմում են Վասակի որդի Մուշեղին, որ յանձն առնի սպարապետութիւնը և փրկի ազգը մեծ վտանգից։ Մուշեղ սրբութեամբ կատարեց ազգի իւր վրայ յոյսը. նրա առաջին գործը եղաւ, անիշխանութեանը վերջ տալու համար, Արշակ II-ի որդի Պապին թագաւորացնել հայոց վրայ յունական զօրքերի օգնութեամբ. այդ նպատակով, հայ պատգամաւորութեան գլուխ անցած, գնաց Վալէս կայսրին խնդրելու (368), որ Պապին թագաւոր տայ հայոց վրայ։ Կայսրը համաձայնեց։ Շապուհ դէմ լինելով Հայաստանի անկախութեան, չէր կարող, իհարկէ, խաղաղ աչքով նայել Պապի Հայաստան գալուն, այնէլ՝ յունական զօրքերով. այդ պատճառով նորից բորբոքուեց հայ — Պարսկական պատերազմը և այս անգամ այն տարբերութեամբ, որ հայոց սպարապետ Մուշեղի հայրենասիրական խանդի հետ

խառնուել էր և վրիժառութեան ոգին։ Մուշեղ, լցուած անպատում ցասումով, հօր անագորոյն մահը միտը գալիս, Հայաստանի աւերածութիւնը տեսնելիս՝ ուզում էր քարը քարի վրայ չթողնի ամբողջ Պարսկաստանում. նա իւր ոյժը կենդրոնացնելով Արաքսի աջ ափին, սկսեց աւերել Ատրպատականը. մի քանի անգամ քիչ էր մնում Շապուհ գերի ընկնի Մուշեղի ձեռը, միայն ձին թափեց. միւս անգամ Մուշեղ գերեց Շապուհի ամբողջ հարեմը, բայց հայոց սպարապետը Շապուհի պէս չվարուեց, այլ պատուով վերադարձրեց տիրոջը, չնայելով երեկ էր, որ այդ նոյն Շապուհ լկելուց յետոյ ցից էր հանել թագուհի Փառանձեմին։ Շապուհն ինքը գլուխը կորցրել էր, չէր իմանում ինչպէս նկարագրի Մուշեղի՝ «սպիտակ ձիաւորի» քաջութիւնը.

—Ինձ այնպէս էր թւում, թէ բոց է դուրս գալի Մուշեղի մոլեգին գնդից. ինչպէս հրդեհը լափելով անցնում է եղեգնուտի միջով՝ այդպէս էլ մեր զօրքերի միջով գալիս, անցնում էին նրա զօրքերը,—այսպէս էր պատմում Շապուհ իւր մերձաւորներին։ Մուշեղ 600 նշանաւոր պարսիկ միանգամից մորթեցրեց արաւ ու մորթիները խոտով լցրեց։ Աղուանից Ուռնայր թագաւորին, որ պարսիկների կողմն էր անցել, հարուածելով հալածեց և չսպանեց միայն նրա համար, որ օծած թագաւոր էր։ Պարսիկները տեսնելով որ այս անգամ հայերի հետ են յոյները, դադարեցրին իրենց յարձակումները. այդ ժամանակ Մուշեղ իւր ուշքը դարձրեց երկրի ներքին թշնամիների վրայ։

Մի կողմը Արածանու և արևելեան Տիգրիսի ակունքները, մի կողմը Ճորոխ ու Քուռ գետի հովիտները՝ շրջելով ամբողջ Հայաստան, Մուշեղ անողոք խստութեամբ պատժեց ազգային թշնամիներին։ Առանձնապէս խիստ վարուեց Վրաստանի, Աղուանից աշխարհի, Արցախի, Գուգարաց բդեշխութեան, Աղձնեաց և Ծովաց աշխարհների հետ։ Վրաց Փառնաւազ թագաւորին դաւաճանութեան համար հրապարակում խաչեց. առհասարակ, Մուշեղ այնպիսի սարսափ գցեց անհարազատների սիրտը, որ առժամանակ անհետացաւ դաւաճանութիւնը, խաղաղուեց երկիրը։

Չնայելով Մուշեղի անգին ծառայութիւններին, կային, սակայն, քսու, նախանձոտ մարդիկ, որոնք աշխատում էին խախտել Պապի հաւատը Մուշեղի վերաբերութեամբ։ Բամբասանքի նիւթ էին շինել այն հանգամանքը, թէ Մուշեղ Ուռնայրին բաց թողնելով ու Շապուհի հարեմն իրեն վերադարձնելով՝ կամեցել է միայն սև օրուայ համար բարեկամներ ճա-

րել, և եթէ մէջ տեղ Ներսէս Մեծը չլինէր,—Պապն անշուշտ ապերախտութեան օրինակ էր թողնելու պատմութեան մէջ։

Զտիւ եւ զգիշեր կայր յաշխատութեան, ասում է Փաւստոս, եւ ոչ թողոյր ընաւ ամենեւին եւ ոչ քան զկորի մի զետին ի սահմանաց երկրին հայոց ուրեք վտարել։ Այսինքն գիշեր, ցերեկ հսկում էր և չէր թոյլ տալի, որ Հայաստանի հողից մի ծիր խառնուի Թշնամու հողին։ Ահա թէ ինչ տեսակ մարդ էր Մուշեղ սպարապետը։

Սակայն շուտով իրար ետեւից Հայաստանում տեղի են ունենում դժբաղդ պատմական դէպքեր, որոնք Մուշեղի զգայուն սրտի վրայ ճնշող ազդեցութիւն են թողնում։ Պապը թունաւորում է Ներսէս Մեծին, յետոյ իրեն էլ յոյն զօրավարներն են սպանում Բիւզանդիոնի թելադրութեամբ, որովհետև Պապն ինքնուրոյնութեան էր ձգտում։ Ներսէսի մահը մանաւանդ միանգամայն կոտրում է Մուշեղի սիրտը։

—Աստուծոյ սուրբի արիւնը զուր տեղից թափուեց. սրանից յետոյ այլևս սիրտ չեմ անելու Թշնամու վրայ գնալ, ուր ճնաց նետ արձակեմ. հաւատացած եմ, որ Աստուած երեսը դարձրել է մեզանից,—ասում էր Մուշեղ վշտագին սրտով։ Շատ չանցաւ, հայոց աշխարհում քաղաքական հանգամանքների դասաւորութիւնը ոչ միայն դառնացրեց հայրենիքի մեծ ծառայի օրերը, այլև անարգ մահ պատրաստեց նրա համար՝ ապերախտութեան անօրինակ յիշատակ թողնելով ազգիս պատմութեան մէջ։ Պապի յաջորդ Վարազդատի շրջապատողները, օգտուելով երիտասարդ թագաւորի անփորձութիւնից ու կամքի թուլութիւնից՝ խաղալիք դարձրին նրան իրենց ձեռին և սկսեցին կասկածանքի սերմեր գցել սիրտը Մուշեղի վերաբերութեամբ։ Հաւատացրին Վարազդատին, թէ Մուշեղը Արշակունիների Թշնամի է. ապացոյց, Շապուհի հարեմի վերադարձնելը, Ուռնայրին ազատելը և թէ նոյն իսկ Պապի սպանման մէջ խառն է Մուշեղի մատը։ Վարազդատին դլխահան անողն էր աւելի իւր դայեակ Բաղը, որն սպարապետութեան պաշտօնի վրայ աչք ունէր։

Վարազդատ, վճռեց, վերջապէս, վերջ դնել Մուշեղ սպարապետի կեանքին. այդ նպատակով մի մեծ հրաւէրք սարքեց և հրաւիրեց նրան։ Սպարապետն առանց կասկածելու ընդունեց այդ հրաւէրը։ Քէֆի թունդ ժամանակը դաւադիրները, թուով 12, թափուեցին հայոց սպարապետի վրայ և սպանեցին։ Բաղի կարգադրութեամբ, Մուշեղի գլուխը կտրած, մարմնի հետ տարան նրա ծննդավայրը՝ յանձնելու նրա ընտանիքին։ Սպարա-

պետի ամուսինը իւր որդոց և ազգականների հետ չէին հաւատում իրենց աչքին՝ չէին կարողանում հաշտուել այն մտքի հետ՝ թէ իրաւ սպանած է Մուշեղ, այնքան մեծ էր Մուշեղի հեղինակութիւնը, այնքան անմահ էր թւում նա. այդ պատճառով, գլուխը տեղը սաղացնելով, Մուշեղի մարմինը դրին տանկտերը, որ յարալէզները գան, լիզելով կենդանացնեն նրան...

Այսպիսի մահ ընդունեց նա, որ Հայաստանն ազատեց իւր կործանումից...

IV

Մուշեղի մահուան տարին (հաւանօրէն 373) նրա երկու Մանուէլ և Կոմս եղբայրները պարսիկ զօրքերի շարքում կռւում էին Պարսկաստանի թշնամիների դէմ. պարսկական զօրքերի պարտութիւնից յետոյ երկու եղբայրն էլ փախստեայ վերադարձան հայրենիք։ Այդ միջոցին Վաղէսի հրամանով հռովմէական զօրքերը քաշուած էին Հայաստանից Գոթերի դէմ պատերազմելու համար, որովհետև գերմանական ազգերի առաջին մեծ շարժման ժամանակներն էր։ Վարազդատ մնացել էր մենակ իւր զօրքերով։ Մանուէլ Մամիկոնեանը, օգտուելով հանգամանքից, վճռեց իւր սիրելի եղբօր վրէժը հանել նրանից։ Մանուէլի ու Վարազդատի մէջ սկսուած կռիւները վերջացան վերջինիս արտաքսումով Հայաստանից (377). այս ընդհարումների մէջ գերուեց Մուշեղին գլխատել տուող Բատը իւր որդկերանցով և անողորմ մահ ընդունեց։

Վարազդատի հեռանալուց յետոյ հայոց երկրի տէրը Մանուէլ սպարապետը դարձաւ, որ, իւր մօտ առնելով հանգուցեալ Պապ թագաւորի ընտանիքը—տիկին Զարմանդուխտին Արշակ ու Վաղարշակ որդիներով, սկսեց մեծ խնամք տանել նրանց վրայ՝ կառավարելով երկիրը որպէս սպարապետ, որպէս խնամակալ արքայական տան։ Հիմնաւոր է թւում մեզ Գարագաշեանի այն կարծիքը, թէ Պարսից արքունիքի մատը խառն էր Վարազդատի արտաքսելու մէջ, այլապէս դժուար է հաշտուել այն մտքի հետ, թէ Մանուէլ սպարապետը մենակ կարող էր սիրտ անել գործել Վարազդատի դէմ, որը կայսերահաստատ էր։ Դրանով պիտի բացատրել և այն երևոյթը, որ, ժամանակակից պատմագիր Փաւստոսի վկայութեամբ, Հայաստան է գալիս Շապուհ II-ի ըրամանով նրա Սուրէն զօրավարը 10,000 զօրքով և թանկագին ընծաներով թագուհու, արքայազների և Մանուէլի համար. ինչու պիտի ընծաներ բերէր Սուրէն, եթէ Մանուէլի սկսած գործը Պարսից արքունիքի սրտովը չլինէր։

Սակայն նոյն պատմագիրը քիչ դէնը վկայում է և այն՝ թէ Մանուէլ հայ զօրքերով ընկաւ Սուրէնի վրայ, ցրեց նրա զօրքը և իրեն փախցրեց Պարսկաստան։ Պատմագիրն ասում է որ Մանուէլին դրդողը Մերուժան Արծրունին է եղել, որը փառքից գցելու համար հաւատացրել է հայոց սպարապետին, թէ Սուրէն հրահանգ ունի արքունիքից բռնելու և շղթայակապ ուղարկելու Պարսկաստան Մանուէլին։

Պատմագրի այդ խօսքերը իրերի իսկական դրութիւնն են նկարում, եթէ աչքի առաջ ունենանք ժամանակակից Պարսից քաղաքականութիւնը, Հայաստանի անորոշ վիճակը և այն անցքերը, որ այդ ժամանակ կատարւում էին արևմուտքում։

Պարսկաստանը չէր կարող մի ութ-ինը տարուայ ընթացքում (368—377), որ Արշակ II-ի գերութեան և Վարազդատի արտաքսման ժամանակամիջոցն է անում, շուտով այդպէս մոռանալ ու ձեռք վերցնել իւր քաղաքականութիւնից Հայաստանի վերաբերութեամբ, քանի որ երկրի թագաւորը նոյն անձն էր դեռ ևս Շապուհ II, Խորենացու «Որմզդեանը»։ Երևի Հայաստանի համար ձեռնտու մի կէտ կար համաձայնութեան մէջ, որ Շապուհ, համաձայն իւր նենգ բնաւորութեան, խախտելով, պատճառ էր դարձել Մանուէլի դէնք վերցնելուն։ Մերուժան Արծրունին է հաղորդել Մանուէլին Սուրէնի մտադրութիւնը, թէ մի ուրիշը,—պատմութեան համար երկրորդական նշանակութիւն ունի, պատմութեան գլխաւոր առարկան ժամանակի ոգին՝ տիրապետող ձգտումներն են և ոչ՝ երկրորդական հանգամանքները։

Սուրէնի փախչելուց յետոյ Մանուէլ սպարապետը մեծ կռուի է բռնւում պարսիկների հետ, այդ պատերազմների մէջ ընկնում է դաւաճան Մերուժան Արծրունին, որին անձամբ սպանելուց յետոյ, Փաւստոսի ասելով, գլուխը ձող հանած, պտտեցնել է տալիս Մանուէլ, որ, իհարկէ, հայրենիքի դէմ այնքան չարիքներ յղացող գլխի վրայ թքեն։

Սակայն՝ անտանելի, անբնական էր Հայաստանի վիճակը. իբրև թոյլ տէրութիւն, չէր կարող քաղաքական ինքնուրոյն կեանք ունենալ երկու հակադիր ոյժերի մէջ— վաղ թէ ուշ, պիտի երկի միաժամանակ և մէկի կամ միւսի բաժին դառնար՝ այդ էր պահանջում իրերի բնական ընթացքը։ Հենց այդ բնական օրէնքի ազդեցութեան տակ էր որ հայոց սպարապետը հիմա էլ յոյսը դրեց հռովմայեցիների վրայ։ Մահուան անկողնում (383), շրջապատուած արքայազուններով, եկեղեցականներով ու նախարարներով՝ սպարապետութիւնը իւր Ար-

տաշիր որդուն յանձնելով՝ խրատեց նրան միամիտ սրտով ծառայի հայրենիքին, Արշակունեաց գահին ու յետոյ պատուիրեց մի թուղթ պատրաստել իւր կողմից Թէոդոս Մեծին, որի խնամքին էր յանձնում Հայաստանը իւր արքայազնի հետ։

Մանուէլ սպարապետը վերջին շնչին լալով դանդատւում էր շրջապատողներին, որ ինքը խաղաղ մահով է մեռնում անկողնում, փոխանակ քաջի պէս ընկնելու ռազմի դաշտում։ Վերջին անգամ արքայազն Արշակին խրատներ տալուց և ուրիշ շատ նիւթերի վրայ խօսելուց յետ հանգչող սպարապետը կտակ արաւ, որ իւր գերեզմանի վրայ, ըստ հեթանոսական սովորութեան, լաց ու կոծ չանեն. սակայն հանգուցեալի կտակը չկարողացան կատարել, և, պատմագրի խօսքերով, «ամենայն մարդ երկրին հայոց կոծ եղեալ, մեծաւ աշխարանօք լային զնա առհասարակ ազատք եւ շինականք»—ամենքն սկսեցին ողբալ սիրելի սպարապետի մահը։

Ա. ԱԳԱՊԵԱՆ

(Վերջը հետևեալ համարում)

# ՆՈՐ ԻՍՐԱՅԵԼԻ ՍԱՂՄՈՍՆԵՐ

## VII

*Եւ ահա զրկուածներու աչքը արտասուք կար և նոքա մխիթարող չունէին։*
*գիրք. Ժ.*

*Զոհերի ձայները լսեցիք ինչ արիք*
*Դուք, մեծաբարբառ աշխարհի որդիք,*
*Երբ մենք մոլորուած, գլխակոր, տրտում*
*Նայում էինք մեր տան սև-մութ պատերուն.—*

—

*Մեր տանն աներդիք-այրուած ու սև տան,*
*Երբ աղջիկներս իրանց ամօթից՝*
*Անկիւններ փախչում՝ խոտ էին ուտում,*
*Ինչպէս անասուն, ինչպէս մի անբան...*

—

*Դուք տեսաք ինչպէս պոկեցին ինձնից*
*Իմ գարուն-արուն աղջկան գոհար*
*Եւ քաշքաշելով տարան իմ տընից*
*Մի կրքոտ, լալիրշ գիշերուան համար...*

—

*Դուք տեսաք մատաղ քսան մէկ տարուան*
*Իմ միակ որդուն պարանով կապած*
*Աչքի առաջև ծեծելով տարան*
*Ուր տարան չգիտեմ—գիտէ մէկ Աստուած...*

—

*Չկայ իմ որդին-կենդանի թաղուած.*
*Իսկ իմ հօրական փառաւոր տունը*
*Փլուած, քայքայուած—հողին հաւասար.*
*Հաւքը բուն ունի—չկայ իմ բունը...*

Երբ չհաւատացին աշխարհի վրայ—
Ասացին կրակը մեռել է ձեր մէջ,
Մարկութիւնից—ձեր մէջ սէր չկայ,
Երբ հաւատացինք՝ մեր սէրը պակսեց,—

—

Եւ ծով կեանքի մէջ—մարդու զարմն ուժեղ
Հին-հին դարերի՝ տեղ չունի հիմայ
Նստի շունչ քաշէ,—հիմայ հացի տեղ
Այս լի աշխարհում խոտ է ուտում նա...

—

Դուք որ չէք տեսել—լսել էք միայն
Հանգիստ էք—հէքիաթ թւում է այդ ձեզ,
Ապա մէկ անգամ լսեցէք հրացան
Եւ արեան գետեր շրջապատեն ձեզ...

## VIII

Եւ արևի տակ տեսայ, որ դատաստանի տեղ
ամբարշտութիւն կար և արդարութեան
տեղ անօրէնութիւն... գիրք Ժ.

—Անցորդ, կանգնիր—այդ քա՞ր է թէ՞ լեռ,
Թէ՞ կարավանէ—շարքերով մեծ բեռ
Ճանապարհի մօտ, թափուած անխնամ—
Մօտեցիր, մօտեցիր, տես շէ՞նք է փարթամ...—
«Սպասիր, բարեկամ, շէնք չէ նիւթեղէն,
Մարդ է, չի շնչում, մարդ է հողեղէն.
Անպէտք է դարձել—միս ու պինդ ոսկոր.
Միսը կը գնայ որթերի որկոր—
Ոսկորը կը մնայ—շուտով չի փթիլ
Մինչև նոր կեանքով վերածուի երկիր...
Նոցա, այդ մարդկանց, որ թափել են վար
Մորթել են ինչպէս մի խոզ կամ ոչխար
Եւ այստեղ դիզել. միսը չի ուտում,
Որ միսն ուտէին, այլ գազաններին
Գիշատող թռչնոց թողել են բաժին...
Այնտեղ ծնւում է՝ ծէսով սրբասան
Կնքում են մանկան, որ եկաւ աշխար,
Այստեղ մորթում են, որպէս՞ անասուն
Եւ չունի վերան գերեզմանաքար...

Ո՞վ գիտէ հիմայ փնտրում է որդուն
Հայրը սրտացաւ—վշտալի հայրը
Կամ դստեր համար խելառ է մայրը.
Ո՞վ գիտէ վաղը այս դէղն յետ տալով,
Լացի, կականի տխուր երգերով՝
Կրծեծուի, կ'ողբայ իրան փեսային
Մատաղահարսը— իսկ սիրող մի կին
Սիրած դիու մօտ կը բանայ նոր շիրիմ...
Այդպէս, յայտնի չէ, դու կաս, կլինիս,
Կամ ի՞նչ կլինիս, եթէ դու լինիս...
Եւ այդ մարդու հետ, մարդու ոչ խոզի.
Անասուն ու բոյս տէր են բնութեան
Իրաւունք ունին—մարդն իրաւացի
Զուտի իրաւունք կեանքի, գոյութեան
Եւ պաշտպանութեան... կը հասնի՞ մէկ օր—
Վիթխարի դէզեր լեռ—դիակների—
Գլուխ կը բառնան իբրև լիազօր
Եւ ամէն մէկը այդ մարդ—արմատից
Ահեղ դատի մէջ՝ Աստծոյ առաջ
Իրաւունքները իր բռնաբարուած
Պիտի թախանձէ—պահանջէ պատիժ...
Ո՛, մարդ, սոսկացի՛ր, այդ ցասման օրից.
Այդ բիւր—բիւրաւոր սառն գլուխներից,
Որ պիտի բանան իրանց աչքերը—
Աչքերը պաղած—խոր—խոր փորփորուած,—
Իրանց շրթունքները—կտրուած, սղոցած.
Իրանց ականջները աքցանով պոկուած,
Իրանց գանգն, ուղեղ մուրճով ջախջախուած,
Ոտքերն ու ձեռքեր մամլի տակ դրուած—
Եւ զարկուած ճնշուած կուրծքերն ու մարմին—
Պիտի բանան, պիտի բողոքեն միասին—
Ո՛, մարդ, սոսկացի՛ր, խեղդուի՛ր ու լաց,
Աղճիդ,—վեհ, արդար դատաստանի առաջ...

## IX

Ահա՝ ես ձեր առաջ եմ դնում կեանքի
ճանապարհը և մահուան ճանապարհը
(Երեմ.)

Եւ կո՛չ եմ կարդում—կոչս սրտագին,

Քեզ կոչ եմ կարդում հայոց ժողովուրդ.
Մահի, սարսափի հագուստ քո հագին
Դու զրկուած, զարկուած, դու զիլ ջարդուբուրդ
Դու ահը սիրտդ հեռու ես փախչում,
Օտար երկիրներ, վայրեր հեռաւոր,
Քո բունդ թողած օտար ծոց թագչում—
Դու, մեծ հայրերի սերունդ փառաւոր.

—

Եւ ո՞ւմ ես թողնում Ազատն—Մասիս
Արագած լեռդ, Սիւնիքն ու Սասուն,
Սուրբ Էջմիածին, Մայր—Արաքսն ու Սիս
Ա՜խ, ո՞ւր ես թողնում, դու ո՞ւմ ես թողնում...
Եւ օտար ափեր, տարօրէն ափեր
Հայրենի հողէդ տարուում ես հողմով,
Իմ, մեծ ժողովուրդ, այնտեղ դու անտէր
Աշխարհի ծովում կը կլուիս ուժով...

—

Ո՛, արի, դու եկ, կպիր քո բնիդ,
Հարազատ հողիդ սրտին դու կպիր,
Տուն բեր քո որդոց, ուժ տուր քո շէնիդ,
Օջախդ վառէ, օջախիդ, հպուիր...

—

Եւ կո՞չ եմ կարդում, և կո՞չ եմ կարդում,
Քեզ կոչ եմ կարդում, ժողովուրդ հայոց,
Դու կանգնիր կանգուն, դու եկիր արթուն
Եւ սրտիդ սեղմէ քո հին օրորոց։

ՅՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆ

# ՍՈՒԼԹԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

## Ա

189* թուի օգոստոս ամսի չեմ յիշում քանիսն էր։

Տաճկահայաստանի X քաղաքում մունետիկները, նահանգապետ փաշայի հրամանով, ազդարարեցին ամբողջ ազգաբնակութեանը, որ այդօր օգոստափառ Սուլթան Աբդ-իւլ Համիդ Բ.-ի գահակալութեան ...երորդ տարեդարձն է։ —Ուստի այսօր երեկոյեան—աղաղակում էին մունետիկները,—մինչև ուշ գիշեր, պէտք է բաց թողնել խանութները և այնտեղ ներկայ գտնուել անպայմանն։ Իւրաքանչիւր ոք պէտք է ուրախ լինի՝ երգէ, կանչէ, խաղայ-խնդայ (թէև խաղալու և խնդալու տրամադրութիւն չունենայ էլ երբէք), ուտէ-խմէ և... վեհափառ փադիշահին անվերջ ու երջանիկ օրեր մաղթէ Ալլահից։ Միով բանիւ, տեսնուրեք ցնծութիւն և սալթանաթ պիտի թագաւորէ։

—Ընդ դժին յայտարարում ենք ի գիտութիւն ընդհանուրի—աւելացնում էին նրանք,—որ թէ տների առջև, թէ փողոցներում, թէ շուկայում և առհասարակ ամեն տեղ պէտք է աւլել, մաքրել, ջուր սրսկել... այնպէս որ աղբի մի հիւլէ անգամ նշմարուելու չէ քաղաքումը։ Տէր մի արասցէ, եթէ այդ ազդարարութիւնների հակառակ վարուող մէկը նկատուի,—այդպիսին կենթարկուի 5 մէջիդիէից (մօտ 8 ռուբլի) մինչև 10 Օսմանեան լիրա տուգանքի կամ 1—10 ամիս բանտարկութեան... եւ այլն եւ այլն։

Այդ պատճառով էլ ամեն ոք պատրաստում էր ըստ պատշաճի մասնակցելու պետական հանդիսին և կամ... օրինաւոր տուգանքին։

## Բ

Թիւրք աւելածուները մեծ դեղի նման վխտում էին X-ի ոլոր մոլոր փողոցներում. վեհապետի գահակալութեան տարեդարձը

մի հազուադէպ առիթ էր նրանց համար, որին սպասում էին նրանք ամիսներից ի վեր։

Ցանկարծ, որտեղից որ է, մի քանի Արաբկերցի, Ակնցի և Բալուցի պանդուխտ հայեր իրենց գլխից բարձր երազ տեսան—ուզեցին առթից օգտուել և աւելածութեամբ մի քանի դահեկան ձեռք բերել, բայց երազը սուտ դուրս եկաւ, որովհետև այդօր լուսնի 4—7—20—27-ն էր՞։

Մի ծիծաղիք ինձ վրայ, պարոններ. մեղաւորը ոչ ես եմ և ոչ էլ էֆիմերտէն.—յանցանքն իսկապէս լուսնինն էր, որը սուլթան Վիլհէլմից դաս առած լինելով և կամենալով մի կերպ հաճոյանալ նորին մեծութիւն վեհ. Համիդին՝ այդ օր հակառակ էր գնում բնութեան օրէնքին։

Ինչևիցէ։ Գերբնական մի հրաշք արդելք հանդիսացաւ քրիստոնեայ աւելածուների ծրագրի իրագործման։ Հիասթափութի՞ւն...

Եւ որովհետև այդ հրաշքը մեր նկարագրած հանդէսի հետ սերտ կապ ունի, ուստի թող ընթերցողը ծանօթանայ թիւրքական անմահ ստեղծագործութիւններից մէկի հետ։

Հայ աւելածուների մաքրած տեղերը քիչ ժամանակից յետոյ առաջուանից աւելի անմաքրութեամբ էին լցուում, ուստի և նոքա ստիպւում էին միևնոյն տեղը կրկին և կրկին մաքրելու։ Մինչդեռ միւսլիմանների մաքրուած տեղերը փայլում էին իրենց թէմիզութեամբ։

Բանից դուրս էր գալիս, որ ոստիկանապետ Օսման-աղայի խորամանկ կարգադրութեամբ, մի քանի ճարպիկ թիւրքեր զգուշութեամբ ման էին գալիս փողոցները և ուր որ հարկն էր՝ ածում էին մոխրախառն աղբ և սատկած կենդանիների մարմնի կտորտանք, որոնցով այնքան հարուստ է տաճիկը...

Այդ կարգադրութիւնն անելիս Օսման-աղան աչքի առաջ ունէր երեք գլխաւոր նպատակ, որոնք, ինչպէս յետոյ կըտեսնենք, մէկը միւսից աւելի կարևոր էին և շահեկան մի քանի տեսակէտից...

Ասենք, Օսման-աղան գիտէր, որ իրենից աւելի բարձրատիճան պաշտօնեաներ հարամ կանէին իւր գլխին՝ ապականութեան միջոցով ձեռք բերուող պատառները, բայց ով չը գիտէ, որ «տկից մեղր հանողը մատները կը լիզէ»։

Գ

Կէս-օրից յետոյ կառավարչական չինութեան առջև քաշուե-

ցին մի շարք պարաններ, որոնց ծայրերը ամրացնում էին շինութեանց ցուիքներին. պարաններին վրայ շարեշար կախեցին զոյնզգոյն ապակիներից ու թղթից շինած մոմակալ լապտերներ։ Կառ. շինութեան ճակատին ոսկեգոյն տառերով դրոշմուած էին հետևեալ բառերը. «Փաղիշահըմ չօք եաշա»—կեցցէ փատիշահը։

Ոստիկանների, ոստիկանապետների, յանձնակատարների (կոմիսար) ու այլ բարձրաստիճան պաշտօնեաների մի մեծ խումբ, զուգուած զարդարուած, ճեմում էին կառ. շինութեան առջև և նորանոր ծրագիրներ կազմում, որպէսզի որքան կարելի էր, որքան կներէր չափ ու սահման չընճանաչող շռայլութիւնը,—գիշերուան հանդէսը փառայեղ լինէր, որ տեսնողն էլ իմանար՝ ինչ է նշանակում «Սալթանաթը Ա'լի Օսման»։

Աժենայետին պաշտօնեան անգամ, մի առանձին ոգևորութեամբ աշխատում էր մի քանի լիրա ծախսի դուռ բանալու, սակայն, իհարկէ, առանց մի բոպէ մտածելու, որ այդ շռայլուած փողերը դուրս կըգային թշուառ ժողովրդի գրպանից...

Պէտք է ասել, որ Թիւրքիայում առհասարակ պետական հանդէսների համար եղած առասպելական ծախսերը կառավարութիւնը դուրս է բերում ժողովրդից զանազան, ուղղակի և անուղղակի միջոցներով։ Միջոցնե՞ր, որոնց ստեղծելումը Թիւրք կառավարութեան պաշտօնեաները մասնագէտ—էլֆէտօնները են. միջոցնե՞ր, ասում եմ, որոնց առջև ոտքից-գլուխ կըկարմրէր եթէ մարդասպանի տեղ մի ուրիշը լինէր։

Մեծ պողոտայի վրայ հազար ու մի տեսակ հրանիւթեր էին պատրաստուած և պատրոյգներ դրած, սպասում էին երեկոյեան հանդէսին։ Իսկ քաղաքի հարաւ-արևելեան կողմը, հայ-ասորիների թաղին մօտիկ, հայկական կիսաւեր միջնաբերդի վրայ մի քանի հասարակ թնդանօթներ լարուեցան, որոնց առաջին բոմբիւնը կաւետէր հանդէսի սկիզբը և այնուհետև կարգելուէր ֆիզիքական աշխատանքը։

Բացի զինուորական երաժշտական խմբից կառավարութիւն հրաւիրուեցան և բազմաթիւ ժողովրդական երգիչներ, նուագածուներ և ծաղրածուներ, որոնք զուարճացնելու էին վսեմաշուք էֆէնդիներին։

Թէ միջնաբերդի և թէ տների կտրների վրայ արդէն ծածանուում էին օսմ. դրօշակները։ Իսկ մզկիթների բարձրաբերձ աշտարակների վերին մասերում դրուում էին հարիւրաւոր կանթեղներ, որոնցից ծլծլացող զոյնզգոյն լոյսը, իրաւ որ, գիշերային մթութեան մէջ հրաշալի տեսարան է ներկայաց-

նում, կարծես մթնոլորտում կախուած շառայլոտ մոլորակներ են։

Ամեն կողմից ուրախութեան ու ցնծութեան ձայներ էին լսւում. մարդիկ անհամբերութեամբ սպասում էին՝ նմանը չտեսնուած հանդէսի սկսուելուն։

Դ

Որպէս հայաշատ քաղաք, հետաքրքիր էր X-ի հայերի դիրքը մանաւանդ, ուստի և շտապում եմ մի փոքր գաղափար տալ ընթերցողին։

Քաղաքի «Սուրբ Յակոբեան» հայաբնակ քաղաքամասումն էր ամերիկացի միսիոնարների հռչակաւոր Ա. Կոլլէժը, որի շուրջը գտնւում են միսիոնարների հոյակապ ապարանքներն ու հայ-բողոքականների ժողովարանը։

Կոլլէժի բարձրադիր, խիստ գեղեցիկ պարտիզում այդօր պատրաստուել էր մեծածախս լուսավառութիւն։ Այդ սքանչելի պարտէզը, որ ոչ-ասիական արուեստի և ասիական բնութեան շնորհիւ դառել էր մի դրախտ,—այդտեղ և Կոլլէժի ու ժողովարանի ընդարձակ դահլիճներում հաւաքուելու էին, անխտիր ամեն սեռից ու դաւանանքից, մեծ բազմութիւն հանդիսականների։ Որովհետև ճառեր էին կարդացուելու, երգեր էին երգուելու և այլն և այլն։

Ս. Ս. Ստեփանոսի, Յակոբայ, Կարապետի և Նշանի եկեղեցիներին կից շինած Հայ-լուսաւորչական ծխական դրպրոցներում ևս մեծ պատրաստութիւններ էին տեսնում՝ հանդէսը ըստ կարելւոյն շքեղ անելու համար. ծաղկեայ պսակներով զարդարում «Կեցցէ վեհ սուլթան Աբդիւլ Համիտ խան» դրուագի շուրջը։

Հայ-կաթոլիկների գերապայծառի վեհարանում և Հայասորիների ս. Աստուածամայր հռչակաւոր ուխտատեղու գաւթում նոյնպէս, ի պատիւ օսմ. վեհապետին, հանդէսներ էին սարքւում...

Այդպէս ուրեմն, X քաղաքում ընդհանուր հայութիւնն առանց դաւանանքի խտրութեան, առանձին ոգևորութեամբ ու անկեղծութեամբ է մասնակցում այդ տօնին։ Բոլոր հայերի կրպակներում, շուկայում, պանդոկներում և տներում՝ մոմեր, ճրագներ, գոյնզգոյն լապտերներ, ակնախտիղ լամպեր են դրւում կազմ և պատրաստ։

Ե

Ըստ տաճկ. երեկոյեան 12 ժամն է (եր. 6 ժ.)։

Երբ մուէզինները մինարէթների բարձունքներից սկսեցին երեկոյեան աղօթքի հրաւէրը, իսկոյն որոտացին բերդի վրայ դրուած թնդանօթները, որից անմիջապէս յետոյ ամբողջ Թիւրքիան, ախ ոչ, ամբողջ քաղաքը լուսաւորուեց և ամեն կողմից լսելի եղան ուրախութեան և փառաբանութեան ձայներ։

Անհամար բերաններ, որը սրտանց՝ որն էլ հարկից ստիպեալ, երկար օրեր էին մաղթում օսմ. վեհ. սուլթանին։

Իհարկէ, կային շատերը, ինչպէս իմ հայրենակից բալուցիները, որոնք թուրքերէն լեզուի առոգանութեանը լաւ վարժ չլինելով՝ մեղանչում էին լեզուական ուղղութեան դէմ։ Այսպէս օրինակ.

Փոխանակ ասելու «Ալլահ պիր կիւնի պին էյլէսին» ասում էին «Ալլահ պին կիւնի պի՛ր էյլէսին»։ Կամ փոխանակ «Գըլըճընը քէսկին էյլէսին» ասելու՝ «Գըլըգիընը գետին էյլէսին» էին ասում։ Կային այնպիսիներ էլ, որոնք հայերէնում էին շփոթում և փոխանակ գոչելու «Կեցցէ՛, կեցցէ՛»— «Ցեց է, ցեց է» էին բացականչում։

Բայց մեր ինչի՞ն են պէտք այդ աննրդաշնակ և «անախորժ» ձայները. աւելի լաւ է՝ գնանք մի փոքր լսելու զինուորական երաժիշտների նուագած հիանալի «Համիդիյէ» չունուագը, որն, անկեղծ խօսելով, արևելեան երաժշտութեան ժամանակակից դշխոյն է։

—Զգո՛յշ, մեր տղայ, եթէ ականջներիդ դէմ ոխ չունիս, ապահեռուն անցիր, որովհետև, ինչպէս Թիւրքիայի ամեն բանը, այդպէս և սա, այս տեսարանը, ապշեցնելու աստիճան տարօրինակ է... Դու եկար «Համիդիյէ» մարշը լսելու, բայց ահա մի քանի տասնեակ դավուլ-զուռնաներ, հարիւրաւոր ջութակներ, քանոններ, կլառնէտներ, տաւիղներ, ծնծղաներ, դափեր, դուդուկներ... ներ... ներ,—ասիացու ճաշակով խիստ ներդաշնակ, բայց ոչ-ասիացուն բաբելոնեան խառնակութիւնն յիշեցնող աղմուկներով օդն են լցնում...

Իսկ, ասացէք խնդրեմ, մեզանից ո՞վ կարող է այնքան անխոհեմ լինել, որ համարձակուի Օսմանցուի երկրում ոչ-ասիական ճաշակ ունենալ...

## Զ.

X-ի նահանգապետ փաշան, որը, կարծեմ, յետոյ ընդհանուր նահանգապետ նշանակուեց Տաճկահայաստանի արևելեան նահանգներից մէկի վրայ և որը «լաւ ու նոր» մարդու համբաւ ունէր,—սա և կառավարութեան միւս բարձրաստիճան պաշտօնեաները այցելեցին Հայ-լուսաւորչականաց կենդրոնական դպրոցը, որտեղ և նրանք ընդունուեցին մեծ շքով։ Այստեղ ներկայացան նրանց հայ հոգևորականութեան և հասարակութեան ներկայացուցիչները։ Իսկ ուսուցչական մարմնի կողմից մատուցուեցին բարձր հիւրերին օշարակ և զանազան քաղցր ըմպելիք...

Շատ ուրախ եմ—ասաց նահանգապետ փաշան «անուշն» ընդունելուց յետոյ ոտի ելնելով,—որ մեր օգոստափառ կայսեր հայրական խնամքին ու բարձր շնորհներին արժանանալու աստիճան օրինակելի ընթացք է բռնել Հայ ժողովուրդը... Ներկայ և նման յաճախադէպ ցոյցերը մի մեծ ու պատկառելի գրաւական են Հայ ազգի ամենահաւատարիմ հպատակութեան, որին իտրիտուր այդ ազնիւ ազգը վայելում է մեր վեհապետի գթութիւնն ու ողորմածութիւնը։

Ուսուցչապետը պատշաճ խօսքերով պատասխանեց նահ. փաշայի այդ խօսքերին, որից յետոյ երկսեռ երգեցիկ խումբը որոտընդոստ ձայնով երգեց օսմ. հիմներգը։

Նահ. փաշան ու հետիները ուրախ տրամադրութեան ներքոյ հեռացան, հիացած հանդէսի փառահեղութեան վրայ...

## Է

Նահ. փաշան իւր շքախմբով այցելեց և՛ Ա. Կոլլէժը, որտեղի լուսաւորութիւնը, հրախաղութիւնը և ժողովրդի հոծ բազմութիւնն ապշեցրին ամենքին։ Կոլլէժի կամարակապ կաթուղիկէ դռան առջև ընդունեցին բարձր հիւրերին՝ միսիոնարները, միսիոնարուհիները և Կոլլէժի հայազգի ուսուցչական խումբը և առաջնորդեցին նրանց դէպի Կոլլէժի հոյակապ դահլիճը, որտեղ խռնուած հասարակութիւնը պատշաճ բացականչութիւններով ընդունեցին վսեմաշուք հիւրերին։ Անկեղծութիւն և ցնծութիւն էր թագաւորում ամենքի դէմքի վրայ։ Այդտեղ ներկայ էին և մի քանի եւրոպական պետութեանց ներկայացուցիչներ (հիւպատոսներ)։

Երբ բարձր հիւրերն անցան իրենց յատկացրած տեղերը,

միսիոնարներից մինը թիւրքերէն լեզուով մի ճառ խօսեց, որում իմիջի այլոց յիշելով «քիչ ժամանակ առաջ Բիթլիսի նահանգում տեղի ունեցած սրտաճմլիկ անցքերը *)... մեզ թոյլ կտանք յուսալու,—աւելացրեց նա մէկին շեշտերով,—որ նորին կայսերական վեհափառութիւնը կըզսպէ Անատոլիայի վայրենաբարոյ ցեղերին և իւր քրիստոնեայ հպատակների մէջ կը վերահաստատէ ցանկալի անդորրութիւն...

Յարգելի ճառախօսը դիտմամբ շեշտում էր վերոյգրեալ բառերը և աչքի տակով նայում նահ. փաշային, որի ուշքն ու միտքը, սակայն, հանդիսատես կանանց և օրիորդաց կողմը լինելով՝ ոչինչ չէր հասկացել միսիոնարի խօսքերից։ Երբ վերջինս լռեց, այդ ժամանակ միայն նորին պայծառափայլութիւնը գլխի երերմամբ հաւանութեան նշան տուեց, իբր թէ գոհ էր մնացել նրա արտասանած ճառից։

Ես, որ ականատես էի այդ հետաքրքիր կատակերգութեան, կարող եմ երդուել, որ նահ. փաշան այնքան բան լսեց և այնքան բան հասկացաւ միսիոնարի ճառից, որքան անմահ Աբիսողոմ աղան—Մանուկ աղայի պատմութիւնից **). ինչ-եւիցէ։

Միսիոնարը վիրաւորուեց փաշայի այդ անվայել վարմունքից. մի քանի երիտասարդ հանդիսականներ էլ չափազանց վրդովուած՝ դուրս գնացին դահլիճից...

Բանը նրանումն էր, որ նահ. փաշան հրապուրուել էր մի չքնաղ հայ գեղեցկուհու տեսքով և ինքնիրան տուել Ամուրի օրհնաբանութեան...

Տարակոյս չ'կայ, որ պետութեանց ներկայացուցիչների ուշադրութիւնից չէր կարող վրիպել մի այդպիսի սոլիկութիւն. և խեղճերը զարմացած՝ նայում էին միմեանց...

## Ը

Ճառախօս միսիոնարից յետոյ ոտքի ելաւ Կոլլէժի հայազգի պրոֆէսորներից մէկը և ուզում էր կարդալ իւր պատրաստած մի ճառը որի «անհամակրելի» բովանդակութեանը ծանօթ լինելով մի խումբ հնչակեան երիտասարդներ՝ խնդրեցին պրոֆէսորից որ չկարդայ, յայտնելով միաժամանակ, որ հակառակ դէպքում եթէ պրոֆէսորն յամառի իւր որոշման մէջ, կարող են անախորժութիւններ ծագել։

---

*) Ակնարկում էր Սասունի կոտորածը։

**) «Մեծապատիւ մուրացկաններ» Յ. Պարոնեանի։

Աւելորդ է ասելն անգամ, որ նահ. փաշան ուշադրութիւն չէր դարձնում այդ դալմաղալի վրայ, որովհետև նա բոլորովին ուրիշ բանով էր զբաղուած։

Միւս կողմից, երիտասարդութիւնը երբէք դէմ չէր հիմներգը երգելուն։

—Միայն թէ՝ չկարդացուին այնպիսի ճառեր, չըլինեն այնպիսի ատենաբանութիւններ, որոնք կըհակասեն մեր իսկական տրամադրութեանը...

—Մեր լեզուն թող բարբառէ այն—ասաց Հնչակեաններից մինը—, ինչ որ անկեղծ, անխարդախ է, ինչ որ կըթելադրէ մեր հոգին, ինչ որ համապատասխան է մեր ժողովրդի հոգեկան զգացմունքներին... այլապէս մենք մեր ատելիի առջև շինծու երկրպագուի դեր կը խաղանք, մի բան, որը առնուազն անազնուութիւն է... կրաւորական եղանակով արտայայտուած հաւատարմութեան զգացմունքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ օյինբազութիւններ, որոնցով ոչ դէմինին կարող էք շոյած լինել և ոչ էլ ձեզ որևէ ծառայութիւն մատուցանել....

Պրոֆէսորը, սակայն, այնուամենայնիւ մնաց իւր յամառութեան մէջ և սկսեց կարդալ կռուախնձոր ճառը։

Բայց երիտասարդութեանն յաջողուեց շուացնելով խանգարել ճառի ընթերցումը։ Խնդիրն հետզհետէ սուր կերպարանք էր ստանում և փաշայի ուշադրութիւնը գրաւում...

Մինչև այդ բոպէն լռող միսիոնարներն ու միսիոնարուհիներն էլ հակուեցին դէպի երիտասարդութիւնը և միաբերան պահանջեցին, որ վերջ դրուի միջադէպին...

Թ

Այդ խայտառակ գրութեան վերջ դնելու համար, գլխաւոր միսիոնարի համաձայնութեամբ, ոտքի ելաւ մի պերճախօս երիտասարդ և սկսեց խօսել ժողովրդի սրտին մօտիկ ուղղութեամբ։

—Ծովն ընկնողը անձրևից չիվախենալ—ահա ինչ կարելի էր եզրակացնել նրա խօսքերից։ Իվերջոյ նա մի անհնկատելի ոստիւնով ակնարկ գցեց մի քանի նշանաւոր գործիչների վրայ և կանգ առաւ Միքայէլ Նալբանդեանի «Ազատ Աստուած» երգի առջև։

Յանկարծ երկու սեռի հարիւրաւոր երիտասարդներ, ժողովրդի սրտայոյզ ձայնակցութեամբ, թնդացրին հոյակապ դահլիճը.

«Ազատն Աստուած այն օրից»...

Ոհ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կսպասէ.
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է...

Այդ տողերն երգելիս ամբողջ ժողովուրդը, կարծես մի գերզգայական ուժից մղուած, մոնչաց խուլ կերպով և փոթորկալից ծովի նման ալեկոծուեց։ Նոցա արիւնակալած կրծքերից ինքնաբերաբար դուրս թռչող «ախ»-երին յաջորդեց «Ազատութիւն» ելեքտրականացնող կանչը...

Ահա այդ միջոցին միայն սթափուեց փաշան և կէս-զարմացած, կէս-զարհուրած նայեց հանդիսականներին, որոնց դէմքերի վրայ դրոշմուած էին սրտատոչոր հեծեծանքներ և բուռն, արդար զայրոյթի նշաններ...

Եւ նա, փաշան, գլխակոր ու ամօթահար դուրս գնաց դահլիճից իւր շքախմբով։ Զգում էր արդեօք, որ իւր խենթչական վարմունքն էր այդ ամենի պատճառը..

Նրա մեկնելուց յետոյ կրկին թնդաց դահլիճը, այս անգամ երգում էին մեր անզուգական բանաստեղծ Գամառ-Քաթիպայի «Պզտիկ տղայ» երգը։

Զար Սուլթանի գահը ոսկի
Թող փշրուի, վար ընկնի.
Գահի տակէն Հայոց ազգին
Ազատութիւն թող ծագի...

Մինչև այդօր X-ցին հազար անգամ լսել և երգել էր այդ տողերը, բայց և ոչ մի անգամ չէր ստացել այօրուայ տպաւորութիւնը, որովհետև ուրիշ շատ անգամներ երգել էր՝ միայն երգած լինելու համար, մինչդեռ այժմ երգում էր... որովհետև կարիք էր զգում։

Ժ

Մինչ Կոլլէժի դահլիճում այդ անցքն էր տեղի ունենում, քաղաքի մի այլ մասում աւելի հետաքրքիր բաներ էին կատարուում։ Մենք մեր ընթերցողին կը տանենք այնտեղ։

Կոմիսարը, ոստիկանապետը, երկու ուրիշ պաշտօնեաներ և մի քանի ոստիկաններ վառած լապտերներով շրջում էին շուկան ու փողոցները և արձանագրում էին անմաքուր տեղերն ու փակ խանութները։

«Քաղցած շները ոսկոր էին փնտռում»։

Օսման-աղան սրել էր մանգաղը. հունձքը, բարերաղդաբար, առատ էր։

Մուսիլմանների խանութները, տների առջև և փողոցները կամ երբէք չէին նայում և կամ լուութեամբ էին անցկենում այդ տեղերից։

— Էֆէնտիներ—ասում էր Օսման-աղան ցոյց տալով մի հայի տան առջև լցուած անմաքրութիւնները,— տեսէք ահա, Արմենակ-օղլիի *) տունն է սա, որի առջև ընկած են մի կատուի գլուխ, մի շան պոչ և երկու ոտք ու... Իսկ պատուհաններից ոչ մի լոյս չի երևում, կարծես այս օրը սուգի օր է կեավուռների համար... Զարժէ՞ մի փոքր ճաճաացնել այդ խոզին....

Եւ ոստիկանապետի տօմարումն արձանագրուեց.—«Արմենակ օղլի, միջին թաղ.—1. Տան առջև անտանելի աղտեղութիւն. 2. պատուհաններում և ոչ մի լոյս. 3. ինքն Արմենակ-օղլին էլ խանութումը չէր։—8 լիրա տուգանք և 61 օր բանտ»։

Արի հասկացրու այդ պարոններին, որ՝ 1. աղտեղութիւնն այդտեղ ածել է տուել ինքը Օսման-աղան. 2. տանը լոյս չի երևում, որովհետև Արմենակեանի կինն ու որդիքը կոլլէժումն են. 3. Արմենակեանն էլ երկար ժամանակ խանութումը ճգնելուց յետոյ՝ գնացել էր կոլլէժ իւր ընտանիքը տուն տանելու։

Օսմանցուի երկրում այդպիսի առարկութիւններն «ապօրինի» են։

—Լսում էք, էֆէնդիներ—շարունակեց Օսման-աղան քիչ դէնը գնալուց յետոյ,—սա դէ՛մի կրպակում անիրաւ կեավուռներն ինչ փառաւոր քէյֆ են սարքել և իրենց շան լեզուով էլ խաղեր են կանչում... Երկնից աստղերի թուով մոմեր և լամպեր են վառում շան կրպակումը, բայց իրա քսակի՞ցն ինչ է գնում, վաղը այդ բոլոր ծախսերը դուրս կըբերի նա խլամի զաւակաց կոնակից... Է՞յ, անիրաւ աշխարհ, նրանք այդպէս ուտեն-խմեն, խաղան-խնդան, քէյֆեր սարքեն, իսկ մենք՝ շան նման թրև գանք և փողոցները չափչփենք, հա՛... Դէ՛հ, դուք ասէք, անհաւատ կեավուռին այդպիսի փառաւոր կեանք վայելէ, էֆէնդիներ, «մսալից կտորներ» են... Արժէ՞-արժէ՞ գՀլել մի փոքր։

Եւ արձանագրուեց տօմարումը.—«Մաղման-օղլի, շուկա-

---

*) Ամեն ինչ այլանդակող թիւրքերի սովորութիւնն է հայկական ազգանունների եան կամ ենց վերջաւորութիւնը վերածել օղլի-ի։ Օրինակ. Արմենակեանը—Արմենակ-օղլի, Տէրտէրեանը—Քէշիշ-օղլի, Սուսերեանը—Գիլիջ-օղլի. են։

յում.—1. Կրպակումը կասկածելի մարդիկ հաւաքած՝ յեղափոխական խաղեր կանչելու, 2. ըմբոստ ճառեր ասելու, 3. Հնչակ քոմիթէի կենացը մասթիքա խմելնուն, 4, փաշա էֆէնդին կրպակի առջևից անցնելու միջոցին ոտքի չելնելնուն համար—10 լիրա տուգանք, առանց բանտարկութեան»։

—Ահա մի ուրիշ՝ աւելի համեղ պատառ—ասելով Օսման-աղան ցոյց էր տալիս երեք յարկանի մի գեղեցիկ տուն,—Քարափէթ-օղլիի տունն է, որի առջև՝ 6 հատ շան ոտքեր, 10 հատ ճխլուած մկներ, մի թեքնէ աղբ և... (Օսման-աղան, առանց գետին նայելու, թւում էր մի առ մի՝ իւր իսկ կարգադրութեամբ լցրած աղտեղութիւնները. նա, պէտք է ճշմարիտը խոստովանել, լաւ յիշողութիւն ունէր)... Եթէ մի քանի ուրիշ պատճառներ էլ դուք հնարէք, կարելի է լաւ օգտուել անօրէնիցը...

—Լռիր, տո, անխելք էշ—միջամտեց կոմիսարը սաստելով Օսման-աղային և չորս կողմը դիտելով,—Նոյնիսկ Քարափէթ-օղլի չէ կարելի անուանել այդ շանը, այլ անպատճառ միսթրը Քարափէթեան, որովհետև նա Ամերիկայի հպատակ է և կարող է մի սուտ խօսքով մեզ ամենքիս բանտի մէջ փտտեցնել... Յիմար, մենք կարող ենք դրանց դէմ ակռայ կտրցնել... Զարմանալի մարդ ես, Օսման, իզուր ծախսեր ես անում և աղբ ես լեցնել տալիս այնպիսի մարդու առջև, որ...

Օսման-աղան Մարսուանու էշերին պէս գլուխը կախ գցեց և լռեց. սխալուել էր թշուառականը...

Եւ նոքա շարունակեցին իրենց ճանապարհը կանգ առնելով այն տեղերում միայն, ուր կարելի էր «ակռայ կտրցնել»։

Այսպէս թէ այնպէս, մի բան չ'պէտք է մոռանալ, որ ոստիկանապետի տօմարումն արձանագրուածներն անպայման գործադրելի էին։ Որովհետև ինչ որ գրւում է թիւրք չինովնիկի գրչով, չի հանուիլ այլևս արդարութեան կամ խղճի բրչով։

Յաջորդ օրն առաւօտեան ոստիկանապետը մէկիկ-մէկիկ կանչում էր իւր մօտ տօմարում արձանագրուած անձերին և նոյնութեամբ անյապաղ գործադրում երեկոյեան վճիռները... բանտարկութեան rapport-ներն էին միայն, որ կարելի էր... դրամական տուգանքի վերածել հազար ու. մի միլիոնաթով...

## ԺԱ.

Հէնց միևնոյն օրը նահանգապետ փաշայի հրամանով ձերբակալուեցան մի քանի հարիւր հայ երիտասարդներ, որպէս

կոլլէժում հակապետական ցոյց անողներ։ Թէ ինչով կը վերջանար այդ բանը կամ առնուազն որքան ծախսերի ու առասպելական տուգանքների, կաշառքների դուռ կը բացուէր, մինչև այդ ձերբակալուած երիտասարդներին բանտից ազատելը, եթէ մի կողմից միսիոնարները և միւս կողմից պարսկական հայազգի հիւպատոսը չմիջամտէին ու չհասկացնէին նահանգապետ փաշային իւր արած քայլի անտակտութիւնը, որ ակնարկուած «ցոյցը» արդիւնք էր նահ. փաշայի բռնած դիրքին կոլլէժում դէպի հայ գեղեցկուհին և այլն—այդ թողնում եմ ընթերցողին գուշակել։

Բանը նրանով վերջացաւ, որ մի քանի ժամ բանտարկուելուց յետոյ բոլոր ձերբակալուածներն ազատ արձակուեցան, ի փառս և ի պարծանս վեհափառ սուլթանի...

Մ. ՇԻՈՏ

# ՀԱՅ ԱԶԳԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԽՆԴԻՐԸ [1]

Պ. Նիկողոսեանը մեծ նշանակութիւն է տալիս արիւնակցութեանը ազգերի գոյութեան խնդրում, ուստի և զինւում է խառն ամուսնութեանց դէմ, մոռանալով, որ աշխարհիս մէջ չկայ ոչ մի մաքուր ազգ ծագման տեսակէտից, որ բոլոր ևրոպական մեծ ու փոքր ազգերը զանազան ցեղերի խառնուրդից են ելել, և որ որքան մի ազգ մաքուր է արիւնով, այնքան նրա մէջ գերակշռում է իւր ցեղին բնածին միակողմանի յատկութիւնը, և, ընդհակառակը, որքան նա խառնուել է ուրիշ ազգերի հետ, այնքան աւելի նա ընդունել է իւր մէջ օտարի ընտիր բարեմասնութիւնները և այդու չեզոքացրել իւր մարմնակազմին ու բնաւորութեանը յատուկ թերութիւնները։ Հայ ազգը անցեալում քանի քանի անգամ ընդունել է իւր մէջ օտար գաղթականութիւններ և այդպիսով ճոխացրել իւր հոգևոր կեանքը նոցա բազմադիմի ազդեցութիւններով։ Իրենք, այժմեան հայերը, ոչ այլ ինչ են, եթէ ոչ դրսեցի եկամուտ գաղթականներ, որոնք նուաճելով տեղացիներին՝ խառնուել են նոցա հետ և ընդունել նրանց կենցաղակրթութիւնն ու բնաւորութիւնը։ Արեան յարաբերութիւնները բնական հիմն են կազմում, որի վրայ ազգը կառուցանում է իւր հոգևոր կեանքի անձեռագործ շէնքը։ Ուստի ազգերի գոյութեան խնդրում դեր խաղում է ոչ թէ արեան ծագումը, այլ հոգու ոյժերն ու կարողութիւնները։

Այդ ոյժերից լեզուին պ. Նիկողոսեանը իրաւամբ տալիս է մեծ կարևորութիւն, չպարզելով սակայն նրա նշանակութիւնը մեր ազգի ապագայ գոյութեան խնդրում։ Նմանապէս գրականութեան դերը նա խիստ ընդհանուր բառերով է արտայայտել, որոնք չեն բացատրում նրա էութիւնը (էջ 87)։ Իսկ կրօնի մասին նրա յայտնած մտքերը միանգամայն սխալ են և վայրիվերոյ։ Հեթանոսական կրօնները, իբրև արգասիք ազգային ոգու առանձնայատկութեանց, յիրաւի, ունեցել են և այսօր էլ ունեն արևելեան ազգերի մէջ մեծ նշանակութիւն՝

---

[1]) Լուսայ 1905, № 1.

նոցա ազգային գոյութեան նկատմամբ։ Հին հայերն էլ չէ՞ որ արտադրել էին իրենց ազգային աստուածութիւնը, ամենայն բարութեանց մայր՝ դիցուհի Անահիտը, որից սերտ կախեալ էին համարում հայոց աշխարհի կենդանութիւնը (Ագաթանգեղոս էջ 61, տպ. Վեն. 1862)։ Բայց քրիստոնէութիւնը երևան եկաւ իբրև հանրամարդկային ու միջազգային կրօն, որ վերցնելով ազգերի մէջ եղած խտիրը՝ թէ հրէին ու թէ հեթանոսին համահաւասար եղբայր հռչակեց։ Նոյն իսկ նրա ծոցում յայտնուած պէս-պէս «դաւանութիւնները» զերծ են ազգային բնաւորութիւնից և տեղական ու մասնաւոր նշանակութիւնից *) Անշուշտ, մի դաւանութիւն, մի ազգի անցեալում, կարող է մեծ կրթական ու քաղաքական դեր խաղալ և դրանով բարոյապէս սերտիւ շաղկապուել նոյն ազգի ուրոյն գոյութեան հետ, վայելելով դարէդար նրա սերունդների երախտագիտութիւնն ու առանձին սէրը։ Մանաւանդ քաղաքական կեանքի նուազման միջոցներին, եկեղեցին, իբրև միակ յօդակապ ցանուցիր ապրող ազգաբնակութեան, իւր ձեռքն է առնում նրա ղեկավարութեան գործը և առաջնորդում դէպի մի նոր կեանք։ Այս դերը կատարել է կաթոլիկ եկեղեցին արևմտեան Եւրոպայի բարբարոսների նկատմամբ՝ նրանց պատրաստելով արդի քաղաքակրթութեան բարձր աստիճանին հասնելու համար, և նոյն շինարար դերը հայ ազգի վերաբերմամբ խաղացել է մեր Հայաստանեայց եկեղեցին, վառ պահելով իւր հօտի սրտերում, նոյն իսկ մահմեդական իշխանութեան տակ, քրիստոնէական բարոյականի վեհ սկզբունքները,—ինչպէս որ պ. Նիկողոսեանն էլ այս ցոյց է տալիս (էջ 97)։ Սակայն, կատարելուց յետոյ իւր բարերար գործը, սննդելուց ու մեծացնելուց յետոյ իւր զաւակներին, եկեղեցին կամաց-կամաց սկսում է տեղի տալ իւր քաղաքական դերը ուրիշ ոյժերին, պահպանելով, սակայն, իւր բարոյական ահագին հեղինակութիւնը հաւատացեալների վրայ։ Վերևը նկատեցինք, որ հաւատոյ զօրութիւնը ժամանակի ընթացքում թուլանում է հետզհետէ։ Այս երևոյթն արդէն նկատելի է մեր մէջ։ Իբրև հետևանք՝ առաջ են եկել մեզանում՝ էջմիածնի անզօրութիւնը վառ պահելու կրօնական աւիւնը մեր ազգակիցների սրտում, եկեղեցու պաշտօնեաների անհնազանդութիւնը իրենց կենդրոնական իշխանութեանը, նը-

---

*) Աւելորդ չեմ համարում այստեղ դիտել, որ սոյն մրտքերը ես մանրամասն արծարծել եմ հինգ տարի առաջ Թիֆլիզի «Նոր-Դար» լրագրում, 1900, № 231։

րանց տարտամութիւնը, «չինովնիկային» (փառամոլ) ընթացքը, քահանաների շահամոլութիւնը, ըմբոստութիւնը, անկրթութիւնն ու անսրտութիւնը, ժողովրդի անտարբերութիւնը և էն շատը՝ լոկ պղատոնական զգացմունքը դէպի իւր կրօնական կենդրոնը – էջմիածինը, առանց անձնուիրութեան ու զոհաբերութեան գործերի, հետզհետէ տարածուող կրօնափոխութիւնները և վերջապէս կրթուած հասարակութեան մեծ մասի համակրութիւնը հակակրօն ուղղութեանը, որի յայտարար մեր մէջ հանդիսացել է ի սկզբանէ անտի «Մշակ» լրագիրը։ Այս երևոյթները մէկ-մէկ թուելով (էջ 84, 101), պ. Նիկողոսեանը սխալ բացատրում է դոքա ազգային գիտակցութեան պակասութիւնով, մինչդեռ իսկապէս այդ գիտակցութեան և կրօնականի մէջ ոչ մի կապ չկայ։ Կրօնական գիտակցութիւնը, այն է՝ հաւատը դէպի գերագոյն էակը, բնաւ նշանակութիւն չունի ազգային գիտակցութեան համար, այն է՝ ճանաչելու համար իւր ծագման ու լեզուի, գրականութեան ու պատմական բախտի համայնութիւնը ուրիշների հետ։ Կարելի է ճանաչել այդ համայնութիւնը նոյն իսկ առանց որև է կրօնական գիտակցութեան, առանց դաւանելու որև է կրօն։ Սոքա այնպիսի պարզ ճշմարտութիւններ են, որ բացատրութեան կարօտ չեն այսօր, երբ խղճի ազատութիւնը յաղթական մուտք գտաւ նոյն իսկ խիստ որթոդոքս Ռուսիոյ սահմանները և ընդունուեց իբրև ներքին սրբարան՝ անձեռնմխելի բռնութեան համար։

Ի զուր է բորբոքւում պ. Նիկողոսեանը՝ չգտնելով նաև հայեացքների նոյնութիւն մեր ուսեալ դասի և հասարակ ժողովրդի մէջ որի տիպարը իւր մայրն է հանդիսանում։ Սա դատապարտում է Պետերբուրգի և Մոսկուայի ուսեալներին, որոնք իրեն չեն ուզում լսել և իրենից ու պառաւներից ոչինչ չեն ուզում սովորել (էջ 38, 47). սակայն մի մարդ, որ երկար տարիներ անց է կացրել Եւրոպայի քաղաքակիրթ կենդրոններում և յաճախել է բարձրագոյն դպրոցները, բնականաբար չի գնալ՝ ժողովրդից բան սովորելու, որքան էլ որ այդ ժողովուրդը քաջառողջ լինի խելքով ու դատողութիւնով։ Եթէ ժողովրդի խելքն աւելի բարձր է ուսեալ մարդու խելքից, այն ժամանակ էլ կարիք չկայ գնալու Պետերբուրգ կամ Մոսկուա, էլ կարիք չկայ ուսում առնելու, էլ կարիք չկայ յառաջադիմութեան։ Ուսման էութիւնը հենց նրանումն է կայանում, որ նա զարգացնում է տարբեր մտածողութիւն, տարբեր հայեացքներ և գաղափարներ, քան թէ ինչ որ ունի հասարակ ժողովուրդը։ Այդ հայեացքները կարող են շատ սխալ լինել, թերի, անհամակրելի, նոյն իսկ

մնասակար. բայց շտկել կամ հերքել նոցա կարող է դարձեալ գիտութիւնը, գիտնական փաստերն և ուսումնական պատճառաբանութիւնները, և ոչ թէ անհամ ծաղրածութիւնը և ժողովրդի հայեացքների փառաբանութիւնը՝ իբրև օրինակելի և ուսանելի։ Մեր երիտասարդութիւնը, իրաւ է, տարուած է գիտնական ու քաղաքական թիւր ուսմունքներով, որոնք արդիւնք են մեր դարաշրջանի և տարածուած են բոլոր ազգերի երիտասարդութեան մէջ, և ոչ թէ կազմում են մասնաւոր երևոյթ, սեպհականութիւն լոկ մեր ուսանողութեան։ Նմանապէս, շնորհիւ ներկայումս գիտութեանց սաստիկ առաջացած ճիւղաւորման և տիրապետող իմաստասիրական ուղղութիւնների, ուսումը, մանաւանդ տեխնիքական ու բնական գիտութեանց ուսումը, չի կարողանում միաժամանակ կրթել բնաւորութիւնը, ազնուացնել ու բարձրացնել հոգին և վերացնել միտքը դէպի այն սկզբունքները, որոնք թագաւորում են ամբողջ տիեզերքում, ինչպէս և մարդկային ընկերութեան մէջ։ Բայց այդ բոլոր թերութիւնների դէմ կռուելու համար էլի հարկաւոր է զինուել գիտութեամբ, և ոչ թէ քարոզել դարձ դէպի ժողովուրդը, կամ հայհոյել ու անարգել։

Հայեացքների այդ տարբերութիւնը ուսեալների ու ռամիկ դասի մէջ արգելք չի հանդիսանում սակայն, որ նոքա զգան իրենց իբրև մի ազգի անդամ, պատրաստ զոհեր բերելու նրա համար վտանգի միջոցին։ Կովկասեան վերջին արիւնալի դէպքերը պարզ ապացոյց են այս ճշմարտութեան։

Այսպիսով մենք հասնում ենք գլխաւոր կէտին, այն է թէ՝ պատմական դէպքերն են կազմում ազգութեան ամենազօրեղ շաղկապը, նրա կեանքի ու մահուան իսկական դատաւորը։ Պատմութիւնն է ազգերի ստեղծողը, պատմութեան մէջ է գտնում ազգութիւնը իւր իդէալների իրագործումը և պատմութեան մէջ են երևան գալիս նրա հոգու և բնաւորութեան յատկանիշները։ Տեսնենք թէ պ. Նիկողոսեանը որքան ճիշտ է հասկանում մեր անցեալ կեանքը և որքան ուղիղ են նրա կարծիքները մեր ներկայի ու ապագայի մասին։

Պ. Նիկողոսեանը իրաւամբ մեծ տեղ է տալիս հայի բնաւորագրութեանը պատմական կեանքում, զի միմիայն բնաւորութեան յատկանիշներով կարելի է բացատրել մի ազգի ճակատագիրը, ինչպէս և անհատի կեանքի ընթացքը։ Սակայն այդ ճակատագիրը լաւ հասկանալու համար՝ բաւական չէ ճանաչած լինել ազգային յատկանիշները։ Պէտք է գիտենալ նաև նոցա սկզբնապատճառը, նոցա արմատն ու իսկական աղբիւրը։

կան յատկանիշներ, որ ընդածին են ազգին, կան որ ստացական են՝ արդիւնք երկրի բնութեան, արենակցութեանց և պատմական դէպքերի։ Թէ որոնք են հայի բնածին յատկութիւնները, որ անջնջելի դրոշմուած են նրա հոգու մէջ և մնում են անփոփոխ՝ չնայած ազգի պատմական բախտի փոփոխութիւններին,—այս հարցը վերին աստիճանի կարևորութիւն ունի, որ ընդհանրապէս մեր մէջ չի հետազօտուած և պ. Նիկողոսեանն էլ, հարկաւ, չի շօշափում, և որ, սակայն, ահագին նշանակութիւն է ունեցել մեր ազգի ճակատագրի համար։ Պարզել այդ հարցը կարելի է միմիայն հետազօտելով ազգային հոգու արտադրութիւնները և համեմատելով դրա ուրիշ ազգերի համապատասխան արտադրութեանց հետ։ Ազգային հոգու իսկատիպ արդիւնքը հեթանոսական շրջանում եղել է կրօնը և դիւցազնական բանաստեղծութիւնը, և ուրեմն այս երկու տարերց հետազօտութիւնը հին հայերի մէջ և համեմատութիւնը դրացի ազգերի հետ թերևս պարզի մեզ հայկական հոգու անայլայլելի բնածին յատկութիւնը։ Թէ ինչո՞ւ հայոց ազգային աստուածութիւնը իգական սեռի է, և ոչ արական, ինչպէս է, օրինակ, Որմիզդը հին Պարսից մէջ, թէ ինչո՞ւ Հայկ դիւցազնը ըմբոստանում է բռնակալի դէմ և թողնելով Բաբելոնի տափարակները՝ քաշւում է հիւսիսի ցրտաշունչ լեռները և այնտեղ հերոսաբար պաշտպանում է իւր և իւրայինների ազատութիւնը,—առքա պատահական ու աննշան երևոյթներ չեն, այլ ունին իրենց խորին իմաստը, և բացատրւում են միմիայն հայ ազգի հոգու մէջ տիրող յատկանիշներով։ Այդ յատկանիշների էութիւնն այն է, որ Հայերն արևելեան Արեաց ընտանիքի ազգերի մէջ իսկզբանէ անտի եղել են ներկայացուցիչներ մատերիալիստական (նիւթապաշտական) սկզբունքի կրօնում և դեմոկրատական (ազատական) գաղափարների ու ձգտումների քաղաքական կեանքում։ Անտեղի համարելով աւելի երկար կանգ առնել այստեղ սոյն խնդրի վերայ, յուսով ենք, որ ուրիշ անգամ կը վերադառնանք այս վերին աստիճանի հետաքրքրական կէտին։

Գալով երկրի բնութեան ազդեցութեանը ազգի բնաւորութեան վերայ, մենք արդէն տեսանք, և պ. Նիկողոսեանն էլ ցոյց տուեց իւր գրքում, որ Հայաստանը զարգացրել է իւր բնակիչների մէջ անկախութեան ու անհատականութեան ոգին, այսինքն՝ այն ոգին, որ արդէն իրենէ յատուկ է եղել հայկական ցեղին։ Եւ այս շատ հասկանալի է։ Մի ազգ, ինչպէս և ամեն մի անհատ, ընտրում է իւր բնակավայրը՝ համապատասխան

իւր տրամադրութեանը, իւր հակումներին ու ձգտումներին, և քանի որ Հայերը ի ծնէ անտի տոգորուած են եղել ազատութեան ոգով, ուստի և ընտրել են իրենց հայրենիք Հայաստան երկրի ազատ լեռները։

Ինչ վերաբերում է արենակցութեանը դրացի ազգերի հետ, այստեղ էլ պէտք է որոնել այն տարրը, որի հետ Հայերը խառնուելով ամուսնութեամբ («նմանն զնմանն սիրէ») աւելի ևս զօրացրել են իրենց հոգու միակողմանի բնածին յատկութիւնը։ Թէ Հայաստանի նախկին բնիկները և թէ հարաւի սեմական ազգերը, որոնց հետ Հայերը շարունակ եղել են խաղաղ և պատերազմական յարաբերութեանց մէջ, ունեցել են մի ընդհանուր յատկանիշ, որ բնածին է բոլոր լեռնականներին և սեպհական է հայկական ցեղին էլ,—յարատևութիւն և տոկունութիւն պահպանելու իւր հոգևոր առանձնայատկութիւնը։ Այս կէտը նմանապէս արժանի է լուրջ ուշադրութեան և նոյնպէս չի շոշափուած պ. Նիկողոսեանի գրքում։

Եթէ բնակավայրն ու արիւնակցութեան կապերը կախուած են մասամբ ազատ ընտրութիւնից, պատմական դէպքերն արդէն անկախ են որևէ մարդկային կամայականութիւնից և աւելի զօրեղ ազդեցութիւն ունեն ազգերի բնաւորութեան կազմութեան վերայ, քան բնածին հակումները, երկիրն ու խառնուրդները։ Անցնելով պատմական դէպքերի բովից՝ մի ազգի բնաւորութիւնը դուրս է գալիս մերթ այլանդակուած և խեղաթիւրուած, մերթ ազնուացած, զտուած ու կոկուած։ Ուստի պատմական դէպքերին իրաւամբ առաջին տեղն է տալու մի ազգի բնաւորութեան կազմութեան խնդրում։

Պ. Նիկողոսեանը ուրիշ բացատրութիւն չունի հայ նախարարների անմիաբանութեան և զօրեղ կենդրոնական ոյժի բացակայութեան՝ հին Հայաստանում, եթէ ոչ դարձեալ տեղագրական արգելքներն ու ընդհանուր բառեր՝ «արտաքին և ներքին պայմանները» (էջ 88)։ Եթէ ժողովուրդը «շարունակ իւր գլուխը պաշտպանելու հետամուտ լինէր» արտաքին թշնամու դէմ (էջ 89), այն ժամանակ նա և նրա իշխանները կոյր չէին, որ չտեսնէին, թէ այդ նպատակին աւելի հեշտութեամբ կարելի է հասնել միացեալ ոյժերով, քան թէ բաժան-բաժան։ Իսկ եթէ միութիւն տեղի չի ունեցել, դորա պատճառն ուրեմն բոլորովին այլ իրողութեան մէջ պէտք է որոնել։ Հին Հայաստանի մեզ ծանօթ պատմական շրջանում թագաւորում էր աւատական կարգը, որի ներքոյ ծայրայեղ գարգանում է առանձնականութիւնն ու անհաստատականութիւնը, հին հայերի այս

բնածին յատկանիշը։ Աւատական կարգը մեր քաղաքական կեանքում տեսեց մինչև Ռուբինեանց իշխանութիւնը, որը իւր կողմից ոչ այլ ինչ էր, եթէ ոչ արևմտեան Եւրոպայի աւատական իշխանութեանց արտանկարուած ճշգրիտ պատկերը։ Բայց մինչ Եւրոպական ազգերն իրենց մէջ յաղթահարեցին աւատական սկզբունքը և նրա աւերակների վերայ բարձրացրին միահեծան թագաւորութեանց հսկայ շինուածքները, հայերը մնացին կէս-ճանապարհին կանգնած և չկարողացան ստեղծել կենդրոնական ոյժ։ Մինչև սրանից մօտ 40 տարի առաջ Ճափոնիան էլ գտնուում էր աւատական շրջանում, և միմիայն 1868-ի յեղափոխութեամբ անցաւ քաղաքական յաջորդ աստիճանը։ Հայերը չբարձրացան այդ աստիճանը։ Պատճառն այն էր, որ նրանք մահմեդական տիրապետութեան շնորհիւ բոլորովին կտրուեցին արևմտեան Եւրոպայից, որտեղ միջին դարերից հետէ կենդրոնացել էր պատմութեան ընթացքը։

Մահմեդական տիրապետութեան տակ, ինչպէս պ. Նիկողոսեանն էլ դիտում է (էջ 94), Հայերն, իրաւ է, ունեցել են մեծ ինքնավարութիւն, պահպանելով իրենց կրօնը, բարքերն ու եկեղեցական կազմակերպութիւնը,—ինչ որ, սակայն, բացատրելու է ոչ թէ մահմեդական վեհապետների առանձին բարեհաճութեամբ առ քրիստոնեայ Հայ ազգը, այլ նրանով, որ մահմեդական տիրապետութիւնը, չբերելով նուաճեալ ազգերին քաղաքացիական կեանքի գերագոյն ձևեր, չի կարողանում նրանց շաղկապել իւր հետ, ուստի և գոհանում է լոկ արտաքուստ հպատակութեամբ, հարկ և զինուորական օգնութիւն առնելով (չքրիստոնեայ հպատակներից) առանի դիպչելու նոցա ներքին կեանքին։ Ճնշումներն արդիւնք են ոչ թէ հոգևորականների ազդեցութեան, որոնք, ընդհանրապէս, չնչին դեր են խաղում արևելեան բռնակալ կրօնապետութեանց մէջ, այլ պարզապէս վարչութեանց անկարգ սիստեմի, որ թոյլ է տալիս պաշտօնեաներին անպատիժ կեղեքել հպատակներին՝ առանց ենթարկելու կենդրոնի հսկողութեան։ Կրօնական խտրութիւնը, հարկաւ, մեծ վիհ է կազմում իշխողների և նուաճեալների մէջ, բայց չարեաց արմատը ամենևին այդ չէ, այլ օրինական կարգի բացակայութիւնը, որով կամայականութեանը լայն դուռ է բացուած։ Քանի որ վեհապետը օրէնքից վեր է, և ոչ թէ նորան ենթակայ, անկարելի է ստեղծել կարգաւորեալ քաղաքացիական կեանք, անկարելի է կազմակերպել և օրինաւոր վարչութիւն, անկարելի է պահպանել և կանոնաւոր պետութիւն։ Պ. Ն. ըստ երևոյթին, պարզ չի ըմբռնել մահմեդական կրօնապետութեան էութիւնը։

Բայց պ. Ն. շատ մեծ հմտութեամբ է դուրս բերել հայի բնաւորութեան գծերը՝ իբրև արդիւնք մահմեդական տիրապետութեան (էջեր 95—97)։ Այդ գծերի ընդհանուր նշանն է դարձեալ մեկուսացումը, առանձնացումը և ժրխտական վերաբերութիւնը դէպի իւր նմանները, ուրեմն դարձեալ ծայրահեղ զարգացումը հայկական հոգու բնածին յատկութեան։ Նմանապէս ճիշտ է և պ. Ն.-ի այն դիտողութիւնը, թէ քրիստոնէական կրօնը չեզոքացրել է այդ անհամակրելի ստացական գծերը և մշակել ընտիր բարեմասնութիւններ, որոնք պատուաբեր են մեր ազգի համար (էջ 97)։

Պարզ է ուրեմն, որ միմիայն քրիստոնէութեան մէջ և քրիստոնեայ աշխարհի հետ յարաբերութիւններ հաստատելով կարող էին հայերն ազնուացնել իրենց բնաւորութեան միակողմանի յատկանիշները և բարձրանալ այն նոր աստիճանը, որ նրանց սպասում է պատմական կեանքում։ Այդ աստիճանը, ինչպէս արդէն տեսանք, հայերին տանելու էր քաղաքական միութեան, զարգացնելու էր նրանց մէջ իշխանութեան սկզբունքը և փոխանակ նոցա մեկուսացնելու և զօրացնելու նրանց մէջ անհատականութիւնը, առաջնորդելու էր դէպի միջազգային և հանրամարդկային յարաբերութիւնները և այդպիսով զարթեցնելու էր նրանց մէջ հասկացողութիւն ընդհանուր սկզբունքների, ձգտումն դէպի ընդհանուր շահերը, հնազանդութիւն ընդհանուր օրինաւոր իշխանութեան և վերջապէս քաղաքական ու քաղաքացիական իրաւունքների գիտակցաբար գործադրութիւն,—բոլորն էլ այնպիսի յատկութիւններ, որոնք հակառակն են հայի անհատականութեան և որոնց պակասը այնքան աղէտալի է եղել մեր անցեալ պատմութեան համար։ Այս բարիքները կարելի էր ստանալ միմիայն քրիստոնեայ եւրոպական ազգերից, ուստի հայերը մահմեդական աշխարհում երբէք չեն դադարել ձգտելուց Եւրոպա և յատկապէս դէպի հարևան Ռուսիան, որ կոչումն էր ստանձնել արևմտեան քաղաքակրթութեան միջնորդ լինելու Արևելքի համար։

Թէ Հայերը, դէպի Ռուսիա ձգտելով, փափագում էին ոչ թէ կրօնական ազատութիւն կամ կեանքի, աշխատութեան և գոյքի ապահովութիւն (էջ 99), այլ միմիայն քաղաքական բարձրագոյն զարգացում, այդ երևում է այն հանգամանքից, որ հայկական հանճարը, ռուս պետութեան մէջ փայլեց ոչ այնքան տնտեսական, կրօնական, ուսումնական և գեղարուեստական ասպարէզներում, որքան քաղաքական կեանքի շրջանում, տալով ռուս ազգին բազմաթիւ ականաւոր զօրավարներ ու վար-

չական անձինք։ Նիւթական ապահովութիւնը միմիայն միջոց էր լինելու այդ նպատակի համար, զի քաղաքական գործերով զբաղուել կարող է միմիայն մտաւոր պատրաստութիւն ունեցողը, իսկ այդպիսի պատրաստութիւն ստանալու համար անհրաժեշտ է ունենալ ապահովութիւն։

Պ. Ն. յարձակւում է ռուսաց միջնակարգ ու բարձրագոյն դպրոցներում մեծ յառաջադիմութեամբ ուսանող հայ երիտասարդութեան վերայ, որի իդէալը դարձեալ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կողմից նիւթական ապահովութիւնը, միւս կողմից էլ «համազգեստը, աստիճանը և շքանշանը» (էջ 103), այսինքն, այն պայմանները, որոնք անհրաժեշտ են քաղաքական կեանքում յառաջանալու համար։ Հայ ազգը, չունենալով ինքնուրոյն քաղաքական կեանք, ասպարէզ չի ներկայացնում այդ երիտասարդութեան համար, ուստի նա ստիպուած է դիմել օտարին և ամեն ճիգ թափել հասարակական դիրք ձեռք բերելու համար, որ չլինի թէ դուրս մնալով հասարակութիւնից, ինքն էլ իւր կողմից ստուարացնի թշուառ մտաւոր պրոլետարիատի բազմամարդ շարքերը, կազմուած հայ ուսուցիչներից ու գրագէտներից։ Ցամենայն դէպս, հայը, պաշտօնավարելով ռուս պետական այլ և այլ հաստատութեանց մէջ, հմտանում է կառավարութեան զանազան մասերում, — ինչ որ դարձեալ նպաստաւոր պայման է մեր քաղաքական հասունութեան համար։

Սակայն այդ հասունութեանը հասնելու համար՝ բաւական չէ ունենալ նիւթական կարողութիւն և մտաւոր պատրաստութիւն կառավարական գործերում։ Պէտք է ձգտել նաև շաղկապելու իրար հետ հասարակութեան ցիրուցան անդամները։ Այդ շաղկապող ոյժերից առաջինը ընտանիքն է, որտեղ դրուած են պետական կեանքի բաղադրիչ տարերց էական սաղմերը։ Պ. Ն. իրաւամբ յայտարարում է հայ ընտանեկան կապերի քակտումը՝ կորստաբեր մեր ապագայի համար (էջ 102)։ Մանաւանդ հայ կնոջ այլասեռումը խիստ վտանգաւոր իրողութիւն է հայ գերդաստանի, ուրեմն և հայ ազգի յարատև գոյութեան և ամբողջութեան համար։ Սակայն այս բոլոր երևոյթները անխուսափելի հետևանքներ են նոր ազգերի մէջ տիրող բարքերի (որ պ. Նիկողոսեանը «միջավայր» ընդհանուր բառով է բացատրում), որ ընդունում է հներին անծանօթ կընոջ ընկերական ազատութեան սկզբունքը։ Դարմանը ոչ թէ վերադարձն է դէպի նահապետական կեանքի ձևերը, որ անդառնալի անցած պիտի համարել ժամանակակից ազգերի համար, այլ բարքերի ազնուացումը մի կողմից քրիստոնէական

կրօնի ազդեցութեամբ իւր բարոյական բարձր իդէալներով, միւս կողմից էլ, ինչպէս տեսանք, ճշմարիտ գիտութեան և գեղեցիկ գրականութեան կրթիչ ներգործութեամբ։ Ուստի թէ մեր եկեղեցին, թէ ուսեալ դասը և թէ մանաւանդ մեր գրականութիւնը մեծ դեր ունին խաղալու ապագայի մասին։

Բայց միութեան շաղկապը պէտք է հաստատուի ոչ միայն ազգի հոգևոր կեանքում, այլ նաև տնտեսական գործունէութեան մէջ, որ նիւթական միջոցներ է մատակարարում հոգևոր նպատակներն իրագործելու համար։ Ամեն մի տնտեսական հասարակութեան մէջ բնականաբար յառաջանում են ընկերական դասակարգեր՝ ունևորներ և չունևորներ, լուսաւորեալներ և խաւար ամբոխ։ Ունևորներն ու լուսաւորեալները, բարձրանալով ամբոխից, մեծամասնութիւնից, ոչ թէ խորթանալու են և խորշելու նրանից, այլ ամեն կերպով նպաստելու են նրա լուսաւորութեանն ու բարեկեցութեանը՝ սերնդէ սերունդ իրենց տոհմի մէջ զօրաւոր շաղկապ հանդիսանալով քաղաքական կեանքից զուրկ հասարակութեան։ Նրանք են լինելու գիտութեան, գրականութեան և գեղարուեստի սիւներն ազգի մէջ, նրանք են լինելու խաւար ամբոխի լուսաւորութեան պայծառ ջահերը. նրանք են լինելու թշուառ ժողովրդի յոյսն ու ապաւէնը ճգնաժամերում։ Եթէ նոքա չեն հասկանում իրենց վեհ կոչումը, ապա ուրեմն ոչինչ յոյս չկայ այդ ժողովրդից ու հասարակութիւնից։

Դուրս բերելուց յետոյ Պրոտոպոպովի վերոյիշեալ տիպարը, որ լինելով մեծատուն հայ վաճառական, չի կատարում սակայն, իւր հասարակական դերը ազգի մէջ, պ. Ն. նրան իւր պաշտպանութեան տակ է առնում՝ ոչինչ անբնական բան չգտնելով նրա ընթացքի մէջ թուրքի ու պարսկի տեսակէտից (էջ 127)։ Պ. Ն. կարող էր աւելացնել, որ գերմանացին ու ֆրանսիացին էլ չէին գտնիլ ոչինչ դատապարտելի բան, եթէ Պրոտոպոպովը իրենց մէջ ծնուէր։ Բայց, օրինակ, լեհացին կամ հրէան կը դատապարտէր իւր ազգի մէջ յայտնուող Պրոտոպոպովին, և եթէ լսէր, որ մեր մէջ այդպիսի տիպարներ սակաւ չեն, հայ ազգի վրայ մեծ համարում չէր ունենալ այնուհետև։ Պատճառն այն է, որ առաջին ազգերը ունին սեպհական կառավարութիւններ, որոնք հոգում են ազգի լուսաւորութեան և այլ պէտքերը՝ հարկ առնելով ժողովրդից՝ նայած հպատակների նիւթական կարողութեանը,— հարստից շատ, աղքատից՝ սակաւ. մինչ անկախութիւնից զուրկ փոքր ազգերի մէջ այդ դերը բնականաբար ստանձնում են բարձր

դասակարգերը, որոնք և կոչուած են հասարակութեան գլուխ կանգնելու ներկայում և ապագայում։

Տնտեսական հասարակութեան մէջ բարձրագոյն դասը կազմում են ոչ միայն գրամատէրները կամ վաճառականութեան ու արդիւնաբերութեան խոշոր ներկայացուցիչները, այլ և կալուածատէրները, անշարժ կայքերի և հողերի սեպհականատէրերը։ Դրամը նպատակ չէ, այլ լոկ միջոց է ոչ միայն հոգևոր, այլ և տնտեսական կեանքի համար, նպատակն այստեղ հողն է, անշարժ կայքը, ուստի հողային սեպհականութեան զարգացումը անհրաժեշտ պայմանն է ազգերի ոչ միայն տնտեսական, այլ և այդու իսկ հասարակական յառաջադիմութեան։ Հողատիրութիւնը մի հասարակութեան նիւթական պատուանդանն է և ուրեմն շաղկապը նրա ցանուցիր մասերի։ Բայց այդ դերը նա կարող է կատարել, երբ որ կազմում է միապաղաղ անընդհատ տարածութիւն՝ միևնոյն ազգի հոծ բնակութեամբ։ Կովկասի վերջին անցքերը ցոյց տուին ցանուցիր բնակութեան ծանր վտանգը հայ հասարակութեան գոյութեան համար։ Վրաց ազգի կալուածատիրութիւնը, որի հետ պ. Ն. համեմատում է Պրոտոպոպովին (127), ունի այն մեծ առաւելութիւնը մեզանից, որ կենդրոնացած է մի տարածութեան վերայ, ուստի և կազմում է զօրաւոր նեցուկ ազգային գոյութեան և ինքնուրոյնութեան։ Նիւթապաշտութիւն և շահամոլութիւն, հարկաւ վրացիների մէջ էլ կայ, ինչպէս և Եւրոպայի ու Ամերիկայի «լուսաւոր և մեծ ազգերի մէջ» (128), բայց չպէտք է մոռանալ, որ այդ ազգերն ունին հակակշռող ուրիշ առաւելութիւններ, որոնք պակասում են մեզ, չարաբախտներիս։ Համեմատելու ժամանակ այս հանգամանքը աչքաթող է արել պ. Նիկողոսեանը։

Ընհանրապէս պ. Ն. զուր է աշխատում արդարացնել Պրոտոպոպովին և փառաբանում նրան արտադրող ազգը։ Սիրել իւր ազգը, իւր հայրենիքը, մարդուս գերագոյն պարտքն է երկրիս վրայ, բայց այդ սէրը չպէտք է գոցի նրա աչքերը իւր ազգին յատուկ պակասութեանց վերայ։ Չնայած Ռուսաց դարաւոր տիրապետութեանը, չնայած յաճախ յարաբերութեանցը Եւրոպայի կիրթ երկրների հետ, հայը դեռ չի ազատուել իւր բնաւորութեան ճակատագրական յատկանիշներից։ Նա դեռ չի կարողանում յաղթահարել իւր անհատականութիւնն ու նիւթապաշտութիւնը և վերանալ դէպի ընդհանուր շահերը, սկզբունքներն ու ձգտումները։ Հէնց որ հայը բարձրացաւ իւր ժողովրդից, նա դառնում է անպատճառ մի

Պրոտոպոպով, լինի դա Տաճկաստանում թէ Ռուսաստանում։ Պրոտոպոպովը բուն հայկական տիպ է՝ հայ ժողովրդի մսից ու արիւնից։ Չի կարելի նրան բաժանել սրանից, գովաբանել մէկին, պարսաւել միւսին, մինչ նա արժատն է, իսկ սա պըտուղը։ Այս պատճառով օտարները մեր մասին գաղափար են կազմում՝ ծանօթանալով այդ տեսակ տիպերի հետ և ենթադրելով որ ռամիկ ամբոխը գրեթէ միևնոյնն է ամեն ազգի մէջ։ Երբ որ կարդում ենք ճապոնական և մանաւանդ չինական հասարակ դասի մաքուր բարքերի նկարագրութիւնը ճանապարհորդների ձեռքով, զարմանում ենք, որ այդպիսի օրինակելի կեանք վարել կարող է մի հեթանոս ժողովուրդ, ուր մնաց քրիստոնէական սկզբունքներով դարէ դար մնուած հայ ազգութիւնը։ Սակայն և այնպէս, մեզ համար իդէալ չի կարող դառնալ ոչ իւր նախահարց աւանդութիւններին խստիւ հետևող չինացի ժողովուրդը, որ խորշելով խորշում է Եւրոպացիներից, ոչ էլ պահպանողական ու առանձնական, ցանուցիր, յետամնաց և դեռ ստրուկ հայ ազգը։ Մեզ համար իդէալ առհասարակ չի կարող լինել ազգութեան պաշտամունքը, աստուածացումը, ինչպէս որ դա է պ. Ն-ի. նման մոլեռանդ ազգասէրների համար։ Մեր իդէալը հանրամարդկային է և միմիայն այդ հանրամարդկային հողի վրայ է որ կարող է մնուել, աճել ու զարգանալ ազգային գաղափարն ու գիտակցութիւնը։ Իսկ այդ հողից կտրուած, չինական պարսպով ուրիշ ազգերից իրեն բաժանող հասարակութիւնը, իրաւ է, անկորուստ կապրի դարէ-դար երջանիկ և կեանքով պահպանելով իւր հոգու ընտիր բարեմասնութիւնները, որոնցով նրան օժտել է բարերար Աստուածը, սակայն այդ կեանքը մեռեալի կեանք է, զի նա գոյութիւն չունի ուրիշների համար, և ինքն էլ իւր համար ապրում է անգիտակցաբար, առանց հասկանալու իւր գոյութեան խորհուրդը։ Ազգային գիտակցութիւնը, որի պակասութեան վրայ մեր հասարակութեան մէջ այնքան տրտնջում է պ. Ն. կարող զարթնել միմիայն մասնակցելով ընդհանուր շարժմանը, ստանալով ուրիշներից հոգևոր բարիքներ և տալով նոցա իւր մտքի արգասիքները, ճոխացնելով հանրամարդկային գանձարանը գիտութեան ու գրականութեան խոշոր երկերով, պայծառացնելով իւր հասարակական կեանքը քաղաքացիական ու քաղաքական ընտիր հիմնարկութիւններով, և ոչ թէ դրուատելով իւր ազգի անհատական առաքինութիւնները և իդէալացնելով նրա թերութիւնները։

ԳԷՈՐԳ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Վիեննա

(Վերջը միւս անգամ)

# ԱՒԵՏԱՐԱՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ [1]

## II.

Անցաւ մի շաբաթ։

Սակայն այդ մի շաբաթուայ ընթացքում Դարբնենց տան մէջ զգալի փոփոխութիւն էր առաջ եկել։

Լուսաբերին արդէն թաղել էին հենց մեռնելու առաջին օրը. դէհ խօլերայի զոհերին հօ չի կարելի երկար անթաղ պահել։ Թաթուլն այդ մի շաբաթուայ ընթացքում միայն մի անգամ էր այցելել Սահրատին, այն էլ Լուսաբերի յուղարկաւորութեան ժամանակը։ Եւ այդ բանը առաւել ևս բազմապատկել էր Սահրատի կասկածը. չէ՞ որ առաջներում, եթէ օրական մի տան անգամ նա չտեսնուէր Սահրատի հետ, անդադար կըրկնում էր՝ սիրտս պատռւում է, որ չեմ տեսնում քեզ, ասես մի բան կորցրած լինեմ։

«Այժմ ո՞ւր կորաւ այդ սիրտը»,—մրմռում էր յաճախ ինքն-իրան Սահրատը. «այժմ ինչո՞ւ նա չի պատռվում. օ, ես այդ լաւ եմ հասկանում, լաւ եմ ըմբռնում, թէ որքան անգութ ես դու եղել...»

Անցաւ մի շաբաթ էլ, մի ամիս էլ, սակայն Թաթուլը չկար ու չկար։ Վերջապէս, Սահրատի կատաղութիւնը իր գագաթնակէտին հասաւ։ Նա այդ մի ամսուայ ընթացքում հազար անգամ չափել, ձևել էր Թաթուլի նախկին իւրաքանչիւր քայլը, իւրաքանչիւր հայեացքը, նիստուկացը իւր յարկի տակին, և ամեն անգամ

---

[1]) *Լուսայ 1906, № 1.*

էլ ներքին ալեկոծութիւնը նրան իւր խռովագին նաւի վրայ տարել էր հեռու, շատ հեռու, դէպի կեանքի յուսահատութեան տարտարոսը, փիրը, ուր խուլ մրընչիւնը չարագուշակ բուի նման ոչ մի աւետաբեր երջանկութիւն չէր խոստանում նրան, այլ այն, ինչ նա դուշակում էր, սոսկալի էր և ցնցող։

Այդ մի ամսուայ ընթացքում նա մի քանի անգամ էր խօսել, այն էլ իւր մօր հետ, այն էլ, երբ մայրը սրտի խորին կարեկցութեամբ, տեսնելով որդու յարատև լռութիւնը, ջանքեր էր գործ դնում մխիթարելու նրան։

—Ախր ա՛յ որդի, ինչո՞ւ չես խօսում. դէհ Աստծու կամքն է էլի. մենք ինչ կարող ենք անել։

—Է՛հ, մարէ, ինչպէս խօսեմ, երբ ամեն բան յիշում եմ, ներքին զայրոյթը պապանձեցնում է լեզուս,—պատասխանում էր դառն յուսահատութեամբ լցուած Սահրատը։

—Աստուած ողորմած է, կանցնի։

—Չէ, մարէ. քանի այ այստեղ սա թրփրտում է,—ցոյց տալով սիրտը.—չի կարող ոչ մի բան անցկենալ։ Սրտերի համար ամեն բան յաւիտենական է։

—Բեզ կ'վնասես։

—Ախ, ուր էր. գոնէ կազատուէի այս սոսկալի տանջանքներից. գոնէ այս հոգետանջ տառապանքներս կլռէին դերեզմանական քար լռութեան մէջ։ Բայց ո՛չ, ո՛չ, նրանք ընկեր են ինձ ամեն ժամ, ամեն րոպէ՝ այստեղ էլ, այս վերան աշխարհումն էլ և գերեզմանական քարասիրտ կապանքներումն էլ։

—Եղբայրդ էլ չի գալիս. նրան ինչ է պատահել. ա՛յ հիմի է նրա ներկայութիւնը քեզ պէտք. իզուր չեն ասել մեր լուսահոգի նախնիները թէ՝ «նա է քո բարեկամը, ով փորձանքիդ ժամանակ անբաժան է քեզանից։»

Մի խուլ հառաչանք դուրս թռաւ Սահրատի կրծքից. թշուառ մայրը չգիտէր, որ հենց այդ «եղբայրն» է իւր որդու դժբախտութեան պատճառը։

—Այո, մարէ, չի գալիս. յիշում ես առաջներում ամեն օր հէնց այստեղ վեր ընկած էր լինում։ Յիշում ես, երբ միանգամ հարսդ հէրանց էր գնացել, նա դարձեալ չերևաց մինչև այն ժամանակ, երբ նա վերադարձաւ։ Նա մեզ համար չէր գալիս, նրա համար մեր խաչն ու աւետարանը ոչինչ են եղել։ Յիշում ես, մի անգամ, երբ մենք կալում շեղջ էինք հանել, կարիք եղաւ տուն վազել ջուալները բերելու, յիշում ես ինչպէս ծոի նման թռաւ ու երկար—երկար ուշացաւ. ինչն էր պատճառը. չէ՞ որ ջուալները պատրաստի դարսած էին ծալքի վրայ, հարկաւոր էր հարսիցդ ուզել նրանց ու վերադառնալ։ Բայց նա, օ, ուշացաւ...

—Հոգուդ մեղք ես անում, որդի։

—Մէկ այդ չէ, մարէ, մի անգամ ամառը դու եայլաղ էիր գնացել, ես էլ արտն էի ջրում, տանը մենակ հարսդ էր մնացել։ Երբ ջրեցի վերջացրի, շտապեցի տունը, սոված էի և ինչ... հեռուից տեսնեմ, որ նա մեր տանիցն է դուրս գալիս։ Հարցրի հարսիցդ, բայց նա պատասխանեց, թէ եկաւ հարցրեց քո մասին։ Ախր, չէ՞ որ նա գիտէր, որ ես ջուր անելու եմ գնացել։ Այժմ եմ ամեն բան գլխի ընկնում։ Վերջապէս, որն ասեմ։ Մի անգամ էլ քաւոր Ապրօենց հարսանիքին՝ դիշերը գեօնդի ժամանակ հարսդ աչքովս չընկաւ, ստիպուած եղայ դուրս գալ, անցայ «աթարի ամրոցի» մօտով։ Նրա միջից փսփսոցի շշուկ լսեցի, բայց առանց կասկածանքի հեռացայ։ Շատ չանցաւ, այնտեղից դուրս եկաւ մէկը, յետոյ մի ուրիշը։ Սակայն խաւարի թանձրութիւնը խանգարեց ինձ ճանաչելու նրանց։ Իսկոյն հետեւեցի նրանց և կարողացայ միայն մէկին հասնել՝ դա Թաթուլն էր։ Երբ մտայ հարսանքատունը, հարսիդ այնտեղ գտայ։ Ախ, մարէ, շատ բան կայ... Բայց ես եմ միայն միամիտ եղել։

—Առանց աչքովդ տեսնելու, որդի, զրպարտում ես դու, զրպարտում։

—Աչքերս շատ բան են տեսել, սակայն հոգուս անմեղութիւնը իր անարատ աչքերովն էր ըմբռնում ու դատում այն ամենը։ Իսկ մ՚ոյժմ, այժմ, երբ...

Այդ ժամանակ լսուեց եկեղեցու զանգակների տխրահնչիւն զոգանջիւնը, որը ընդհատեց մօր և որդու խօսակցութիւնը։

—Գնանք եկեղեցի, Սահրատ, խօլերայի պատճառով մասունք են բերել։

—Մասունքն էլ, խաչն էլ, աւետարանն էլ սուտ են, սուտ, մարէ, երբ մարդիկ տակաւին գազանային հակումներով են շնչում։ Օ, այդ մարդիկը խախտել են իմ մէջ այն գերագոյն սէրը, այն խորախորհուրդ հաւատը, որը ես հոգուս անշեղ էութեամբ տածում էի դէպի մեր սրբութիւնները։ Եւ այդ մարդիկը իրանց կոյր, իրանց արենռուշտ կրքերին յագուրդ տալու բաւականութեամբ ոտնատակ տուեցին խաչի էլ, աւետարանի էլ, մասունքի էլ հրաշապանծ զօրութիւնը և նրանց նշանակութիւնը։ Սուտ չէ ասած թէ՝ խաչը տերը կանէ զօրաւոր։

—Տէր, դու ողորմաս,-մրմնջաց մայրը և ուղևորուեց դէպի եկեղեցին։

Խուռն բազմութեամբ քահանաները եկեղեցու լայնարձակ բակում թափոր էին կատարում։ Բազմութիւնը աղի արցունքներ էր թափում, որ Աստուած խղճայ իրանց և վերացնէ համաճարակի սարսափը իրանց միջից։

Վերջապէս, երբ թափորը վերջացաւ, ուսուցիչը, որը նոյնպէս քահանաների հետն էր, խնդրեց բազմութեանը մի փոքր ուշադիր լինել։

Սրա ձայնի հետ բազմութիւնը վայրկենաբար լռեց և ծունկ չոքեց։ Ուսուցիչը դարձաւ դէպի ամբոխը։

—Սիրելի ժողովուրդ, սրտի խորին դառնութեամբ այսօր առաջին անգամն եմ ձեզ այսպէս միաձայն համախմբուած տեսնում. ասացի՝ սրտի խորին դառնութեամբ, որովհետև ձեր այս ահաւոր բազմութիւնը պարզ ապացոյց է՝ թէ որքա՞ն ենք մենք տակաւին յետ կան-

գնած առօրեայ կեանքի ամենատարրական հարցերում, որոնց միմիայն ժողովրդի բանիմաց և գիտակցական վերաբերմունքով կարելի է ուղղել։ Այո, մենք այս խուռն բազմութեամբ այսօր երևան ենք հանել մեր դարաւոր խեղճութիւնը. մենք մեր այսօրուայ սուգ ու շիւանով հաստատում ենք մեր անճար տգիտութիւնը։ Թող տապալուեն, թող արցունքների գետեր կազմեն այստեղ ձեր զգայուն սրտերը, բայց դարձեալ անկարող կլինեն նրանք մազի չափ անգամ մեղմել ձեր վիշտն ու տառապանքը։ Այն տեղ, ուր միմիայն աղօթքն է յոյս ու ապաւէն կազմում, այնտեղ, ուր աղօթքի հետ ձեռք-ձեռքի տուած չէ ընթանում հացի ու ջրի պահանջ դարձած առօրեայ գիտակցօրէն կենցաղը, այնտեղ արցունքների վիշտ ու տառապանքի, լացուկոծի, սև սարսափի սոսկալի իրականութիւնն է իր դժգոյն ուրուականը երևան հանում, ուր մարդկութիւնը զեռունների նման փորսող է տալիս առանց ուշքի առնելու ոչ աջը և ոչ ահեակը և կուրօրէն կատարում է այն, ինչ բօպէի տակ թելադրում է իրան իր սիրտը։ Թող մեզանից ամեն մէկը յիշէ, որ երբ իւրաքանչիւր անգամ մեր նախնիների գլխին դիզուում էր թշնամու ճակատագրական օրհասը, նրանք խաչ ու աւետարանի հետ սուր էլ էին միացնում. նրանք աղօթքի հետ դիմադիր ոյժեր էլ էին երևան հանում։ Ցիշեցէք Աւարայրի հերոսներին. մէկը խաչն էր բարձրացրել, միւսը սուրը։ Իսկ մեր այսօրուայ թշնամին լոկ մեր տգիտութեան ծնունդն է, որը նոյնքան սոսկալի է, որքան մի խուժադուժ հակումներով առաջնորդուած բռնակալ—թշնամի։ Որքան ձեզանից ամեն մէկը համոզուած է, թէ իր արցունքներով կմեղմէ իր հոգետանջ, իր սրտամաշ դրութիւնը, այնքան էլ մանրազնին տոկունութեամբ պիտի ծունկ չոքէ գիտութեան առաջը, և վերջնիս հետ անխզելի կապերով հաստատուած՝ պիտի լինի թէ տունը՝ իր յարկի տակին, թէ դուրսը՝ իր առօրեայ նիստուկացի, արտ ու

ափի հետ և իր իւրաքանչիւր քայլը պիտի աշխատէ յարմարեցնել նրա պահանջների հետ, որոնցով և պիտի առաջնորդուի ամեն ժամ, ամեն րոպէ։ Թող ամեն ընտանիք, ամեն անհատ լինքն իրան համար բժիշկ դառնայ կեանքի բարդ խնդիրներում և յոյսը սրա նրա վրայ չդնելով, աշխատէ ամոքել իր վէրքերը։

Ցաւում եմ, որ ես եմ ստիպուած լինում ձեզ այս ասելու, այն ինչ ձեր կողքին կանգնած ձեր քահանաները, որոնց սեպուհ պարտականութիւնն է այս պատգամները ամեն ժամանակ հաղորդելու ձեզ։ Սակայն յուսով եմ, որ կգայ մի օր, մի ժամանակ, որ նրանք էլ այս խուլ ումութ վայրերում հոգի կառնեն և իրանց աղդու ու փրկարար խօսքերով կառաջնորդեն իրաց տարաբախտ հօտը...

Թափորը վերջացաւ։

Խառնիճաղանճ ամբոխը հետզհետէ ցրուեց։

III

Գիշեր էր։

Դեղ լեառը ամբողջովին կորել էր անթափանցելի խաւարի գրկում, որը քանի գնում սաստկանում էր և խորին գերեզմանական լռութիւնը տարածում այդ լերան շրջակայքում, որը մերթ ընդ մերթ ընդհատւում էր մի խուլ քչքչոցով։

Դա այն կարկաչահոս վտակն էր, որը սկիզբ առնելով այդ լերան ստորոտներից, անցնում էր, գնում հեռու ոռոգելու այդ աշխարհի քրտնաջան երկրագործի դաշտն ու արտորայքը։ Լերան ստորոտից փոքր ինչ հեռու այդ վտակից մի նուազ ճիւղ էր սկիզբ առնում։ Դա մեր գիւղի առուակն էր, որը ոռոգում էր մեր դար ու դաշտը։

Գիշերուայ այդ տագնապալի պահուն, եթէ հետեւէինք մեր առուակի ընթացքին, անշուշտ կարելի կլինէր նշմարել խաւարի մէջ երկու կանգուն ստուերներ, որոնք ստէպ-ստէպ կուզու պարզ անելով ասես ասում

էին ձեզ, որ իրանք գիշերային շրջիկ ոգիներ, ուրուականներ կամ լոկ ստուերներ չէին, այլ կենդանի մարդիկ, որոնցից մէկը իր կուզ ու պարզով աշխատում էր որքան կարելի է լաւ ջրել իր արտը, իսկ միւսը՝ մի ինչ որ փոս էր փորում։ Սրանցից մէկը՝ այն, որ ջրում էր արտը, անտեղեակ էր միւսի գործողութիւնից, այն ինչ միւսը՝ քաջ գիտէր, որ իրանից փոքր ինչ հեռու կայ մի ուրիշը, իր նմանը, որը նոյնպէս այդ բօպէին բահը ձեռքին ոչ թէ իր նման ինչ-որ խորհրդաւոր փոս փորելով էր զբաղուած, այլ՝ արտ ջրելով։ Այս վերջինը, երբ փոսը փորեց, վերջացրեց, դանդաղ քայլելով շարժուեց դէպի միւսը։

Նրա դէմքը, եթէ գիշերուայ այդ պահուն կարելի լինէր նշմարել, այլայլուած էր, որը մերթակի գունաթափւում էր և մեռելային կերպարանք ստանում, ապա յանկարծ մի ներքին ալէկոծութիւնից խռովւում և բոցավառ գոյներով ներկում նրա թխամորթ այտերը։ Նրա կրծքում ներքին խուլ կռիւը կատաղի կերպով առաջ էր գնում, որը պատրաստ էր իր դժոխային ամենայն դարշանքով վայրկենաբար ժայթքել։ Սակայն նա խորին զգուշութեամբ զսպում էր իր խռովայոյզ փոթորիկը և առաջ ընթանում դէպի միւսը-ջրողը և որքան մօտենում էր, այնքան առաւել նրա կրծքում կռիւը մրրկածուփ կերպարանք էր ստանում, և նա ամբողջ մարմնով ստէպ-ստէպ ցնցումներ էր գործում ու դողդողում։

Վերջապէս, նա հասաւ։

— Բարի երեկոյ, Թաթուլ աղբեր,—նրա դէմքի կնճիռները աւելի ևս բարդուեցին։

—Ա՜յ, Աստուծոյ բարին, Սահրատ աղբէր, խէր է այս պահուն. երևի որ և է դժբախտութիւն պատահած լինի։

—Ո՛չ, ոչ, Աստուած մի արասցէ. այլ էնպէս եկայ քեզ օգնելու. գիտէի, որ մենակ ես, ջուրդ պաշտպանող չկայ։ Որքան տանջուեցի, տեսայ, որ բոլորն ապարդիւն է, մտածեցի՝ աւելի լաւ է, դարձեալ առաջուայ

նման շարունակենք մեր աղբերութիւնը. որը ա-հա մի տարի է, չգիտեմ ինչու, քայքայուելու վրայ է,— այս ասելով նա ուսից վայր բերեց բահը, ապա դէպի քամակը տարաւ գօտիկից կախուած պարանը, որի մի ծայրը օղակ ունէր։

—Դէհ, փառք Աստուծոյ, որ զգաստացել ես. իհարկէ լաւ կ'լինի, որ շարունակենք մեր աղբերութիւնը։

Այս ասելով, նա դուրս եկաւ ջրի միջից և մօտեցաւ Սահրատին, և երկուսով միասին նստեցին առուակի եզերքին։

—Գործդ ինչու թողեցիր, Թաթուլ. քանի ժամանակը ձեռքումդ է՝ օգտուիր. քանի ջուր կայ՝ ջրիր, թէ չէ կարող է ջուրը պակասել։

Ես էլ ոտքերս կհանեմ և քեզ կօգնեմ։ Դէ՛հ, ինչի համար եմ բա եկել։

—Ո՛չ, ո՛չ, նստենք. քիչ է մնացել ջրելու։ Ես մի քիչ հոգեպահուստ ունիմ. մինչև խմենք, ջուրն իր բանը կտեսնի։

Այս ասելով, նա դուրս հանեց խուրջինից օղիի շիշը, պանիր ու հացը։

—Ի՞նչ լաւ պատրաստութիւնով ես եկել, Թաթուլ աղբեր, այո՛, լաւ է միշտ էդպէս պատրաստ լինել, զգոյշ լինել, բայց ես նոր եմ այդ հասկանում։

—Առ, անուշ արա,—այս ասելով Թաթուլը մեկնեց նրան օղին, որը՝ բաժակ չլինելու պատճառով՝ ածել էր մի պղնձեայ թասի մէջ։

—Տօ, հէր օրհնած, էդ ինչ է։

—Ա՛ռ, էսպէս լաւ է։

—Կհարբենք, գործներս կմնայ։

—Դարդ մի արա, աղբերդ գործ մոռացող չէ։

—Դէհ ողջ լինիս, Աստուած ամեն մի մարդի գործը առաջ տանի, նամարդին կորագլուխ կործանի և վերջներս բարի անէ,—այս ասելով խմեց, թասը դատարկեց ու տուեց Թաթուլին։

—Անուշ, անուշ, արժէ էսպէս ջուր անելը։

—Սաղ լին... բահ էս ինչ թունդն էր։

Թաթուլը թասը լցրեց։

—Սահրատ աղբեր, ողջ մնաս. քո կենացն եմ խմում, և տես ինչպէ՞ս եմ խմում։

—Անուշ, անուշ։

Թաթուլը մի չտեսնուած ագահութեամբ թասը դատարկեց ու նորից լցրեց։

—Անուշ, տո բաւական է, էդ ինչ ես անում։

—Ոչ, Սահրատ աղբեր, կիսատ եմ լցնում. մի վախեցիր, ախր ինչ անեմ. քեզ որ տեսնում եմ, աշխարհը գլխիս փուլ է գալիս. դարդերս թազանում են։ Էս զահրումարը մարդի սիրտ է բաց անում, էս մի տարի է՝ ես թունդ դոստացել եմ էս անտէրի հետ։ Համա քեզ ասեմ, լաւ բան է եարալու սրտիս համար։

—Ախր դու ինչ եարա ունես։

—Էհ, Սահրատ աղբեր, հենց եարան էնտեղն է, որտեղ մարդիկ ոչինչ չեն տեսնում։ Գալտնի եարան առաւել ևս զարհուրելի է. մարդ կասեմ, որ նրան դիմանայ։ Ես էլ չկարողացայ դիմանալ և էս անտէրի մէջ գտայ ինձ փրկութիւն։—Այս ասելուց յետոյ, նա կարծես թէ զղաց, որ իր լեզուն սկսեց բացուել և ամեն ինչ դուրս տալ, այդ պատճառով իսկոյն փոխեց խօսակցութիւնը.—դէհ ա՛ռ, ա՛ռ, քեզ ասում եմ, որ լաւ բան է։

Սահրատն առաւ և լռութեամբ դատարկեց ու թասը վերադարձրեց նրան։

—Վերջն է, էս էլ ինձ,—նկատեց Թաթուլը, դատարկելով թասի մէջ նոյն իսկ օղիի վերջին կաթիլը։

Մինչ դեռ այդ բոպէին ալկոհոլը աւելի սոսկալի էր դարձրել Սահրատի կրծքում բուն դրած վրէժխնդրութեան անյագ ծարաւը։ Եւ այնտեղ մղուող խուլ կռիւը մի աննկարագրելի մաքառման մէջ էր, որի կատաղի աղդեցութեան տակ նրա սիրտը բոպէ առ բոպէ արագաց-

նում էր իր բաբախմունքը և շնչարգելութեան անտիճանին հասցնում նրան ու ջղաձգական ցնցումների մատնում։ Շնորհիւ թանձր խաւարի սև շերտերին, Թաթուլը նկատել անկարող էր ոչ նրա հոգեկան երերումները և ոչ էլ բոցավառ դէմքի փոփոխակի գունաթափութիւնն ու ցնցումները։ Խաւարին յատուկ ալէկոծութիւնը տակաւառ տակաւ մօտեցնում էր Սահրատին նոյնպիսի խաւար գործունէութեան իրագործմանը, որն առաւել ևս բորբոքուել էր ալկոհոլի կաթիլների ազդեցութեան տակ։ Երկար նա պիտի երերուէր այդ հոգետանջ դրութեամբ, եթէ Թաթուլի ձայնը ուշքի չբերէր նրան։

—Սահրատ աղբեր, դու սաղ լինիս. ինչու ես սուս արել, արար աշխարհ էս անտէրի հետ դոստութիւն է անում, որ իր ցաւոտ սրտի լացը խլացնի և ուրախութիւն անի, իսկ դու սուս ես անում։ Տօ աղբեր, էս աւեր, էս քանդուած աշխարհը լացի աշխարհ է. պիտի աշխատել մի հոգեկան մխիթարութիւն, մի սրտի զուարճութիւն գտնել, ինչ գնով էլ որ լինին նրանք։ Ճիշտ է, հասարակական կարծիք կայ, հասարակական խաւերի ասեկոսէներ կան, բայց միթէ հասարակութիւնը իմ գլխի տէրն է։ Թքել նրա էլ, նրա կարծիքների էլ վրայ։

Սահրատը ցնցուեց և մի սուր շեշտով, որի մէջ որոշակի լսւում էր և մաղձ և դառնութիւն, նկատեց.

—Իսկ կրծքումդ պարտկուող խղճմտանքը։

—Էհ, ինչ կարող է անել։

—Նա հասարակական կարծիքից վտանգաւոր է. նա այս ու այն ասեկոսէներից հզօր է, և զօրեղ է, և առօրեայ կեանքում նրա ձայնը պիտի գերակշիռ դեր կատարէ։ Ով խլացնում է նրա ձայնը, նա զուրկ է մարդանուն կրելուց. նա ամեհի գազանի է նման. նա իր համար փորում է դժբախտութեան գերեզմաններ...

—Սահրատ աղբեր, —ընդհատեց նրան Թաթուլը. —ախր քեզ բան ասացի. էս անտէրի առաջ ոչ թէ

խղճմտանքն է պապանձու�, այլ աշխարհի, նոյնիսկ սոսկալի ոյժերը։ Եթէ կրծքումդ գլուխ կբարձրացնէ էդ ասածդ գազանը, դու էս անտէրը ձեռքդ վերցրու և մի քանի հատ իրար ետևից դատարկիր, այն ժամանակ ամեն ցաւ ու չօռից հեռու կ'լինիս և...

—Եւ կ'դաւաճանես թէ՛ խղճմտանքիդ, թէ ազգային սուրբ աւանդներին և թէ ընկերիդ նուիրական զգացմունքներին, չէ՞, և ամեն ինչ անսասան անպգաստութեամբ ոտնատակ կ'տաս, հա՞։

—Սահրատ աղբեր, մեր ի՞նչ գործն է շատ հեռու գնալ։ Մենք մեր ցաւերն ունինք. ես խմում եմ, թողնենք։

—Իսկ ես չ'եմ թողնի, ես խմել եմ և պիտի դատարկեմ, ահա...

Վերջին բառերի հետ նա մի կատաղի արագութեամբ դուրս բերեց գօտկից պարանը և իր հզօր ձեռքերի նոյնքան շտապ շարժումներով տարածեց նրան տիրող խաւարի մէջ։ Պարանը մի սուր շվեոց արձակեց, և նրա օղակը ընկաւ Թաթուլի պարանոցը։ Վերջինս ոչինչ չ'կարողացաւ նկատել և մինչդեռ պատրաստւում էր ոտքի թռչելու, պարանը զարհուրելի կատաղութեամբ ձգուեց, նա ծանր-ծանր խրխռոց արձակելով թնդացրեց տիրող խորհրդաւոր լռութիւնը և անկենդան փռուեց գետնի վրայ։ Օղիի չարաբաստիկ թասը մի սրտամաշ զրընգոցով վայր գլորուեց գետնի վրայ, և ամեն ինչ վերջացաւ։

—«Անաստուած», —մռմռաց Սահրատը։

Ապա բռնեց պարանի ծայրից, քաշեց աղքատ դիակը դէպի նախօրօք պատրաստուած գերեզմանը, մի արտասովոր փութկոտութեամբ նետեց նրան այնտեղ և բահի արագ-արագ շարժումներով թաղեց ու վերադարձաւ խուրջինի մօտ, վերցրեց այնտեղից հաց ու պանիրը և իր հաստատակամ քայլերը ուղղեց դէպի սահմանի լեռները։ Սակայն փոքր ինչ գնալուց յետոյ, դարձեալ

մամաց. «Անասունների հացը չի գնայ իմ կոկորդովս». —այս ասելով, նա նետեց նրան։ Ապա փոխեց իր քնթացքը դէպի գիւղը։ Մի ժամից յետոյ նա իր խրճիթումն էր։ Այստեղ նրա պառաւ մայրը և աղջիկը խոր քնի մէջ էին։ Նա խորին զգուշութեամբ մի պարկի մէջ տեղաւորեց փոքր ինչ հաց ու պաներ, վերցրեց իր զէնքերը, մօտեցաւ մօրը, նոյնպիսի զգուշութեամբ համբուրեց նրա ձեռքը, յետոյ դառնալով դէպի Սանդուխտը, երկար, շատ երկար ակնապիշ նայեց նրա մատաղ դէմքին, յետոյ կռացաւ, գրկեց նրա փոքրիկ գլուխը և հայրական սրտառուչ համբոյրներով տռեց և նրան իր հրամեշտի «մնաս բարևը»։ «Այսպիսի մայրեր, այսպիսի փոքրիկներ շատ կան այնտեղ՝ արցունքների աշխարհում, այն արիւնոտ հողի վրայ, եթե կերթամ, նրանց արցունքները կանչում են ինձ, իմ մընալն այլևս անկարելի է այստեղ»...

Եւ առանց ձայն ծպտուն հանելու դուրս ելաւ տանից ու կորաւ խաւարի մէջ...

## IV

Հետևեալ առաւօտ Թաթուլի քոյրը՝ Վարդանուշը նախաճաշ տարաւ եղբօրը։ Նա այնտեղ եղբօր փոխարէն գտաւ խուրջինը և բահը։ Երկար նա նստած մնաց առուակի մօտին և եղբօր ճանապարհը սպասեց։ Սակայն նա չկար ու չկար։ Այսպէս նա թերևս մինչև երեկոյ սպասէր եղբօրը. դէհ, քրոջ ջիգեարը յայտնի է։ Իզուր չէ ասած. «քոյրն ասաց. եղբայր ունիմ, եղբայրն ասաց՝ քոյր չունիմ»։

Վերջապէս, հարևան արտից ճաշուայ հաց տանելուց վերադարձաւ նրանց հարևանի կինը՝ Հռոմը։

—Քա՛ն, աղջի Վարդանուշ, քեզ ինչ է պատահել «ադրաստից» մինչև հիմի բանդ ես եղել. շատերը ճաշուայ հացից են վերադառնում, իսկ դու դեռ չես ուզում տուն գնալ,—նկատեց նրան Հռոմը։

—Խնամի, ախր էս քանի ժամ է եղբօրս եմ սպասում, բայց նա չի երևում, արտումը չէ։ Իսկ բահն ու խուրջինը ընկած են կօրու մէջ։

—Յիսուս ու Քրիստոս, աղջի, ինչեր ես խօսում, ուր պիտի գնացած լինի եղբայրդ. եթէ ջրի գնացած լինի, բահը պիտի վերցրած լինէր։ Չէ, էստեղ մի հանելուկ կայ. գնանք տուն, խաբար տանենք։

—Գնանք։

Այս ասելով, նրանք վերցրեցին Թաթուլի բահը ու խուրջինը և շտապեցին դէպի գիւղը։ Մի ժամից յետոյ ամբողջ գիւղը մի տարօրինակ իրարանցման մէջ էր։ Թաթուլենց բարեկամները այստեղ ընկան, այնտեղ զարկուեցին, իրանց դար ու դաշտը ոտքի տակ տուեցին, բայց Թաթուլի մասին մի բան իմանալ չկարողացան։ Երեկոյեան դէմ նրանք մտան և Դարբնենց տուն։ Այստեղ Վարդերը պատմեց, որ Սահրատն էլ չի երևում։ Երկու «աւետարանի եղբայրներն» ասես խօսք—խօսքի տուած՝ «բէ գիւման» անյայտացել էին, կամ թէ չէ մի նոր խաղ են խաղում իրանց բարեկամների գլխին։

Մի շաբաթ էլ, մի ամիս էլ, երկու էլ, երեք էլ նրանք տակն ու վրայ արեցին իրանց ամբողջ շրջակայքը, տեղեկութիւն տուեցին կառավարութեանը, սակայն ոչ իրանք և ոչ վերջինս մի բան իմանալ անկարող եղան։ Երկու «եղբայրները» կորած էին։

Ոչ ոք ոչինչ չգիտէր դրանց խորհրդաւոր անյայտանալու մասին։ Միայն մի մարդ փոքր ի շատէ գլխի էր ընկնում, թէ ինչ է կատարուել։

Դա մեր ուսուցիչ Սահնունին էր։

Շուտով ամեն բան էլ հետզհետէ սկսուեց մոռացուել։ Բարեկամները երկար, շատ երկար փնտրեցին-վերջապէս, դադարեցին։ Նրանք իրանց յոյսերը կտրեցին։ Ամեն ինչ իր սովորական դերի մէջ մտաւ։

Այդ օրից սևը եկաւ ու տարաւ խեղճ Վարդերին։ Օր-

ու գիշեր մայրական աղի արցունքը լուռ ու մունջ թափ-
ւում էր նրա աչքերից։

Նա կորցրել էր Սահրատի նման ասլան բալայի։
Նա անտէր-անտիրական մնացել էր լոկ ճակատագրի
կամքին։ Այդ դեռ ոչինչ։ Նա ողջ մարմնով դողում էր,
երբ մտածում էր, թէ վաղը, միւս օրը ինքն էլ գուցէ
մեռնելու լինի,-դէհ, ադամորդու վերջը մի բուռ հող է,
այն ժամանակ ինչ է լինելու թշուառ Սանդուխտի օրը։
Ով պիտի հոգս տանէ նրա մասին, ով պիտի խնամէ
այդ անմեղ արարածին։ Սակայն ճակատագիրը նրանից
առաջ էր իր հոգատարութիւնն ունեցել նրա վրայ։
Սահունին միակ մարդն էր մեր գիւղում, որ խղճի
անհուն կարեկցութեամբ աշխատում էր ամոքել իր
մերձաւորի արտասուքները և կարելին չափ մեղմել
թշուառների օրը։

Եւ Վարդերից առաջ նա վճռել էր իր օգնութիւնը
չխնայել նրան ու նրա թոռանը։

Ամեն առաւօտ նա իր առօրեայ աղքատիկ պաշա-
րից ուղարկում էր Վարդերին և յաճախ ինքն էլ անձամբ
այցելում էր նրան, մխիթարում ու սիրտ տալիս և
այսպէս ամեն ժամանակ։

Որպէս զի անկեղծ կարեկցական զգացմունքը խոր
արմատներ գցէ և ըստ այնմ աճէ ու զարգանայ իր մի
հատիկ փոքրիկ որդու սրտում, Սահունին կենսական
մշտօրեայ պիտոյքները Վարդերին իր որդու Վարազդա-
տի ձեռքով էր ուղարկում։

Այսպէս անփոփոխ սահում էին տարիներ։ Եւ
մատաղահաս Սանդուխտը իւրաքանչիւր առաւօտ
արշալոյսից առաջ միշտ իրանց բագի դրան հանդիպում
էր պատանի Վարազդատին, որը մի համեստ կապոց
ձեռքին, սիրալիր ողջունում էր նրան, ապա նոյնքան
սիրալիր կերպով յանձնում էր նրան այդ կապոցը ու
վերադառնում։

Նրանք այնքան ընտելացել էին օրուայ այդ ժամերին
որ երբ իւրաքանչիւր անգամ Վարազդատը մուտք էր

գործում Դարբնենց բադը, Սանդուխտը ժպիտը երեսին հանդիպում էր նրան, Եւ այսպէս անվերջ։

Սակայն տարիների ընթացքում Վարազդատը այնքան անխղճի և սերտ կապերով կապուեց Դարբնենց տան հետ, որ օրական մի քանի անգամ մտնել նրանց տունը յաճախ և ժամերով մնալ այնտեղ մի ջերմ պահանջ էր դարձել նրա համար։ Եւ նա անկարող էր դիմադրել իր ներքին այդ հզօր զգացմունքին, որը մի ահեղ հոսանքով մղում էր նրան Դարբնենց բադը։ Այդ տեսնում էր պառաւ Վարդերը, մի ինչ որ արտասաւոր փոփոխութիւն էր նկատում և Սանդուխտի առօրեայ նիստ ու կացի մէջ։ Նա հասկանում էր պատճառը, սակայն մտքովն անգամ չէր անցնում, որ իւրաքանչիւր ժամ, իւրաքանչիւր րոպէն բազմապատկում է այդ ջահիլների խառվայոյզ և հոգետանջ դրութիւնը ու սուր կերպարանք է տալիս նրանց այրուող կրծքի վէրքերին։

Մեծերը շատ անգամ տեսնում են սոսկալի իրողութիւնը, բայց չեն հաւատում իրանց աչքերին, երբ գործի դրութիւնը բարձր է իրանց խելքից։ «Մթթէ Վարազդատը և Սանդուխտս սիրահարուած են»—մրմնջում էր նա.— «ախր ինչպէս կարելի է, չէ՞ որ հայրը՝ մեր բարերարը, որդեգրել է իմ եղջերուին, էլ ինչպէս որդին կարող կլինի այդպիսի բան անել»։

Թշուառ պառաւը չգիտէր, որ սիրոյ համար չկան պատնէշներ, չկան արգելանքներ, որ նա խորտակում է իր ճանապարհի վրայ եղած անթիւ ու անհամար դիզուած ճակատագրական ամրութիւնները և այնպէս առաջ ընթանում։

Նուտով Վարդերի տարակուսանքը գրեթէ բոլորովին փարատուեց. նա սրտի խորին բերկրանքով նկատեց, որ Սանդուխտը կարդում է։ Վարազդատը, որպէս զի վարագուրէ իր յաճախակի այցելութիւնները Դարբնենց տունը, վճռել էր գրել-կարդալ սովորցնել Սանդուխտին և ամեն ժամանակ ազատ ել ու մուտ ունենալ նրանց տանը։

Այս դէպքում Սահունին ասել էր օրդուն իր համաձայնութիւնը։

Որդին ազատ էր։

Մէրը միշտ գիտէ մի ելք գտնել իր համար։ Նա քաղմահնար է։

Հայրը իւրաքանչիւր օր կրթում, դաստիարակում էր օրդուն, իսկ որդին միևնոյնը սովորեցնում էր իր սիրած, իր փայփայած արարածին։

Ով կարող էր դրանից առաւել երջանկութիւն տալ նրան։ Նրա սիրտը ժպտում էր անսահման սիրոյ գողտրիկ օրօրներով, և նա այդ ջերմ սիրոյ ներքոյ ասես երազների աշխարհում լինէր և անմահ ոգիների հետ եթերային թռիչքներ էր գործում և սաւառնում անհունութեան մէջ, և այդ երկնային անմեղ ոգին ամեն ժամ, ամեն րոպէ խօսում էր, քայլում նրա առաջ և իր նազելի, իր չնաշխարհիկ ձայնի անուշիկ շեշտերով դուրս բերում նրան ցնորքների այդ հմայիչ աշխարհից։ Նրա չքնաղ դէմքը օրէցօր զուարթանում էր և լուսատիպ կերպարանք ստանում, նրա հոլանի բազուկները, նրա նազելի հասակը, ծփան վարսերը երկնային դշխոյի տեսք էին տալիս նրան, երբ Վարազդատը գտնուում էր խորունկ հոգեզմայլ դրութեան մէջ, իսկ երբ անցնում էր այդ րոպէն, նա իր առաջ տեսնում էր մարդկային հանճարեղ հոգու կատարելագործուած մի տիպար, այստեղ նա դիցուհու տպաւորութիւն էր թողնում նրա վրայ։

Եւ Վարազդատը երջանիկ էր։

Իսկ Վարդերը զուարճանում էր իր աննման Սանդխտով։ Տարակուսանքը փարատուած էր։

Ծով վշտի դառնութիւնը մեռցրել էր նրա կրծքում երիտասարդական բոցավառ սիրոյ նուիրական յիշատակները, և նա չգիտէր, թէ ինչ է կատարուում իր շուրջը։

Ծերութիւնը սառնութիւն է, նա ցուրտ է։

Այսպէս էր և Վարդերը։

Մինչ այն աստիճան Վարազդատը առաջ խաղաց իր երջանկութեան նաւի վրայ, որ գիշերային այցելութիւնների էլ ելք գտաւ։ Եւ յաճախ թէ մեր երկրի գեղաժիծաղ արևը և թէ վախլուկ լուսինը փոփոխակի վկայ էին լինում այդ սիրահարների այցելութիւններին։

Օ՜, որքան խորախորհուրդ գաղտնիների, որքան արիւնոտ անցքերի են նրանք անզգայ ղիտող հանդիսանում և դեռ պիտի հանդիսանան։

Եւ այս ոչ առաջինն էր և ոչ վերջինը։

ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱՏԷ

---

# ՀԱՐԱՒԻ ԱՅՐԻՆ

Այնտեղ, ուր Վանայ, Գեղամայ ծովեր
Լալիս են երկնի սեւ ամպերի հետ,
Այնտեղ, ուր Եփրատ, Արաքս մայր գետեր
Երգում են տխուր, սրտառուչ ողբերգ,

Այնտե՞ղ է ապրում վաղուց չարատանջ
Մի խեղճ, բայց հզօր, դժբախտ այրի կին.
Իր նախկին փառքը կորցրած, բազմատանջ
Երկիրն է գրկել Հարաւի այրին...

Մեռած իր փեսան, նրա աչերից
Քամում է արեան, լացի առուներ.
Այն հարաւային թագը իր գլխից
Խլեցին, տարան սէգ վայրենիներ...

Բայց նա պինդ գրկած երկրի, մոխիրներ
Այն մոխրի տակից հանում է կայծեր.
«Օ՜, կայծեր, ձեզնից սիրտս է վառում
«Ես պիտի ապրեմ... ծայնում է կարմրում...

Բայց ահա գլուխ ծռեց երբեմն էլ
Նա լաց է լինում, թէ ինչպէս ընկաւ.
Ինչպէս դրախտի ծովեր ու գետեր
Արնով ներկուեցին,—խոր վիշտը նկաւ...

Տանջուած, հիասթափ մրմունջն է հնչում..
Ինչպէս անցորդներ նուրբ անպատուեցին.
Ինչպէս զոհ եղած իր երկրի սիրուն,
Պատիւը ծախեց, կպաւ իր երկրին..

Շատ հին է այրին. բայց երբ կանգնում է՝
Աչքերը վառուած երկնքի բոցով,
Կարծես դեռ կոյս է, որ պէտք է ապրէ
Մի զալոց կեանքի նորոգ արեւով...

Ց. ԽԱՆԼԱՐԵԱՆՑ

# ՍՈՍԿԱԼԻ ՊԱՏԻԺ

Աֆրիդների ծեր զօրավարը գերի տարուեցաւ։ Աղատ եռնորդու բազկից շատ թշնամի էր ընկել։ Ոչ ոք այդպիսի կշռող աչք չունէր. ոչ մի թուր այդպիսի հզօր բազուկ չէր տեսել և երբէք այդպիսի խիզախ հեծեալ տեսնուած չէր։ Քաջարի զինուոր էր նա և շատ բան էր անցել նրա գլխով։ Գատի՞ քեզ, լեռների կորիճ արծիւ։ Այնտեղ հեռուում, ուր կապուտկին են տալիս լեռները, դառնագին պիտի ողբան քեզ քո ընքոյշ դստերը։ Վշտերի ամպը պիտի սքօղէ նրանց խոշոր սևորակ աչերը։ Մետաքսէ ծածկոցով նրանք պիտի սրբեն իրենց բիւրեղափայլ արցունքները։ Ալլահի անունն աղաղակող նրանց բարձրապոչ ողբերը պիտի հուր բորբոքեն նորատի քաջարանց մարտիկների սրտում. իսկ վրէժխնդրութեամբ լի կրակոտ հայեացքը պիտի մղէ նրանց դէպի արնալից ճակատամարտը։ Անելագար խիզախները առիւծների նման պիտի յարձակուին թշնամու շարքերի վրայ և այն ժամանակ վայ ազատասէր ժողովրդի գերիչներին։ Քո մահն, ով զօրավար, վրէժով պիտի գրգռուի և դրախտական պարտէզներում հանգչող քո վեհ հոգին գեղանի հուրիների հմայանքը պիտի վայելէ...

Ներքևում, հովտի մէջ թշնամու բանակում տառապում է քաջարի զօրապետը։ Հեռու հայրենիքից ու բարեկամներից, նա իւր առանձնութեան մէջն իսկ պահպանեց հոգուվեհութիւնը։ Նոյն իսկ գիտակցութիւնը սոսկալի մահուան, որ չարախինդ բերկրութեամբ պատրաստում էին նրա համար գոռող թշնամիք, ամենևին չ'ի սարսեցնում նրա անվեհեր սիրտը։ Նա պաղարիւնութեամբ և վեհութեամբ ընդառաջ պիտի ելնի նոր օրուայ առաջին շողերուն և՝ հաստատուն քայլերով կառափնատեղը պիտի գնայ և՝ վերջին վայրկեաններում նա պիտի՝ մտածէ սիրուն հայրենիքի վրայ և՝ ջերմագին աղօթքով պիտի խընդրէ մեծ Ալլահին խորտակել անհատներին։

Հրաշալի լուսնակ գիշեր։ Գերեալ զօրապետի վրանի առաջ միապաղաղ քայլերով շրջում են պահակները։ Լռութիւն է չոր

կողմը։ Ցոգնավաստակ—բանակը ննջում է խոր քնով։ Մերթ ընդ-մերթ արթուն պահապանների ձայներն են հնչում միայն։ Մերթ արագաթև զեփիւռի շունչն է թեթևակի շշնչում ծառերի տերևների մէջ, մերթ հեռուից ինչոր անորոշ ձայներ են գալիս և ամեն ինչ վերստին լռում է։

Գլուխը լայն հսկայական կրծքի վրայ խոնարհած նստած է վրանում մեծ ափրիտը։ Անցեալի պատկերները շարք շարք կանգնում են նրա երևակայութեան առաջ։ Պայծառ արև օր։ Կայ-տառ մանուկների խումբ։ Մուգ դէմքերի վրայ վարդն է ծաղկել։ Շուրջդ լեռներ ու լեռներ, իսկ այնտեղ՝ ներքևում, ասում են, չար թշնամին է ապրում, որ ամբողջ Հնդկաստանը նուաճեց։ Մանուկներն ուրախանում, խնդում են, արձագանքը լեռների վրայ է սփռում ապագայ զինուորների զիլ արծաթահնչիւն ձայները։ Ահա մի խոշոր տղայ մի սիրունիկ աղջկանից խլեց նրա ժապաւէնը։ Փքուեցան աղջկայ շրթունքները, ուրախ դէմքը վայրկենապէս մռայլուեցաւ և վիրաւորուածը բարձրաձայն հեծկլտաց։ Ցանկարծ բոյով թիկնաւէտ մի տղայ, որ ինքը զօրավարն էր, վրայ է տալիս վիրաւորողին, մի հարուածով վարձատրում նրան և ժապաւէնը խլելով յանձնում է վշտա-ցած աղջկան։ Ապա տեսնում է նա թէ ինչպէս փոքրիկ աղջիկն աճեց, ուռճացաւ և բարձրահասակ, գեղակազմ օրիորդ դարձաւ։ Այժմ նա նրա հարսնացուն է։ Ամէնքը նրան են նախանձում, ամէնքի աչքը գեղանի Ֆատմայի վրայ է յառած և մէկից շատ աւելի յանդուգն քաջարի կտրիճներ նրա համար հերոսական փառքի ետևից ընկնելով իրենց անհանգիստ գլուխները գետին դրին։ Բայց նա սիրում է միայն իւր աննման Ռուստէմին. նա և քաջ է, և ուժեղ է ամենից և նա երբէք չի մոռանայ թէ ինչ-պէս մանկութեան օրերում Ռուստէմը միշտ պաշտպանում և նոյն իսկ խաղում էր նրա հետ։ Եւ հնօրեայ ափրիտը նոր պատ-կերներ է տեսնում։

Ահա նա՝ ընտանիքի բաղդաւոր հայրը։ Նա հինգ դուստր ունի. նրանք նրա պարծանքն են, ուրախութիւնն են և միակ սփոփանքը և բոլորն էլ հատընտիր գեղեցիկ։ Ապա տեսնում է նա ինքն իրեն մշտական պատերազմներում այն անհաւատների դէմ, որ Հնդկաստան եկան և այժմ անդուսպ հոսանքով դիմում են դէպի նրա հայրենի լեռները։

Նա վեր բարձրացրեց գլուխն ու նայեց շուրջը։ Ցնորքնե-րը ցնդեցան։ Շուրջը վրանի պատերը, իսկ վրանի այն կողմը լոկ թշնամին։ Իրականութեան անմխիթար գիտակցութիւնից

ցնցուեց զօրապետը և մի կաթիլ արցունք թաւալեց դէպի արծաթափայլ մօրուսը։ Փորձուած ռազմիկի սիրտը կսկիծով սեղմուեցաւ կրծքի մէջ և անպատմելի ցաւ զգաց նա անդարձ անցեալի այն չքնաղ պատկերների առաջ։ Սակայն անյողդողդ կամքը յաղթանակ տարաւ սրտի վայրենական թուլութեան դէմ։ Ատելութեան անշէջ հուրը փայլատակեց նրա կրակոտ աչքերում։ Նրա ամբողջ պատկերը վեհութիւն էր բուրում։ Այո, նա կ'մեռնի որպէս իւր ժողովրդին արժանի զաւակ. նա ցոյց կ'ը տայ այս վատահոգի շիկահեր շներին, թէ արհամարհում է նրանց չարութիւնը։ Թող համոզուին նրանք թէ հեշտ չէ ոյժով ընկճել ազիրիային, որին կարելի չէ ոսկով գնել։

Ահա աղօթարանը բացուեցաւ. լուսանում է օրը։ Ցանկարծ անակնկալ կերպով բացուեցաւ դուռը և վրան մտան զինեալ սիպայներ։ Հպարտութեամբ բարձրացրեց զօրապետն իւր ալեզարդ արծուահայեաց գլուխը և վեհաբար ուղևորուեցաւ դէպի պատժավայրը։

Լայն հրապարակի վրայ, որին շուրջ բոլորել էին սիպայների երկար շարքերը, դրուած էր լցրած թնդանօթը։

Նրա ահագին լայն բացուած բերանը դիտմամբ ուղղուած էր դէպի այն լեռները, ուր ամրացել էին կամակոր ազիրիդները։

Կալանաւոր զօրագլխին անմիջապէս թիկունքից կապեցին հրազէնի բերանին։ Քոմֆտի կեցած կարմիր համազգեստով սպան ժամացոյցը ձեռքին բռնած, վայրկեաններն էր համարում։

Սոսկալի տաղտուկ անհունութիւն, ահեղ տանջանք, գերազանց քան հաւատաքննութեան բոլոր հնարները։

Եւ տիրող չարագուշակ խաղաղութեան գրկում յանկարծ որոտաց զօրավարի ահեղ ձայնը։

— Ալլահի անէծքը ձեզ վրայ, նենգաւոր, ստոր մարդիկ. և դուք ուզում էք ոսկով գնել ազատութիւնն այն ժողովրդի, որին վայրենի էք անուանում։ Ո՛չ, մենք ձեզնից առաւել քաջարի ենք, անարգ չարչիներ։ Մենք ազնուաբար ենք կռուում և գերիներից վրէժ լուծելու զազիր գործին չենք դիմում։ Ամենահզօր Ալլահը ձեզ խստութեամբ կպատժի։ Կգան օրեր երբ հեռու աշխարհից քաջարի զօրք կարշաւի և ձեզ խայտառակաբար ի փախուստ դարձնելով, կազատի և մեզ, և՝ դժբախտ Հնդկաստանը, որը վաղ ժամանակներից հեծում է ծանր լծի տակ։

Զայրոյթով եռաց բրիտանական գոռոզ սպայի խոցուած սիրտը։ Հնչեց բեկբեկուող հրամանը և հլու ոմբաձիգ սիպայը պատրոյկը դրեց։

Թնդաց խլացուցիչ հարուածը և ամբողջ հրապարակը ծխով ծածկուեցաւ։ Մի քանի վայրկեանից յետոյ Թարմ հողմի հոսանքը ցրուեց ծուխը և հարիւրաւոր հայեացք բևեռեցան հրազէնի վրայ։ Այլևս չկար աֆրիդների փառաւոր զօրավարը, բայց նրա հզօր հոգին սաւառնեց այնտեղ, ուր չկան «ցաւք և հեծութիւնք»։

Թարգմ. ԲԵՆԻԿ Վ.

*
* *

Այս տարին էլ եկաւ, անցաւ,
Մեզնից հեռո՞ւ սլացաւ.
Լացով եկաւ, արի՞ւն բերեց,
Խորունկ վէրքեր մեզ թողեց։

Քանի՞ այսպէս սե՞ւ տարիներ
Մեր կեանքովը անցնում են.
Ո՞րքան արդեօք կարմիր օրեր
Մեզ դժողքի մատնում են։

Կարծես լացող, խղճուկ ազգին
Միշտ վիճակուած է տանջուել.
Կարծես նրա կնճռո՞տ ճակտին
Արեան կնիք դրոշմուել։

Դու էլ եկար, ա՜յ նոր տարի,
Լացո՞վ եկար, չա՞ր տարի
Աչքից ընկած, դարդոտ երկրում
Պանծալի հիւր չես լինի։

Ա՜խ նո՞ր տարի, գնա՛, անցի՛ր
Մեր հայ երկրից հեռացի՞ր.
Մեր դաշտորայք արի՞ւնոտ են,
Մեր սրտերը դարդոտ են։

Հայ երկնքի մութ կամարում
Էլ չերևես, սե՞ւ տարի.
Մեր հայ եղբարց խոցոտ ծոցում
Դու տեղ չունես, սե՞ւ տարի։

Արագ թռի՛ր, դէ՞հ սլացիր
Դժողք դարձած հայ երկրից.
Լայն թեւերիդ հառաչք բարձիր,
Քար աշխարհին ցաւ պատմիր։

Տ. ՇՈՒԼՈՒԵԱՆՑ

# ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԷԼՍ

*Կարլ Կաղուցկու*

Տասը տարի սրանից առաջ՝ 1895 թ. օգոստոսի 5 ին (ն. տ.) գերմանական բանուորական կուսակցութիւնը և ընդհանրապէս ամբողջ աշխարհի բանուորական կուսակցութիւնները կրեցին մի ծանր կորուստ—վախճանուեց Ֆրիդրիխ Էնգէլսը, որը Կարլ-Մարկսի հետ միասին հանդիսանում է հիմնադիր արդի գիտական սոցիալիզմի։

Այս մարդի ամբողջ կեանքը նուիրուած է եղել բանուորական դասակարգի ազատութեան պայքարին։ Նա և Կարլ-Մարկսը կանգնել են ներկայ բանուորական շարժման որորանի մօտ, նրանց ճակատագիրը անխզելիօրէն կապուած է եղել միջազգային սոցիալ-դէմօկրատիայի ճակատագրի հետ։ Նրանց ջանքերի արդիւնքն եղել են այն գիտական հիմունքները, որոնց վրայ կառուցուած է արդի սոցիալիզմը իր բոլոր առանձնայատկութիւններով, որոնք տարբերում են նրան ուտոպիական [1]) (ցնորական) սոցիալական զառանցանքներից։

Նրանք՝ երկուսը բանուորական դասակարգի այն ուսուցիչներն էին, որոնք յայտնագործեցին հասարակական կեանքի երևոյթների ներքին կապը։ Նրանք էին անխոնջ մարտիկները աշխատաւոր ժողովրդի իրաւունքների համար։

Բնութիւնը օժտել էր Էնգէլսին ամենալաւ պարգևներով։ Նա տուել էր նրան հազուագիւտ ընդունակութիւն դէպի թէօրէտիկ մտածողութիւնը, նրա ամենագէտ խելքին օտար էր ո և է միակողմանիութիւն։ Նա ուսումնասիրում էր նիւթական ուժերը, որոնց շարժում են մարդիկ, և միևնոյն ժամանակ պարապում էր փիլիսոփայական բարձր հարցերով։ Նա գրում էր քաղաքական բրոշիւրներ և միևնոյն ժամանակ ուսումնասիրում

---

[1]) Մի գիտութիւն, որ զբաղւում է վերացական մեծութիւններով։

էր մատեմատիկան, ֆիզիկան [3]), քիմիան [4]), պատերազմի պատմութիւնը։ Նա հետապնդում էր կապիտալիստական արտադրութեան ձևի գաղտնիքները և նա էլ ուսումնասիրում էր գերմանական և ֆրանսիական բանակների տակտիկան [5]) 1870 թուականի կռուի ժամանակ։ Նա նկարագրում էր Ռուսաստանի քաղաքական և տնտեսական դրութիւնը այնպէս, որ կարծես ինքը մեծացել և սնուել էր այնտեղ, նա էլ ուսումնասիրում էր մարդկային սկզբնական պատմութիւնը։ Գործնական քաղաքականութիւնը հետաքրքրում էր նրան ոչ պակաս, քան մտածողութեան բարձր խնդիրները (պրոբլէմները)։ Բոլորը, ինչ որ նա անում էր, խօսում, գրում, մտածում,—այս բոլորը նուիրուած էր տանջուող և կռուող մարդկութեան։ Նրա կեանքի պատմութիւնը ներկայացնում է իրանից վերջին յիսնամեակի բանուորական շարժման պատմութիւնը։

Ներքևում մենք տալիս ենք Ֆրիդրիխ Էնգելսի կենսագրութիւնը, գրուած կարլ Կաուցկու կողմից 1880 թուի աշնանը։

---

Ֆրիդրիխ Էնգելսը ծնուել է 1820 թ. նոյեմբերի 28-ին Բարմէնում։ Նա գործարանատիրոջ որդի էր։ Նրա հայրենիքը—Ռէյնեան նահանգը—թէ գործնական և թէ քաղաքական տեսակէտից ներկայացնում էր Գերմանիայի ամենածաղկեալ մասը։ Անգլիայի և Ֆրանսիայի մերձաւորութիւնը մի կողմից, ածխային և երկաթեայ հարստութիւնները միւս կողմից,—այս բոլորը ծնեցին Ռէյնեան նահանգում աւելի, քան որևիցէ Գերմանիայում խոշոր արդիւնաբերութեան հզօր աճումը և յեղափոխական բուրժուազիայի [6]) դէպի ֆէօդալիզմը [7]) ունեցած թշնամօրէն տրամադրութիւնը։

Այս հանգամանքները ծնեցին, ի հարկէ, աճումն պրոլէտարիատի, [8]) որը արդէն կրում էր իր մէջ առանձին դասա-

---

[3]) Ֆիզկան ուսումնասիրում է բնութեան երևոյթների ներքին կապակցութիւնը և նրա օրէնքները։ [4]) Քիմիան զբաղւում է առարկաների բաղադրիչ մասերի ղնմատը։ [5]) Մի որև է գործի վարելու ձևը. [6]) շահագործող դասակարգը, որը ապրում է և իր դրամագլուխը (կապիտալը) աճեցնում ուրիշի քրտինքով, կոչւում է բուրժուազիա։ [7]) Ֆէօդալիզմը—միջնադարեան աւատական հողատիրութեան եղանակն է, որը մինչև հիմայ էլ կարելի է նկատել օր. Պարսկաստանում։ [8]) իրաւազուրկ, շահագործուող դասակարգ, որը, զրկուած է և սեպհականութիւնից։

կարգային ինքնաճանաչման սաղմերը։ Այս բոլորի վրայ պէտք է աւելացնել և այն, որ Ռէյնեան նահանգը ընդհանրապէս զերծ չէր յեղափոխական զգացմունքներից և սովորութիւններից։

Բայց չէ՞ որ նա 18-րդ դարի վերջերից և 19-րդի սկզբից՝ ամբողջ երկտասնեակ տարիների ընթացքում գտնուում էր Ֆրանսիական յեղափոխութեան ազդեցութեան տակ և մասամբ էլ Ֆրանսիացիների ձեռին։ Այդ պատճառով մեծ յեղափոխութեամբ ծնուած աշխարհահայեցողութիւնը և իրաւունքը իրանց կատարեալ ծաղկման մէջ էին Էնգէլսի պատանեկութեան օրերում։

Բայց այդ շրջանը նաև գերմանական փիլիսոփայութեան ծաղկման շրջանն էր։ 18-րդ դարի ժողովրդական յեղափոխութիւնը, որ արտայայտուեց Անգլիայում արդիւնաբերական յեղափոխութեան ձևով, Ֆրանսիայում քաղաքական յեղափոխութեամբ, Գերմանիայում արտայայտուեց փիլիսոփայական իդէաների [9]) շրջանում։

Իրա ամենարարձր կէտում նա հասաւ Հեգելի փիլիսոփայութեան մէջ։ Շատ յաճախ դուք լսում էք այն կարծիքը, որ իբր Հեգելի փիլիսոփայութիւնը հանդէս եկաւ որպէս յետադէմ նմանողութիւն այն ամենի, ինչ որ հին էր և ինչ որ արդէն վերջացել էր։ Բանը նրանումն է, որ Հեգելը ասում էր՝ «ինչ որ իրական է—խելացի է, ինչ որ խելացի է—իրական է»։ Այն կարճատես պարոնները, որոնք տեսնում էին իրանց ժամանակի միայն հնացած և վերջացած քաղաքական և հասարակական ձևերը, կարծում էին, որ՝ ըստ Հեգելի՝ այդ ձևերն են միայն խելացի։ Նրանք մոռանում էին, որ նորի սաղմերը գոյութիւն ունէին հին մնացորդների հետ հանդերձ։

Հեգելեան փիլիսոփայութիւնը իր էութեամբ ոչ միայն պահպանողական չէր, այլ և խիստ յեղափոխական էր։ Բայց նա յեղափոխական էր ոչ թէ ոստիկանական, այլ փիլիսոփայական մտքով—նա խօսում էր գոյութեան մշտական փոփոխութիւնների և յեղաշրջումների մասին, նա խօսում էր մշտական նոր հակադրութիւնների ծագման և դրանց յաղթանակի մասին հին հակադրութիւնների դէմ։ Եւ այդ ուղղութեամբ հեգելեան փիլիսոփայութիւնը ներգործում էր ժամանակակիցների վրայ։

Հենրիխ Հէյնէի, Ֆէյէրբախի, Մարկսի և միւսների հետ միասին Ֆրիդրիխ Էնգէլսը գտնում էր Հեգելի փիլիսոփայու-

---

[9]) Իդէա — գաղափար։

թեան ուժեղ ազդեցութեան տակ։ Բայց այն գործնական և թէորէտիկ տնտեսագիտական չկոլան, որ անցաւ Էնգէլսը, խնամակալեց և այն միտքը, թէ հեգելեան փիլիսոփայութիւնը չմնաց ընդիմախօսութեան (դիալեկտիկա) խաղալիք, այլ գիտական հետազօտութեան միջոց, նա հոգ տարաւ, որ դա (հեգ. փիլ.) դառնայ մի մեղօթ՝ իրապէս գոյութիւն ունեցող պայմաններից շինելու նոր զաղափարներ, և ոչ մի այնպիսի մեթօդ, որով գաղափարներից շինուէին իրական պայմաններ։ Սկզբում Էնգէլսը ցանկանում էր պարապել համալսարանում տնտեսական գիտութիւններով, ուստի և Բարմէնի բէալական դպրոցը աւարտելուց յետոյ ընդունուեց Էլբերֆէլդի գիմնազիան։ Բայց ընտանեկան հանգամանքները և վաղ զարթնած քաղաքական գաղափարները, որոնք ատելի դարձրին նրան չինովնիկական ասպարէզը, ստիպեցին նրան աւարտելուց մի տարի առաջ թողնել գիմնազիան և պարապել առևտրով։ Աշխատելով մի առևտրական տան մէջ Բրեմէնում (1838-թուից), նա միևնոյն ժամանակ պարապում էր փիլիսոփայութեան ուսումնասիրութեամբ, նա իր փիլիսոփայական աշխատութիւնները չը թողեց նոյնպէս և յետագայում, երբ ծառայում էր Բերլինում որպէս կամաւոր զինուոր և երբ յետոյ աշխատում էր Մանչեստրը (1842-1844 թ.) գործարանում, որի մէջ իր հայրը ընկեր էր։

Անգլիայում՝ կապիտալիզմի հայրենիքում՝ նրան ներկայացաւ կապիտալիստական ձևի արդիւնաբերութեան մեքենայութիւնը։ Այստեղ աւելի քան ուրևիցէ նա պարզ կարող էր ըմբռնել պրոլէտարիատի դրութիւնը, նրա տանջանքները և նրա պատմական ապագան։

Նա խիստ հետաքրքրուեց բանուորական հարցով, և յուսով սկսեց սրտանց ուսումնասիրել թէ այն ժամանակ տիրապետող ուտոպիական (ցնորական) սոցիալիզմը և թէ բանուորական շարժումը, որը հեռու էր սոցիալական (ընդհանրական) լինելուց։ Բայց նա չը մնաց լոկ հանդիսատես հասարակական կեանքի այդ հոսանքներին։ Նա սկսեց աշխատակցել չարտիստների [10]) կուսակցական օրգանին «Nortern Star» («Հիւսիսային Աստղ») և

---

[10]) Չարտիզմը անգլիական բանուորական շարժումն էր, որի նպատակն էր մասնակից անել չորրորդ դասակարգին քաղաքական իրաւունքներին և բարուոքել իրանց տնտեսական-սոցիալական դրութիւնը. այդ անունը «չարտիզմ» գոյացել է իրանց ծրագրից «Chorta», որ անգլիերէն արտասանւում է «չարտէ»։

Ռոբերտ Օուէնի «New Moral World» («Նոր բարոյական աշխարհ») լրագրին։

Վերադառնալով Գերմանիա, նա այցելեց Մարկսին Փարիզում, որի հետ նախօրօք գրագրութիւն ունէր։ Այդ ժամանակից և սկսուեց նրա բարեկամութիւնը, որ այնքան մեծ դեր կատարեց նրանց երկուսի կեանքի մէջ։ Նրանց աշխարհահայեցողութիւնները այնքան միանման էին, որ նրանք վճռեցին միասին մի գիրք գրել, որի մէջ պէտք է պարզորէն հասկացուէր իրանց աղանդը նորածին հեգելեան շկոլայից։

Հեգելականութիւնը, ինչպէս և ամբողջ գերմանական փիլիսոփայութիւնը, իր սկզբնաւորութիւնը վերցնում էր այն նախադրանից, թէ գաղափարները (իդէաները) առաջանում են ոչ թէ իրականութեան երևոյթների անդրադարձմամբ, այլ վարում են միանգամայն ազատ գոյութիւն, որ գաղափարների զարգացումը հիմք է ծառայում իրերի, երևոյթների աճման։ Դրա դէմ կանգնեցին Մարկսը և Էնգէլսը։ Նրանք չը մերժեցին Հեգելի ընդիմախօսական մեթոդը, այլ տապալեցին նրա փիլիսոփայութեան դոգմատիքական (դաւանաբանական) շինուածքը։ Վերոյիշեալ ընորոշ իդէօլոգիայի [11]) փոխարէն նրանք ընդունեցին մատերիալիզմը [12])։ Նրանք վճռեցին ընդունել իրական աշխարհը իր այնպիսի դրութեամբ, որպէս նա կը ներկայանար ամեն մէկին, որը կը մօտենար նրան առանց վերցրած իդէալական կարծիքների։ Նրանք վճռեցին դէն շպրտել իդէալիստիքական նախապաշարմունքները, որոնք առնչութիւն չունեն իրական երևոյթների հետ։ Դրանումն է կայանում մատերիալիզմի էութիւնը։

Առաջին անգամ նոր ընդիմախօսական մատերիալիզմը հանդէս եկաւ «Սուրբ ընտանիք, կամ քննադատութիւն քննադատական քննադատութեան» գրքում։ Այդ գիրքը գրել է 1844 թուին գլխաւորապէս Մարկսը և լոյս տեսաւ 1845 թուին Ֆրանկֆուրտում։ Ըստ իր բովանդակութեան այդ գիրքը պէտք է համարել պատմա-փիլիսոփայական։ Տնտեսական հարցերը այդտեղ շօշափւում են շատ սակաւ չափով։

Բայց յետոյ Մարկսը սկսեց աւելի և աւելի խորասուզուել տնտեսական կեանքի առաջադրած հարցերի ուսումնասիրութեամբ, իսկ Էնգէլսը 1845 թուին շարադրեց իր տնտեսագի-

---

[11]) Մտածողութիւն։ [12]) Մատերալիզմ — նիւթապաշտութիւն։

տական հետազոտութիւնների հետևանքները իր յայտնի գրքում «Բանուոր դասակարգի դրութիւնը Անգլիայում։»

Դեռ առաջ Էնգելսը գրում էր յօդուածներ տնտեսական հարցերի վերաբերմամբ, բայց առաջ նրա ծանօթութիւնը քաղաքական տնտեսութեան [13]) հետ բաւական մակերևոյթային էր, և ուստի այդ յօդուածներում կարելի է գտնել մի քանի սխալներ։ Բոլորովին այլ կերպարանք ունի նրա «բանուոր դասակարգի դրութիւնը Անգլիայում» գիրքը։ Մինչ այդ ժամանակ Էնգելսը ձեռք բերեց արդէն քննադատական վերաբերմունք ինչպէս դէպի չարտիզմը, նոյնպէս և դէպի օուէնիզմը—հիմայ նա պահանջում է միաւորումն այդ երկու հոսանքների ի մի ուժեղ և ընդհանուր շարժումն։

Անգլիական ուտոպիական (ցնորական) սոցիալիզմը, օուէնիզմը [14]) լսել անգամ չէր ուզում բանուորական շարժման, ընդհարումների, համքարական ընկերակցութիւնների, քաղաքական գործունէութեան մասին։ Իսկ այն ժամանակի բանուորական շարժումը Անգլիայում, չարտիզմը դուրս չէր գալիս գոյութիւն ունեցող տնտեսական սիստէմի սահմաններից—չարտիստների մեծամասնութեան համար ընկերակցութիւնների լիակատար ազատութիւնը, ընտրողական իրաւունքը, նորմալ բանուորական օրը հանդիսանում էին լոկ իրանց դրութեան կազմի բարւոքման միջոցներ, մի այլ կազմի մասին նրանք չէին էլ երազում։

Սրա դէմ Էնգելսը յայտարարում էր, որ նախ և առաջ սոցիալիզմը պէտք է ձուլուէր չարտիզմի հետ, և որ միայն այն ժամանակ պրոլէտարիատը կը դառնայ տիրապետող դասակարգ Անգլիայում։ Բայց սոցիալիզմի և բանուորական շարժման ձուլումը ամենաէական, հիմնական գիծն է ժամանակակից գիտական սոցիալիզմի մէջ։ Եւ որովհետև «բանուոր դասակարգի դրութիւնը Անգլիայում» գրքի մէջ այդ ձուլման անհրաժեշտութիւնը առաջի անգամն է յայտնուած, ուստի և այդ գրքի երևան գալու ժամէնտից և սկսւում է գիտական սոցիալիզմի դարագլուխը։

Այդ գրքի հիմունքների մէջ կան «Միջազգային Հրավար-

---

[13]) Քաղաքական տնտեսութիւնը վերին աստիճանի հետաքրքիր գիտութիւն է. այդտեղ, ի միջի այլոց ծանօթանում ենք այն շարժառիթների հետ, որոնցից արտահանութիւնը թանկանում կամ էժանանում է։ [14]) Անգլիական բարեկորոգիչ Օուէնի ծրագիրն է, որի նպատակն է օգնել բանուորներին ընկերակցական միջոցներով։

տակ»-ի իդեալներից, որը լոյս տեսաւ երկու տարուց յետոյ։ Բայց այդ վերջինում դասակարգային հակադրութիւնների և դասակարգային պայքարի դերը աւելի պարզութեամբ և վառ գոյներով է ներկայացուած։

Սակայն, Էնգէլսի գրքի արժանաւորութիւնը չէ սահմանափակւում նրանով, որ նա առաջի անգամն է կանգնում արդի հայեցակէտին՝ այն ժամանակուայ բանուորական շարժման և ուտոպիզմի վերաբերմամբ։ Բացի դրանից, ուշագրաւ է նրա Անգլիայի բանուոր դասակարգի դրութեան պատկերացման մեթոդը։ Էնգէլսը իր գրքում հեռու է այն գրողների ֆիլանտրոպիկ [15]) ձևից, որոնք զբաղուած են բացառապէս նիւթեր հաւաքելով՝ նկարագրելու բանուորների ծանր դրութիւնը։ Նա աշխատում է իր գրքում բացատրել արդիւնաբերութեան կապիտալիստական ձևի պատմական ձգտումները այն չափով, ինչ չափով այդ ձևը որոշում է բանուոր դասակարգի այս կամ այն դրութիւնը։ Էնգէլսը կարիքի մէջ տեսնում էր ոչ միայն հասարակ կարիք, այլ և նոր, բարձր սոցիալական ձևի սաղմերը։ Մինչ Էնգէլսը՝ գրողները բացասում կամ ողբում էին բանուորների տանջանքները, բայց ոչ ոք նրանից առաջ չը հետազօտեց այդ տանջանքները՝ ինչպէս օղակ պատմական զարգացման։

Էնգէլսը մշակեց իր գիրքը «Բանուոր դասակարգի դրութիւնը Անգլիայում» Բարմէնում իր Մանչէստրից վերադառնալուց յետոյ։ Բայց այստեղ նա համոզուեց, որ մնալ տանը՝ թունդ կրօնամոլ և ծայրայեղ արմատական ընտանիքում իրան անկարելի է։ Ուստի և նա վճռեց թողնել առ այժմ առևտրական գործունէութիւնը, և ուղևորուեց Բրիւսսէլ, ուր պէտք է տեղափոխուէր նաև Մարկսը՝ արտաքսուած պրուսական կառավարութեան խնդիրքով Ֆրանսիայից։ Այդ մօմէնտից և սկսւում է ուժեղ, միաբան գործակցութիւնը այդ երկու մեծ խելքերի։ Իրանց գործունէութեան թէօրէտիկ հիմունքները կանխաւ կային, և նրանց պէտք էր մի կողմից շուտափոյթ հաստատել այդ հիմունքների վրայ մի նոր գիտական սիստէմ, իսկ միւս կողմից —հիմնել դրանց վրայ այն ժամանակուայ պրոլէտար շարժումը։

Նրանք սկզբից վճռեցին վերջնականապէս հաշիւ տեսնել այն ժամանակուայ տիրապետող փիլիսոփայական հոսանքների հետ, այսինքն՝ երիտասարդ հեգելեան շկոլայի ներկայացուցիչների հետ։ «Բայց - գրում է Էնգէլսը մի տեղ—մենք բոլորովին մտադիր չէինք մեր այն տեղից հանած գիտական հետևանքնե-

---

[15]) Մարդասիրական։

ը շարադրել հաստ գրքերի մէջ, որոնք մատչելի են միայն գիտնականների աշխարհին։ Ընդհակառակը, մենք երկուսս էլ խորն էինք մտացել քաղաքական շարժման մէջ, և մեզ կային ինտելլիգէնտ-կողմնակիցներ, մենք կապեր ունէինք արդէն կազմակերպուած պրոլէտարիատի հետ։ Մենք պարտ էինք ձեւակերպել գիտնականօրէն մեր հայեացքները. բայց ոչ աւելի պակաս նշանակալից էր մեզ համար յաղթել յօգուտ մեր համոզմունքների գերմանական և ընդհանրապէս եւրոպական պրոլէտարիատը։ Ուստի հենց որ մեր աշխարհահայեացքը մեզ համար միանգամայն պարզուեց, մենք անմիջապէս սկսեցինք միասին գործել։ Բրիսսէլում մենք հիմնեցինք գերմանական բանուորական միութիւն և ձեռք բերինք «Գերմանական Բրիւսսելեան լրագիրը»։ Միևնոյն ժամանակ մենք սարքեցինք մի ինչոր բան, նման միութեան բրիւսսելեան դեմոկրատների (Մարկսը «Դեմոկրատիական ընկերութեան» փոխ-նախագահն էր) և ֆրանսիացի սոցիալ-դէմոկրատների հետ։ Մէկ խօսքով մեր կապերը արմատական քաղաքական կազմակերպութիւնների և լրագրների հետ աւելի քան լաւ էին։»

Բայց առանձնապէս նշանաւոր էին Մարկսի յարաբերութիւնները միջազգային «Արդարամիտների ընկերութեան» հետ, որ յետոյ վերածուեց համայնականների (կոմմունիստ [16])։ Այդ ընկերութիւնը՝ շնորհիւ այն ժամանակուայ քաղաքական պայմանների՝ պահում էր իր գոյութիւնը բոլորովին գաղտնի և հիմնուած էր Փարիզում գերմանական յեղափոխականների ձեռքով։ Նա շուտով մեծացաւ, իսկ բաժանմունքները հիմնուեցին Անգլիայում և Շվէյցարիայում. 1839 թուից յետոյ ընկերութեան կենդրոնատեղին դարձաւ Լոնդոնը, և շուտով կազմուեցին նրա բաժանմունքները Բելգիայում և Գերմանիայում։ Այդպիսով, գերմանական նժդեհների ընկերութիւնը Փարիզում վերածուեց միջազգային համայնական ընկերութեան։

Բայց այդ ընկերութիւնը մեծացաւ ոչ միայն քանակով, այլ և որոշ չափով փոխուեց որակով. իր հին ուտոպիական համայնականացման լաւագոյն ներկայացուցիչներին նա աւելի և աւելի քիչ էր բաւականութիւն տալիս։ Նմանապէս Վէյտլինգի ազգային համայնականացումը սկսեց աւելի և աւելի կորցնել իր համախոհներին։ Իսկ միևնոյն ժամանակ

---

[16]) Կոմմունիստների վարդապետութեան էութիւնը կայանում է մասնաւոր սեպհականացման և դրանց համայնականացման մէջ։

Մարկսի և Էնգելսի հայեցակէտը այդ ընկերութեան մէջ աւելի և աւելի էր տարածւում։

Եւ ահա 1847 թուին Մարկսին և Էնգելսին այցելից ժամադրած Մոյլը՝ ընկերութեան ամենայայտնի անդամներից մէկը։ Մոյլը իր ընկերների անունից առաջարկեց նրանց մտնել ընկերութեան կազմի մէջ, հաւատացնելով նրանց, որ ընկերութեան անդամները պատրաստ են հրաժարուել ընկերութեան դաւադրական բնոյթից և ընդունել նոր սկզբունքային հայեցակէտներ։ Մարկսը և Էնգելսը ընդունեցին Մոյլի այդ առաջարկը։ 1847 թուի ամառը կայացաւ ընկերութեան առաջին կոնգրէսը Լոնդոնում։ Այդտեղ ընկերութիւնը ստացաւ նոր անուն՝ «Համայնականների ընկերութիւն» և բոլորովին նոր կազմակերպութիւն։ Դաւադրական ընկերութիւնը դարձաւ քարոզչութեան (պրոպագանդայի) ընկերութիւն։ Երկրորդ կոնգրէսը կայացաւ նոյն տարուայ նոյեմբերի վերջերին և դեկտեմբերի սկզբին։ Առաջին կոնգրէսին ներկայ էր Էնգելսը, իսկ սրան— նաև Մարկսը։ Նրանց յանձնարարուեց կազմել ընկերութեան «Հրովարտակը»։

Այդ վայրկեանից սկսւում է Մարկսի և Էնգելսի նոր դարագլուխ։ Նրանք շտապեցին անմիջապէս Փարիզ, այնտեղից Գերմանիա և Կեօլնում սկսեց խմբագրել «Նոր Ռէյնեան լրագիրը»։ Էնգելսի կեանքի այդ շրջանի պատմութիւնը ներկայանում է ինքնըստինքեան այդ լրագրի պատմութիւնը։ Իսկ պատմել այդ լրագրի անցեալը մենք այստեղ չենք կարող, որովհետև դա նշանակում է պատմել 1848 թուի պատմութիւնը [17])։ Մի բան պէտք է ասել, որ Էնգելսը և Մարկսը երբէք իրանց կեանքում չէին յայտնագործել իրանց ինքնուրոյնութիւնն այն չափերով, ինչպէս ներկայ մօմէնտում։ Թէօրէտիկ և գործնական աշխատութիւնը, գիտնականի և քաղաքագէտի, մարտիկի և քննադատի գործունութիւնները խառնուել էին 'ի մի։ Ոչ ոք չէր ընդունում այն ժամանակուայ յեղափոխական կռուի մէջ աւելի վճռական մասնակցութիւն, քան նրանք, ոչ ոք այնքան ազատ չէր ցնորքներից, որքան նրանք։

Իսկ միևնոյն ժամանակ ոչ մի շարժումն այնքան լի չէ եղել ցնորքներով, որքան 1848 թուականինը։ «Յեղափոխութեամբ տրամադրուած մանր բուրժուազիան բանուորների հետ

---

[17]) 1848 թիւը Եւրոպայում ընդհանուր յեղափոխութեան տարի է։

կարծում էին, որ յետադիմական (ռէակցիոներ) կառավարութիւնների տապալմամբ սկսուեց դրախտը աշխարհում։ Նրանք գաղափար անգամ չունէին, որ նոր պէտք է սկսուի իսկական կռիւը և որ կռուով խլուած քաղաքական ազատութիւնը ներկայանում է որպէս հիմունք, որի վրայ պէտք է տաքանայ դասակարգային կռիւը բուրժուազիայի և պրոլէտարիատի մէջ։ Նրանք չէին երևակայում, որ ազատութիւնը բերեց ոչ թէ սոցիալական աշխարհ, այլ սոցիալական կռիւ։ Դուք յաճախ կը լսէք, որ 1884 թուի յեղափոխութիւնը անյաջող անցաւ։ Իրապէս անյաջող անցան այն ցնորքները, որոնք քօղարկում էին գոյութիւն ունեցող հակադրութիւնը, որ կար ապստամբուած դասակարգերի մէջ և որոնք ստիպում էին կարծելու, որ բանուորները, գործարանատէրերը և արհեստաւորները եղբայրներ են հանդէս գալիս՝ ընդհանուր շահերով և ընդհանուր նպատակներով։ Այն ինչ, ընդհանուրը այդ երկու դասակարգերի մէջ միայն այն էր, որ գոյութիւն ունէր ապստամբութիւն գոյութիւն ունեցող միահեծան սիստէմի դէմ։ Յեղափոխութիւնը յայտնագործեց բուրժուազիայի և պրոլէտարիատի հակադրութիւնները և միևնոյն ժամանակ ապացուցեց մանր բուրժուազիայի քաղաքական անընդունակութիւնը։

1848 թուի շարժման հոգին էր մանր բուրժուազիան, որը միևնոյն տարին ստիպուած եղաւ յայտարարել իրան քաղաքական անանկ։ Ամենուրեք պրոլէտարիատը կռուում էր մանր բուրժուազիայի հետ հանդերձ և ամենուրեք նա նուիրուած է հղել նրան (մ. բ.—ին)։ Բայց բանուորական դասակարգը այն ժամանակ շատ փոքր էր, որ իր բիսկին տանէր քաղաքականը։ Դրա փոխարէն նա սովորեց զանազանել իր բարեկամը թշնամուց, նա առաջին անգամ ծանօթացաւ այն հակադրութիւնների հետ, որոնք բաժանում են նրան բուրժուազիայից, նա առաջին անգամ զգաց մանր բուրժուազիայի անյուսալիութիւնը։ Ներկայումս այն ամենը, ինչ որ մենք ասացինք վերեւում, քիչ թէ շատ պարզ է։ 1848 թուին «նոր Ռէյնեան լրագիրը» միակն էր, որը հասկանում էր այս, և որը ոչ թէ չէր կերակրում իր ընթերցողներին ցնորքներով, այլ, ընդհակառակը, մղում էր նրանց հետ ամենակատաղի կռիւ։ Միևնոյն ժամանակ լրագիրը պահանջում էր յեղափոխականներից ժրաջան գործունէութիւն քանի դեռ հակառակորդը չէր ուղղուել։

Բայց հանգամանքները «նոր Ռէյնեան լրագրից» ուժեղ էին— ռէակցիան [18]) յաղթեց։ Ռէյնեան նահանգի մի մասը

[18]) Յետադիմութիւնը։

ապստամբուեց 1849 թ. մայիսի վերջերին, որպէս դի ընդդիմադրէ բէակցիային. լսելով դրա մասին Էնգէլսը անմիջապէս ուղևորուեց Կեօլնից Էլբերֆելդ, բայց նա տեսաւ միայն, թէ ինչպէս ապստամբութիւնը ճնշուած էր։ Ամենուրեք բուրժուազիան դաւաճանել էր բանուորներին։

«Յեղափոխութեան այս պարտութիւնը վճռեց նաև «Նոր Ռէյնեան լրագրի» ճակատագիրը։ 1849 թ. մայիսի 19-ին նա փակուեց։ Մարկսը հեռացրուած էր, Էնգէլսը, որին ոստիկանութիւնը որոնում էր ապստամբութեան մէջ մասնակցութիւն ունենալու համար, կարողացաւ փախչել Կեօլնից։ Մարկսը գնաց Փարիզ, Էնգէլսը ուղևորուեց Պֆայլց նահանգը, որը Բաղէնեան դքսութեան հետ ապստամբել էր բէակցիայի դէմ։ Այդտեղ նա անցաւ ինքնակամ զօրաբաժնի շարքը, որպէս ադիւտանտ այդ բաժնի հրամանատարի մօտ։ Նա մասնակցութիւն ունէր երեք կռիւներում, նոյնպէս նաև վերջնական ճակատագրական կռուում Մարգ գետի վրայ, որը գետի Ռէյնի աջ վտակն է։ 13000 յեղափոխականներ կանգնած էին 60000 պրուսական և արքունական զինուորների դէմ և, չնայելով ուժերի այդ գերակշռման, յեղափոխականները յաղթուեցին միայն նրանով, որ Վիւրտէմբերգի չեզոքութիւնը խախտուեց, որի շնորհիւ յեղափոխական ֆլանգները [19]) պաշարուեցին։ Ապստամբութեան ճակատագիրը արդէն որոշուած էր։

Էնգէլսը ամենավերջին յեղափոխականներից էր, որոնք անցան շվեյցարական սահմանագլուխը նրանից յետոյ, երբ արդէն ամեն ինչ կորցրուած էր։ Մի քանի ամիս նա ապրեց Շվեյցարիայում։ Այդ ժամանակ Մարկսը տեղափոխուեց Լօնդոն։ Երբ նա Գերմանիայից հեռացուեց՝ նա ճանապարհուեց Փարիզ դեմոկրատական կենդրոնական կոմիտէների ներկայացուցչի պաշտօնով։ Փարիզում դէմոկրատները նախապատրաստել էին ապստամբութիւնը, որից անմիջապէս կախուած էր ոչ միայն ֆրանսիական դէմոկրատիայի ճակատագիրը, այլ և գերմանականի։ 1849 թ. յունիս 13-ի ապստամբութիւնը անյաջող անցաւ, և Մարկսը հարկադրուեց հեռանալ Փարիզից։ Նա պէտք է տեղափոխուէր Բրետանի, կամ բոլորովին թողնէր Ֆրանսիան. նա վերջինը գերադասեց։

Որովհետև Շվեյցարիայում Էնգէլսը հնարաւորութիւն չունէր զբաղուելու մի այնպիսի գործով, որ բաւարարութիւն տար իրան, ուստի և նա ուղևորուեց Լօնդոն։

---

[19]) Զօրաբանակի կողքի մասերը։

Լոնդոնում յայտնուեցին «Համայնական ընկերութեան» ա-ժենագլխաւոր անդամները, նոյնպէս գերմանական 1848 թուի «մեծ մարդկանց» մեծամասնութիւնը։ Այստեղ ձեռնարկուեց կազմակերպութեան վերանորոգմանը, որպէս զի կարելի լինի սկսել պրոպագանդայի գործունէութիւն։ Յեղափոխական գրքոյկը դեռ չէր հանդարտուել, իսկ շատերին թւում էր, որ պէտք է կազմ և պատրաստ լինել նոր յեղափոխական ապստամբութեան. վերջինիս պատրաստութիւնների վրայ Մարկսը և Էնգէլսը նայում են բոլորովին այլ կերպ, քան նժդեհների մեծամասնութիւնը։ Մինչդեռ մնացած նժդեհները աւելի և աւելի անձնատուր էին լինում զառանցական նախագծերին, Մարկսը և Էնգէլսը հանգիստ զբաղուած էին համայնականների ընկերութեան կազմակերպութեան ամրապնդմամբ։ Միևնոյն ժամանակ նրանք աշխատում էին զարգացնել իրանց հոգեպէս։ Իրանց քննադատական և գիտական գործունէութեան հետևանքները նրանք տպագրում էին մի ամսագրի մէջ, որ հրատարակում էին նրանք 1850 թուին և որը կոչւում էր նոյնպէս «Նոր Ռէյնեան լրագիր»։ Այդ ամսագիրը լոյս էր տեսնում Համբուրգում [20]։ Մարկսը այդ հանդիսում հրատարակեց 1848—1849 թուի ֆրանսիական շարժման պատմութիւնը որ ծառայեց յետագայում նորա աւելի նորագոյն աշխատութեան «Բրիւմէրի 18-րդի» հիմքը։ Էնգէլսը մի շարք յօդուածներում նկարագրեց այն ժամանակուայ գերմանական շարժումը, բայց աւելի նշանակալից էր նրա նոյնպէս մի շարք յօդուածները գիւղացիական կռուի մասին Գերմանիայում, որոնք յետոյ 70-ական թուականներին հրատարակուեցին առանձին գրքոյկով։ Այդ աշխատութիւնը հանդիսանում է նախակապիտալիստական էպօխայի (ժամանակաշրջանի) երևոյթներից մէկի առաջին պատմական նկարագրութիւնը, որը հիմնուած է եղել պատմութեան նշանակութեան նիւթապաշտական հասկացողութեան վրայ։ Միևնոյն ժամանակ Գերմանիայի ընդհանուր աճումը գալիս էր ենթադրելու, որ նոր յեղափոխութեան յուսալ չի կարելի։ Ինչքան էլ որ այս իրողութիւնը անախորժ լինէր Մարկսի և Էնգէլսի համար, այնուամենայնիւ նրանք գիտակցօրէն հաշտուեցին սրա հետ. հասարակական կեանքի մայիսից մինչև հոկտեմբեր իրանց տեսութեան մէջ, որ գրուած է 1850 թ. նոյեմբերի 1-ին, նրանք ուղղակի յայտարարում են, որ առևտրի և արդիւնաբերութեան

---

[20]) Համբուրգը 3 ազատ քաղաքներից մէկն է, պատկանում է Գերմանիային։

արդի կենդանութեան ժամանակ, որում բուրժուական ընկերութեան արտադրող ուժերը աճում են այնքան, ինչքան դա, ընդհանրապէս, հնարաւոր է բուրժուական մթնոլորտում, չի կարելի իսկ մտածել յեղափոխութեան մասին։ Յեղափոխութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակամիջոցներում, երբ այդ երկու գործոնների [21]) մէջ, այսինքն ժամանակակից արտադրող ուժերի և արտադրութեան ձևերի մէջ կ'արտայայտուի հակադրութիւն։

Բ. ԹՈՐՈՅԵԱՆ

---

[21]) Գործօն։

(Վերջը հետեւեալ համարում).

# ԹԱԳԱՒՈՐԻ ԴԱՍԸ

Ժամանակով մի թագաւոր էր ապրում, որի բարեսրտութեան համբաւը ողջ աշխարհում տարածուած էր։ Սա մի անգամ պատահմամբ լսեց, որ իւր երկրի մեծամեծները ժողովրդին շատ նեղում են, հարկատու շինականները ուժից վեր չարչարւում են ու խիստ սակաւ վարձատրւում։ Իսկոյն խորհրդականներին կանչեց ժողովի, ապա պալատ հրաւիրեց իւր ընտիր քաղաքների պետերին, երկրի մեծամեծներին, կառավարիչներին, կալուածատէրերին ու հարցրեց. «արդեօք ճիշտ է որ իմ ժողովուրդը հեծում հառաչում է տուրքերի տակ»։ Նրանք ամենը սկսան պատասխանել թագաւորի լսածի հակառակը.

«Ինչ էք ասում. տէր արքայ մեր շինական ժողովուրդը շատ ուժեղ է և միշտ էլ աշխատելու ընդունակ. օրական վաստակից ուտել խմելու համար բաւական փող է մնտեսում. կոպիտ արարածին ուրիշ ինչ է հարկաւոր։ Եթէ նրանք շարունակ չաշխատէին, իրանց համար էլ վատ կլինէր, տէրերի համար էլ, բոլոր շինականին երես չպէտք է տալ, որքան շատ ունենայ, այնքան աւելի կուզի ունենալ։ Երբ հարստութեան համն առնի, կը հետաքրքրուի իմանալ. իրան ուրիշ ինչ է պակաս, ճիշտ այնպէս, ինչպէս մեր տատ ու պապին դրախտում պատահեց։

Նրանց այսպէս խօսելու ժամանակ, թագաւորը նստած էր լուռ, անձայն. նրա սիրտը քիչ էր մնում տրաքի, աշկարայ նկատելով, որ բոլորն էլ սուտ են խօսում։ Մեծամեծները խորհրդից հեռացան առանց որոշ եզրակացութեան գալու, բայց թագաւորը իւր եզրակացութիւնն ունէր. շինականի ճնշուած վիճակը սրտին շատ մօտ առաւ իրրև արդարասէր ու վեհանձն մարդ։ Չէ՞ որ այդպէս էին լինում մեծ մասով հին ժամանակի թագաւորները։ Մանաւանդ սա, որ մի բարի հոգի էին ունէր, որ միշտ մշակ դասի օգտին էր յորդորում։

Երկու երեք օր հազիւ էր անցել, թագաւորը յանկարծ կանչեց իւր նշանաւոր խորհրդականներին, երկրի իշխաններին,

զօրապետներին, կալուածատէրերին ու հրամայեց ձի նստել։ Էլ ժամանակ չըտուեց հարցնելու, թէ ուր են գնում։ Ձիաւորուած քաղաքից դուրս եկաւ հին ժամանակի տարազով շքեղ ու փառաւոր հագնուած, թագաւորը ծին մտքերի մէջ խորասուզուած քշում էր. իւր ուղեկիցներն էլ հետևում էին անխօս, մինչև որ հասան մի գիւղ, նրա միջով անցնելով հանդիպեցին միայգու, գետի վերի կռանը, հարաւին նայող։ Այգում մշակներ էին բանում։

Չը գիտեմ ճրատեղ էր այդ գիւղը կամ գետի անունն ինչ էր. այսքան միայն կարծում եմ, որ գարնան վերջն էր կամ ամառուայ սկիզբը, որովհետև խաղողի հատիկները վազների վրայ պարզ երևում էին։ Այգումը գիւղականներ էին՝ մարդ, կնիկ, աղջիկ, տղայ ջաններին կրակ ածածի պէս տանջւում, բանում էին։ Մի քանիսը վազների արանքի գետինը բահով վարում էին ու հողը շուռ տալով տափակացնում. մի քանիսը փէլենով լիք կթոցները շալակած այդու վերի կողմն էին տանում։ Իւրաքանչիւրն ինչքան ուժ ունէր, չարչարւում էր. բայց գիտէր որ այդ չարչարանքով հասցրած ոչ պտղի համն է առնելու և ոչ գինու ճաշակը տեսնելու, որովհետև պարոնը, աղէն իրաւունք չէր տալիս։

Թագաւորը այդ կողմն ուղղեց ձիու գլուխը ու թամբից ցած թռչելով ձին յանձնեց մէկի ու քարէ սանդուխքով բարձրացաւ վերև։ Նրան հետևեցին իշխաններն ու միւս մեծամեծները, իրանց մէջ զարմանալով թէ այս ճուր է տանում իրանց պետը։ Թագաւորը շուռ եկաւ ու ետևից գնացողին ժպտալով ասեց,—իշխան, այսօր մի հետաքրքիր զբաղմունք պէտք է ունենանք և նոր բան պէտք է սովորենք։

Իշխանը նոյնպէս ժպտաց, բայց մի տեսակ մտամոլորութեան մէջ։ Գիւղականները մեծ երկիւղի մէջ էին ընկել փայլուն, ոսկեշող անձերին տեսնելով։ Անկասկած է, որ նրանք թագաւորին չէին ճանաչում, ոչ մինը նրա երեսը տեսած չունէր. այսքան լսել էին նրա մասին որ պապի պէս բաղմած է գահին. հզօր պատերազմող է, որ թուրքերին իրանց աշխարհի սահմաններից քշել հալածել է։ Նրանց շատ փոյթը չէր, արդեօք թուրքն է նրանց թագաւորը թէ պարսիկը, տարուայ մէջ բանած օրերից հարկի բաժին պէտք է հանէին թագաւորին ջոկ, սեպհական պարոնին ջոկ, մնացածը որ ինչին բան էր, պէտք է բաւականացնէր թէ իրանց և թէ իրանց բազմանդամ ընտանիքին։

Ճիշտ է, նրանք թագաւորին չէին ճանաչում, բայց շքեղ

զարդարուն մեծամեծների շարքում տեսան ու ճանաչեցին իրանց պարոնին, իրանց աղին, այդ պատճառով էլ դողները բռնեց։ Սրտները ուզում էր փախչել, բայց ոնց փախչէին այդ հզօր մարդկանց ու նրանց արագավազ ձիերի առջևից. մանաւանդ նրանք, որ լուսածէգից դէսը գլխակախ բանի վրայ էին և այժմ մի ժամ էր մնացել մինչև ճաշ հանելը։ Այդ էլ որ չլինէր, թագաւորն ու մեծամեծները հետները վերցրած ունէին զօրականների մեծ շքախումբ, որ այդու միւս կողմը կանգնած էր, ամենն էլ լաւ նետաձիգ մարդիկ էին։ Խեղճ բանւորները փախչելը մտներից հանելով իրանց այնպէս պահեցին, իբր թէ կողքներին մարդ չըկար և աշխատելը հանդարտ շարունակեցին։

Թագաւորը մտաւ նրանց մէջները և հարցրեց.—սիրելիք, ով է ձեր գլխաւորը։

Իսկոյն առաջ եկաւ ուժեղ, երեսը արևից խանձուած, ալեխառն մի մարդ ու ասեց.—Ես եմ. ինչ էք հրամայում։—Ահա թէ ինչ, խօսեց թագաւորը, բահդ տուր ինձ, ես կամենում եմ քու տեղը բանել, որովհետև այս մեծամեծները նոր զբաղմունք են ուզում և ցանկանում են իմ ձեռքի տակ այդում աշխատել։ Բայց դու մի հեռանալ. կաց այստեղ ուղղիր, երբ սրանց պատուէրներ տալիս սխալուեմ. միւս մշակները կարող են գնալ և զուարճանալ որքան սրտները ուզում է։

Մշակների վերակացուն չգիտէր ինչպէս վարուի. թագաւորին թողել էր իւր առաջ ձեռը պարզած։ Ցանկարծ այդ շուարած միջոցին աչքն առաւ իւր պարոնին իւր աղին, որ զայրադէմ նրան գլխով նշան էր տալիս, կարծես ասելիս լինէր—այ հաստագլուխ. ինչ ես կանգնել, ինչ ասում է տուր։

Գիւղացին հնազանդուեց, բահը տուեց թագաւորին. սա հրաւիրեց իւր իշխաններին նոր զբաղմունքն սկսելու, այդում մշակութիւն անելու, մէկին այստեղ կանգնացրեց, մէկին այնտեղ ու պատուէրներ տալով բանուգլխու դրեց։ Վերակացու մշակը կողքից այո էր ասում կամ ոչ։

Պէտք էր տեսնել, թէ իշխանները, կալուածատէրերը ոնց էին տաք-տաք բանի կպել-թաւիշէ բաճկոններ ու թանկագին կարմիր կտորից կարած նուրբ զգեստներ էին, որ իրար ետնից փոշու մէջ շպրտում էին դէն, որ աւելի աջողակ ու ազատ բանեն։

Այդում մշակութիւն անելը մեծ մասին թւում էր մի

զուարճալի բերկրալի զբաղմունք. բացի մէկից, որ ծիրանեգոյն զգեստը դէն գցելուց ետ մուրթը կախած կանգնել էր. դրա բաց գոյնի բաճկոնակը պարսկական ոսկեգոյն կաորից էր, որի նման այժմ գործել չգիտեն. մի արշինը արժէր հարիւր դահեկան։ Թագաւորը լուրջ դէմքով դէպի նա դառնալով պատուիրեց, որ վերցնի առջևի ամենամեծ ու ամենավատ կըթոցը ու նրանով փէին տանի ներքևից վերև։ Ոսկում պլպլող իշխանը քիթ ու պռունկը թթուացրեց. նրա ծռմռած երեսհարքից բոլոր բանողների ծիծաղը պրծաւ։ Ճարահատած շուռ եկաւ կթոցը ուսին գործի գնալու և ինքն իրան փնթփնթաց. «Միթէ նրա համար եմ մեծ հարբանի տղին ծառայում, որ բերի ինձ այստեղ փէին կրել տայ։ Նրան էժան չեմ ուտացնիլ թող սպասի»։

Իշխաններն ու մեծամեծները առ ժամանակ քաջաբար առաջ տարան մշակութիւնը. նրանց ուրախ ծիծաղն ու քրքիջը հնչում էին ամեն կողմ. բահին քացի տալիս մինչև ճիտքը թաղում էր գետնում. բերանն ընկնող քարերից պէծեր էին բարձրանում. փոշու ամպերով օդը մսրխել էր։ պարծենալով մէկն ասումէր միւսին. «մտիկ արա, ազնուական մարդը ինչպէս գերազանցում է գոեհիկ մարդուն թեկուզ հասարակ մշակութիւն անելիս. այս ծոյլ, անհասկացող դիւղացիք հողը մի անգամ են շուռ տալիս, իսկ մենք այդ երեք անգամ ենք անում։

Սակայն թագաւորը որ աշխատելում ոչ մէկից պակաս չէր, բերանը ծիծաղ չէր բերում։

Այդ միջոցին այդու ողորմելի մշակները կանգնած էին մի կողմ և նրանց աշխատելուն մտիկ անելով չէին համարձակւում իրար հետ խօսել, ահն ու երկիւղը դեռ նրանց սրտներից չէր դուրս եկել. նրանք մտածում էին այսպէս. այս մեծամեծ զօրեղ մարդիկն եկել են, որ փորձով իմանան թէ մի մարդ որքան կարող է բանել մինչև լաւ յոգնելը։ Եթէ սրանց նպատակն է մեր ճորտական ծառայութիւնը դարձեալ ծանրացնելը, այն ժամանակ մենք հողից հող կորած ենք»։ Այսպէս մտածելով նրանք անչափ սրտակոտոր էին եղել։

Արեգակը բանի գնում, գլորւում էր։ Իրիկնադէմին մեծանձն մշակների մուխը բոշացել էր. այլ ևս առաջուայ նման փառ փառ չէին ծիծաղում, բահի հարուածները աւելի դանդաղ էին հնչում. փէին կրողը նստել էր բլրի ծայրին և նայում էր ցած դէպի գետը։ Միայն թագաւորն էր որ առաջուայ պէս եռանդով բանում էր իւր երկրի մեծամեծներին ամաչեցնելու համար։ Յանկարծ նրա կողքի աշխատողը բահը

ուժով դէն գցեց ու խոր հառաչեց։ Նա մի ամրակազմ, սևամորուք մարդ էր, այդ աներկիւղ զօրավարը քանի անգամ թիւրքական զօրքի շարքերը փշրել անցել էր. իւր անկեղծութեան համար թագաւորից սիրուած անձն էր. ուստի թագաւորը սիրալիր կերպով հարցրեց. «Ի՞նչ եղաւ, իմ զօրավար։—Մշակների վերակացուին հարցրէք, թէ ի՞նչ եղաւ մեզ, պատասխանեց ուժասպառ զօրավարը։—Վերակացու, ասեց թագաւորը, ասա տեսնեմ, ի՞նչ է եղել հզօր ասպետներիս. չլինի՞ ես նրանց սխալ պատուէրներ եմ տուել։—Ոչ, պատասխանեց վերակացուն, նրանք յոգնել են, ուզում են հանգստանալ։ Զարմանալու էլ չի, յանձն առած աշխատանքը կոշտ էր. իսկ իրանք ընդոյշ մեծացած, ազնուարիւն մարդիկ են։—Արդեօք ճշմարիտ է, որ դուք յոգնել էք, քաջ ընկերներ, բարձրաձայն հարցրեց թագաւորը։ Բոլորն էլ մնացին գլխակախ լռուած. միայն զօրապետը, որ աներկիւղ էր ու ճշմարտախօս, խօսեց հետևեալը.

—Թագաւոր տէր, ինձ համար պարզ է քո նպատակը, այստեղ բերիր մեզ, որ մի խելօք խրատ տաս։ Ճշմարտութեան անունը վկայ, ես այս տանջանքը մարսելու անկարող եմ, ինչ տեսակ էլ ծանր լինի վերջին խրատդ, ասա, լսեմ, միայն միջոց տուր որ ճաշեմ։ Եթէ դու քահանայ ես, թող տուր ես էլ քու տիրացուն լինեմ։ Ես կամենում եմ այս վերակացուին երկու կամ երեք հարցմունք անեմ, իրաւունք տալիս ե՞ս։—այո՛, ասեց թագաւորը ու մռայլ մտածմունքների թղլով դէմքը պատեց։ Զօրապետը ձեռները տրորեց, նրանց մէջ մի վայրկեան նայեց ու դարձաւ գիւղականին հարցրեց...

—Ի՞նչքան ժամանակ է, ինչ որ այստեղ բանում ենք, բարեկամ։

—Երկու ժամի չափ, արտասանեց նա ու նայեց արեգակին։

—Ձեր գործից ի՞նչքան ենք շինել այդ ժամանակում, հարցրեց զօրապետը և դէպի նա աչքերը կըկոցեց։

—Տէր իշխան, խօսեց վերակացուն և ակամայ ժպտաց, չընեղանաք իմ խօսքերից, առաջի կէս ժամուայ մէջ մշակութիւն արիք քանուհինգ բոպէ. երկրորդի մէջ երեսուն բոպէ, երրորդի մէջ տասնուհինգ բոպէ, իսկ չորրորդի մէջ միայն երկու բոպէ։

Այնուհետև ժպիտը գիւղականի դէմքից փախաւ, երբ նա խօսքը այսպէս շարունակեց.—Ես կարծում եմ, դուք ձեր գործը վերջացրել էք, այժմ գնալու էք ճաշի. կուտէք, կըվայելէք քաղցր ընտիր բաներ։ Մենք ուտում ենք միայն մի կտոր սև հաց և բանում ենք, մինչև արևը մայր է մտնում և

զուսինն սկսում աջ ու ձախ շուաք սփռել։ Զըգիտեմ թէ դուք ո՞րտեղ և ի՞նչպէս էք քնելու և ինչ չքնաղ կին է հանգստանալու ձեր գրկում մինչև գիշերն անցնելը և աստղերի կուլ գնալը, իսկ մենք թշուառներս կրկին բանի ենք կանգնելու, դեռ աստղերը երկնքում եղած ժամանակ։ Չեմ իմանում, ձեզ վաղը ի՞նչ զբաղմունք է սպասում. երբ տուն հասնէք, իսկ մեզ համար գրեթէ «երէկ» չկայ, կարծես թէ բան չենք շինում. այսօրուայ աշխատանքն էլ կորած է, որովհետև ձեր արած մշակութիւնը մեր վրայ չեն հաշուիլ։ Վաղը թէ միւս օրը նոյն բանը, նոյն տանջանքը պէտք է կրկնուի մինչև շունչներիս փչելը։ Եթէ ձեր այստեղ գալու նպատակը ստրկական ծառայութեան ծանրացնելն է, երկու անգամ շատ ծանրացրէք, մի բան ո՞ր, կատարողը չենք, այս բոլորը ասում եմ առանց երկիւղի անշուշտ գիտենալով, որ կողքիս թաւիշէ սև բաճկոնակով, ոսկէ շղթայով կանգնող մարդը թագաւորն ինքն է, բայց հաւատացած եմ, որ նա իմ այս խօսքերի համար ինձ չի սպանիլ, նրա փառքի ու զօրեղ թրի համար բաւականաչափ թուրքեր կան։

Այս խօսքի վրայ էր, որ զօրապետը գոչեց.—թագաւոր տէր, ինչպէս կը հրամայես, սպանե՞մ այս մարդուն, թէ նա քու փոխարէն է խրատ խօսում։—Զըհամարձակուես դիպչել, նա իմ փոխարէն է խրատում, պատասխանեց թագաւորը· սակայն դրա ասածները իմ մէջ նոր մտքեր ծնեցրին, ուստի ես ուրիշ խրատ, ուրիշ դաս ունեմ ասելու, առ այժմ ներքև գնանք ընթրիք ուտելու։

Թագաւորը և իւր հաւատարիմներն իջան և նստոտեցին գետափին, արդէն ծառերի ճիւղերի մէջ զօվարար սոսափիւնն սկսուել էր. կերան, խմեցին մեծ ախորժակով և զուարթացան։ Թագաւորը պատուիրեց այգու մշակներին իւր ճաշից բաժին հանել, նոյնպէս հրամայեց իւր լաւ գինուց խմացնել։ Վերակացուին ընծայեց մի ոսկի դրամ, իսկ մշակներից իւրաքանչիւրին երեք երեք արծաթ։ Երբ չքաւոր մարդիկը իրանց ափերի մէջ այդ պսպղան դրամները շոշափում էին, թուում էր թէ երկինքը նրանց համար ներքև է իջել։

Իրիկուայ մօտ թագաւորը իւր մեծամեծների հետ ճանապարհ ընկաւ դէպի պալատ։ Նա լուռ էր ու մտածմունքների մէջ խորասուզուած։ Զօրապետը կողքից գնում էր. չը կարողացաւ լուռ համբերել, խօսք բաց արեց. «թագաւոր տէր, սպասում եմ խրատիդ, ասա լսեմ»։

Թագաւորն ասեց.—Ես կարծում եմ, դու արդէն գիտես, այլապէս գիւղականի հետ այնպէս չէիր խօսիլ։ Բայց և այն-

պէս, լսիր, ասեմ։ Ի՞նչ է քու և բոլոր մեծամեծների արհեստի անունը, ինչ միջոցով են ապրում նրանք։ Բրուտը կճուճ ու քրեղան չինելով է ապրում, իսկ դո՞ւք»։

Զօրապետը պատասխանեց.—ինչպէս որ բրուտը կճուճ ու քրեղան չինելով է ապրում, մենք էլ ապրում ենք խեղճ ու աղքատ մարդկանց գրփելով, յափշտակելով։

Թագաւորը պատասխանեց.—լաւ, այդ իմացայ. այժմ երկրորդ հարցս լսիր. իմ արհեստի անունն ինչ է։

Զօրապետն ասեց. Քու արհեստն է գողերի, յափշտակիչների թագաւորը լինել, բայց նրանցից վատթարը չըդառնալ։ Թագաւորը ախորժակով ծիծաղեց ու ասեց նրան.—իմ զօրապետ, այդ ասածդ չըմոռանաս. այժմ լսիր թէ ես ինչ էի մտածում, երբ այն գիւղականը խօսում էր։ Ես մտածում էի—այ մարդ, եթէ ես լինէի քու տեղ տանջուելիս, չէի համբերիլ, կը զինուէի թրով, տէգով, մինչև անգամ մահակով և կյորդորէի ուրիշներին, որ այդպէս անեն, այնքան կսպասէի մինչև ստուար մեծ խումբ դառնայինք. մեր ունեցած չունեցածը մի թշուառ կեանք է։ Կսկսէի ընկերներիս հետ յարձակուել բոլոր թագաւորների արհեստը, մեծամեծների արհեստը կործանել, բնաջինջ անել. երկրիս վրայ կըթողնէի միայն մի հատիկ արհեստ կամ պարապմունք. այսինքն ուրախասիրտ աշխատելը մեր և մեր նման չքաւորների համար և մի ուրախ բաղդաւոր կեանք անկացնել։

Զօրապետն ասեց—ուրեմն այդ է եղել քու խրատը, քու դասը։ Ո՞վ է ականջ դնելու, ուշ դարձնելու. ասում ես, ասա։

Թագաւորն ասեց.—նա ուշ կդարձնի, ով ցնորուած թագաւորին կը կալանաւորի ու թագաւորների գժտանը կը փակի։ Որպէս զի այդ չըպատահի, արգելում եմ այս իմ խրատը ուրիշին հաղորդել։ բայց ուզեմ, չուզեմ, նա բերանէ բերան անցնելու է։

—Եւ ոչ ով էլ դրա վրայ ուշ չի դարձնիլ, վրայ բերեց զօրապետը, բացի այն մարդկանցից, որոնք իրրև հմուտ խուզարկու լրտեսներ ամենայն նոր միտք քարոզողին կը բռնեն ու Աբրահամի գոգը կուղարկեն։ Այդ պատճառով մեր պէսների արհեստը դեռ շատ դարեր ապահովուած է։

Այսպէս խօսելով թագաւորն ու իւր երկրի նշանաւորները հասան պալատ, կերան վայելեցին, պակասը լրացրին ու քնեցին։ Առաւօտը դարձեալ ամեն ինչ գնաց իւր սովորական ճանապարհով։

գերմ. ՌԱՄԱԼԵԱՆՑ Ս.

# ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—

ՎԻՐԱՀԱՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՑԱՒԻ։ Երբ ներքին բժշկութիւնն անզօր է մնում, ստիպուած են լինում դիմել վիրահատութեան՝ քնացնելու և գիտակցութիւնը թմրացնելու այլ և այլ միջոցներով, որի համար ծառայում են գլխաւորապէս քլորոֆորմը և եթերը։ Բայց այս միջոցները, որքան էլ արդի տեխնիկան կատարելագործած լինի, քիչ թէ շատ վնասակար հետևանքներ ունին և առհասարակ անվտանգ չեն։

Այս պատճառով բժիշկները վաղուց ի վեր այնպիսի միջոց էին որոնում գտնել, որ անդամահատութիւնը անզգալի լինի հիւանդի համար, առանց զրկելու նորան գիտակցութիւնից։ Բերլինի բժիշկ Շլէյխին յաջողեց գտնել միջոց, որով շատ դէպքերում առանց ցաւ պատճառելու կարելի էր լինում վիրահատութիւն կատարել՝ յայտնի դեղային խառնուրդով. այս լուծուածքը սրսկում են կաշուի տակ, ուր որ պէտք է վիրահատել։ Միաժամանակ առաջ են բերում կատարեալ անզգայացում կոկաինով, որ շարունակւում է նոյն իսկ երկարատև վիրահատութեանց ժամանակ։ Անզգայացումը ուժեղացնում է նոյնպէս արիւնը հեռացնելով վիրահատելի տեղից։ Արիւնից ազատ տեղը ուշացնում է կոկաինի ծծուելը և սորանով պակասեցնում նորա թունաւոր ազդեցութիւնը։ Տեղական անզգայացման փորձերը հետաքրքրական հետևանքների են հասցրել, որ մարմնի մէջ կաշին աւելի զգայուն գործարան է, քան խորը գտնուած հիւսուածները։ Այսպիսով՝ կտնարքի վիրահատութիւնը գրեթէ անցաւ է անցնում։ Կարելի է կտրտել, ծակծկել և ճխլտել ստամոքսն ու աղիքները, առանց զգացողութիւն առաջ բերելու։ Սորա հակառակ հիւսուածքների և ներքին մասերի գրգռումը խիստ ցաւաբեր է լինում, այնպէս որ փորի ներսը անկարելի է այդ եղանակով անդամահատել։

Նշանաւոր յաջողութիւն ունեցաւ առանց ցաւի վիրահատութեան, այսինքն առանց գիտակցութիւնից զրկելու դէպքում մէջքի ուղեղում անզգայացնող դեղ սրսկելու եղանակը,

որ գտան գերմանացի գիտնականներ՝ Կվինկէն և Բիլը։ Իսկ Բիրը առաջին անգամ Բոննում սրսկեց մէջքի ուղեղի խողովակում կոկային առանց որև է ՀԼաս պատճառելու և բոլորովին կատարելագործեց այդ եղանակը։ Այժմ կարելի է առանց ցաւի շատ վիրահատութիւններ կատարել ուղիղ աղիքում, իջուածքներում և այլն, բոլորն էլ Բիրի շնորհիւ։ Մէջը ծակ ասեղով թեթև ծակելով ողնուղեղը, որ գրեթէ ցաւ էլ չէ պատճառում, ծակից դուրս է գալիս ողնուղեղի հիւթը, իսկ բժիշկը ներսրսկում է ստօվաինը։ Մի քանի բոպէից հիւանդն զգում է, որ ծնկները դնջանում են, իսկ 10 բոպէից արդէն բոլորովին անզգայանում է և չէ կարողանում ոտները շարժել։ Մէջքի ուղեղի անզգայութիւնը առաջ է բերում ազդելով նեարդերի վերայ, որոնք դուրս են գալիս ողնուղեղից և տարածւում մարմնի ամեն կողմ։ Բայց առ այժմ այս եղանակը չէ կարելի գործադրել մարմնի վերին մասերի համար։

Այս եղանակով վիրահատելը այնքան յարմար միջոց է, որ ինչպէս քաջասիրտ հիւանդը, այնպէս էլ թուլանեարդը, միակերպ չեն զգում ցաւ, և շատ հիւանդներ նոյն իսկ երկարատև վերահատութիւնից յետոյ դեռ անհամբերութեամբ հարցնեն տալիս՝ թէ երբ պէտք է սկսուի վիրահատութիւնը։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

# ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1) ԳԻԼԻՍՏԱՆՑԻ. Մկա վախ չունիմ (պատկեր հայ գաղթականների կեանքից) Թիֆլիս 1905 թ. էջ 48.

Դարձեալ մի «պատկեր հայ գաղթականների կեանքից». թշուառ հայ ժողովրդի ճակատագիրը կարծես անխզելի կերպով կապակցուած է «գաղթականութիւն» անողորմ ու տնաւէր գաղափարի հետ։ Դարերի ընթացքում գաղթականութեան խնդիրը չի հնանում, ասպարէզից չի իջնում հայ կեանքի դառն իրականութիւնից, այլ միշտ թարմ, օրուայ խնդիր է մնում. անիծեալ ճակատագիր։ Այդ հանգամանքի շնորհիւ է ահա, որ մեր առաջնակարգ վիպագիրներից սկսած մինչև վերջին գրական մշակը էջեր ու երկեր է նուիրել այս անթառամ ու յարատև գոյութիւն պահպանող խնդրին. Խաչատուր Աբովեան. Պռոշեան. Ռաֆֆի, նոյնպէս և մեր ժամանակակից հայ վիպագիրները հազար ու մի ելևէջներով նկարագրել ու ողբացել են գաղթականութիւնը, յուզիչ ու սրտաժաշ պատկերներ են ստեղծագործել, աղքատութիւն, հիւանդութիւն, թշուառութիւն ու մահ են պատկերացրել՝ իբրև հետևանք անողոք ու սերունդներ սպանող գաղթականութեան, բայց այնու ամենայնիւ հալածական հայն միշտ գաղթել ու դարձեալ գաղթում է...։ Ի՞նչ կօգնի մարդուս սիրտը տակն ու վրայ անող, դառնութեան և անօգնականութեան զգացմունքներ առաջացնող հրաշալի, գեղարուեստական նկարագիրը, երբ մարդիկ թողնում են իրենց սիրելի հայրենիքը, տարիների ընթացքում ճակատի քրտինքով ձեռք բերած գոյքն ու իրենց սիրելիների աճիւնները պարփակող գերեզմանները ոչ թէ բարեկեցութեան տենչով վառուած, այլ իրենց կեանքը, պատիւը, ամբողջ գոյութիւնը փրկելու, մարդկային արժանապատուութիւնը սարսափելի ստորութիւնից ազատելու նպատակով։

Գիլիստանցու «Մկա վախ չունիմ» պատմուածքը՝ չնայելով նիւթի շատ ծանօթ և աւելի հմուտ գրիչներից հազար ու մի ձևով նկարագրուած լինելուն, այնուամենայնիւ կարդացւում է առանց ձանձրոյթի և տեղ տեղ նոյն իսկ յուզում է ընթերցողի այս խնդրի նկատմամբ բթացած զգացմունքը և տպաւորութիւն թողնում։ Զահել—Ջիւան Մարկոսը թողնում է իւր հօր մի անգամ հարուստ, այժմ աւերուած օջաղը, որպէս զի

փրկէ իւր «պատիւը», իւր սիրելի ամուսնուն՝ բարբարոսների ձեռքից. նա գալիս է մեր կողմերը. օրական տաս կոպէկով է պահում ընտանիքը, բայց երջանիկ է զգում իրեն, երբ արու զաւակ է ունենում. «կը վախնայի որ հոս մեռնեմ անզաւակ, կողակիցս Մնայ անտէր՝ ուրիշներու դռներուն կտոր մը հաց մուրալիս, իսկ մը՝ Ճրագը հոն—մը երկրին մէջ յաւիտեան մարի... Ասօր կնոջս ըսի, ալ հոգ չընես, Տէր մի արասցէ, եթէ մեռնելու ալ ըլլամ, Մուկուչս քրզի կը տանի մը երկիր..» (էջ-36)

Ընայելով ուրեմն այն զարհուրելի պայմաններին, որից փախուստ են տալիս թշուառները, այնուամենայնիւ դարձեալ իդէալը մնում է «մը երկիր». հենց այս է հայի կենսունակութեան ապացոյցը։

2) Ռ. ՀԱՌԻՊՏՄԱՆ. Ջուլհակներ. դրամա 40-ական թուականից. թարգ. (ռուսերէնից) տ. Մ. Արտեմեան. Մ. Պետ. 1905 թ. էջ 106

Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնն ազատութեան և հաւասարութեան սկզբունքներն իրականացնելու ձգտելով՝ փշրեց այն շղթաները, որով կապուած էին չքաւոր, ստորին կոչուած դասակարգի մարդ արարածները և իրենց սեպհական ճակատի քրտինքով վաստակող մարդիկն ևս հաւասար ճանաչուեցին արտօնեալ և հարուստ դասակարգի մարդկանց հետ։ Մարդկային հասարակութեան այն խոշոր զանգուածները, որ ֆիզիկական ամենածանր և ամենաստոր աշխատանքն էին կըրում և հնադարեան հասարակապետութիւնների մէջ իրաւազուրկ ստրուկներ, իսկ միջին դարերում սեպհականութիւնից զուրկ կամ ճորտ գիւղացիական դասակարգն էին կազմում, այժմ հասարակական կեանքի ասպարէզը մտան իբրև հաւասար իրաւունքի տէր քաղաքացիներ և որոշ պահանջներ արին՝ իրենց մարդկային իրաւունքները պահպանելու նպատակով։ Երբ յեղափոխութեան մրրկածուփ փոթորիկն անցաւ և կեանքն իւր բնական ընթացքը գտնելով՝ երկրագործութիւնը, վաճառականութիւնն ու արուեստները նորից ծաղկեցին և կեանքի վայելքն ու փարթամութիւնը դարձեալ ուժեղ թափով առաջացան, շուտով երևան եկան հասարակական կեանքի նախկին կազմակերպութեան քայքայման հետևանքները։ Ժառանգական իրաւունքի բոլոր զաւակների վրայ հաւասար բաշխուելու հետևանքն եղաւ այն հանգամանքը, որ կալուածները հետզհետէ բազմաթիւ մանր կտորների բաժանուելով՝ առաջացրեց գիւղացիական մի նոր ազատ դասակարգ՝ մանր կալուածատէրներից բաղկացած։ Սկզբում ցանկալի այս երևոյթը հետզհետէ ամե-

նամեծ թշուառութեան պատճառը դարձաւ. ժամանակի ընթացքում հողի բաժանումն այնքան մանրացաւ, որ կալուածատէրն այլ ևս չէր կարողանում հողի արդիւնքով իւր ընտանիքի գոյութիւնը պահպանել. այս պատճառով և ազատ գիւղացիները հետզհետէ դարձան օրավարձով աշխատող բանուորներ և հետզհետէ աւելի վատթար ու թշուառ կացութեան մէջ ընկան, քան ճորտութեան ժամանակները։ Կարիքից ստիպուած, գիւղացին սկսեց պարտքեր անել և վաշխառուների գերին դարձաւ. միւս կողմից արդիւնաբերութեան զանազան ճիւղերն ընդարձակուելով, գիւղացիները թողին իրենց խրճիթները և կենդրոնացան քաղաքների մեծ գործարաններում՝ իբրև բանուորներ։ Այժմ բանուորները դարձան հարուստ գործարանատէրերի ստրուկները և դրամագլուխը դարձաւ մի այնպիսի բռնակալ իշխող, որի նմանը չէր տեսնուած իսկական բռնակալութեան ժամանակները. ազատութեան և հաւասարութեան գաղափարը, որի համար այնքան մարդկային արիւն թափուեց, այժմ կարծես աւելի հեռու փախաւ մարդկանցից, քան երբևիցէ։ Ի՞նչ օգուտ, որ բուրժուազիան հաւասարուեց իւր իրաւունքներով ազնուականութեան և կղերականութեան հետ, քանի որ ինքը ստրկացրեց նոր առաջացած չորրորդ դասակարգը, պրոլետարիատը։ Գոյութեան կռիւը նոր յոյզեր և պահանջներ առաջացրեց. արհեստաւորներն ու բանուորներն իրենց աղքատութիւնից ու թշուառութիւնից ստիպուած՝ սկսեցին կամաց կամաց գլուխ բարձրացնել գործարանատէրերի դէմ և համբերութիւնից դուրս գալով, բանն ապստամբութեան հասցրին և սկսեցին ջարդել ու քարուքանդ անել գործարանները։ Այսպիսի շարժում տեղի ունեցաւ Գերմանիայում քառասնական թուականներին և ահա այս գիտակցական շարժման նկարագիրն է տալիս յայտնի գերմանացի դրամատուրգ Հաուպտմանը իւր տաղանդաւոր «Ջուլհակներ» դրամայի մէջ։

Այսպիսի շարժումները մեզնում այս վերջին տարիների ընթացքում այնքան սովորական երևոյթ են դարձել, որ «Ջուլհակները» կարդալիս մարդ մոռանում է թէ Հաուպտմանին, թէ Գերմանիան և կարծում է՝ թէ իւր շրջապատող կեանքի երևոյթներից վերցրած մի դէպքի նկարագիրն է կարդում։

«Ջուլհակները» բաղկացած է հինգ գործողութիւնից. առաջին գործողութեան մէջ նկարագրուած է՝ թէ ինչպէս են գիւղացի ջուլհակներն իրենց տանը պատրաստած գործուածքները յանձնում քաղաքի գործարանում և վճարները ստանում. այս գործողութեան միջոցին նրանց խօսակցութիւններից

պարզուում է նրանց չքաւորութեան աստիճանը և թշուառ վիճակը։ Մի կին ջուլհակ ասում է. «ես հօ բոլորովին ծոյլ չեմ, այլ ուղղակի աշխատելու անընդունակ եմ դարձել։ Ինձ հասանելիք վարձից առանց այն էլ արդէն երկու անգամ դուրս են եկել։ Իսկ մարդս, նա հաշուից դուրս է եկել...։ Ճշմարիտ մենք աշխատում ենք, որքան հնարաւորութիւն կայ։ Ես քանի շաբաթ է աչք չեմ խփել։ Ոսկորներս ցաւում են։ Եթէ գոնէ մի քիչ ոյժ առնեմ, գործը դարձեալ լաւ կերթայ։ Իսկ դուք դէպի ինձ ներողամիտ եղէք։ (Համոզիչ շողոքորթ խնդրանօք) ես ձեզ շատ եմ խնդրում. թոյլ տուէք որ այս անգամ գոնէ մի քանի գրոշ տան ինձ (էջ 8)։ Քաղցը ստիպում է բանուորին նոյն իսկ շան միս ուտել. «Ծանը այլ ես ուտելու բան չի մնացել, ես էլ ասացի որ փոքրիկ շնիկը մորթեն, բայց նրանից էլ խելքս բան չի կտրում, նա էլ երկար ժամանակ քաղցած էր։ Այնպէս սիրուն գեղեցիկ շնիկ էր. ես ինքս չկարողացայ նրան մորթել. սիրտս չտուեց». (էջ 10-11)։

Ո՞րչափ դառնութիւն և տրագիկմ կայ այդ երկու պարզ նախադասութիւնների մէջ...։ Երբ ջուլհակներից մէկը համարձակ պատասխաններ է տալիս գործարանատիրոջը, վերջինս հրամայում է, որ նրան այլ ևս ոչ մի աշխատանք չտան իւր գործարանում. այս խօսքերին ջուլհակը պատասխանում է՝ «ինձ համար բոլորովին միևնոյն է, դազգեահի տակ քաղցած մեռնել թէ փողոցում, փոսերի մէջ». (էջ 13)։ Ուրիշները, «այստեղ զարմանալու չէ, որ քաղցածութիւնը նրանց կուչ է ածել». «իսկ ինչ կանենք ձմեռը, եթէ շարունակեն այսպէս մեր վարձը կտրել»։ «Մեզանում ոչ մի փոփոխութիւն չի լինիլ, մինչեւ ամենքս շատկենք». «ամենից լաւը Նեռվինգ ջուլհակի նման խեղդուելն է, թոկը գցել վզին եւ կախուել դազգեահից» (էջ 15)։ Իսկ գործարանատէրը. նա էլ է գանգատւում. «...Ամենի մեղքերը բարձուում է (են) գործարանատիրոջ վրայ. չէ՞ որ նա անսիրտ մարդ է, քար է, վնասակար արարած է, որի ոտը ամեն մի լրագրական շուն կարող է կծել։ Նա ապրում է իւր զուարճութեան և շքեղութեան մէջ, իսկ խեղճ ջուլհակներին գրոշներ է վճարում. բայց թէ այդ մարդը նոյնպէս հոգսեր ու անքուն գիշերներ ունի, թէ նա իւր վերայ մեծ պատասխանատուութիւն է վերցնում, որի մասին, բանուորը երազել անգամ չի կարող...» (էջ 17) և այլն այսպիսի սոփեստութիւններ։

Երկրորդ գործողութեամբ ընթերցողը տեղափոխւում է ջուլհակների իսկական միջավայրը. նրանց ընտանեկան կեանքն է նկարագրուած. նոյն ճնշող տպաւորութիւնը, նոյն

անասելի չքաւորութիւնն ու թշուառութիւնը. «երեխաներս քաղցից մեռնում են, չգիտեմ թէ որ ջուրն ընկնեմ. ինչ ուզում ես արա, աշխատիր մինչև բոլորովին ուժից կընկնես։ Ես առանց այդ էլ հազիւ եմ ոտի վրայ կանգնում, բայց միևնոյն է, ինչպէս որ եղել է այնպէս էլ կայ։ Ինձը քաղցած բերանները, հաւեցիր, նրանց կշտացրու։ Իսկ ի՞նչով կերակրեմ, երեկ երեկոյ մի կտոր հաց կար, բայց երկու փոքրիկին էլ չկշտացրեց։ Ո՞ւմ տայիամեն կեղմից բղաւում են, մայրիկ ինձ տուր, մայրիկ ինձ տուր։ Հիմա դեռ ոտերս քաշ եմ տալիս, իսկ որ պառկեմ, այն ժամանակ ի՞նչ կլինի» (էջ 25)։ «Հաւատում ե՞ս, մենք այն տեղն ենք հասել... հայրս փոքրիկ շնիկին իւր հետ տարաւ նորան էլ մորթեցինք ու կերանք, չէ որ մի բանով պէտք է փորներս լցնել» (էջ 26)։ «Ես ոչինչ չեմ կարողանում անել առանց ուրիշի օգնութեան, ոչ միայն ինքս եմ հիւանդ, ուրիշների համար էլ ծանր բեռ եմ դարձել. թէ քանի անգամ եմ ես Աստծուն խնդրել որ կեանքս առնի... աղջկերանցս կերպարանքին նայիր, տես ինչ են դառել։ Շուտով նրանց մէջ արեան հետք էլ չի մնալ։ Սպիտակել, կտաւ են դարձել... Այսպիսի աղջկերանց վիճակուած է մեքենայի տակ աշխատել... ի՞նչ կեանք է սրանց կեանքը. ամբողջ տարին տեղից չեն շարժուում... ջահիլ աղջկերք են 15, 20 տարեկան, բայց նրանց դէմքին նայելուց կարծես խեղճերին կախաղանից ես դուրս (ցած) բերել» (էջ 29)։ «Մենք այստեղ ոչ ապրում ենք, ոչ մեռնում» (էջ 32)։

«Ահա կանգնած եմ ես, Ռոբերտ Բաուվերտս, ջուլհակ վարպետ Կաշբախում։ Ո՞վ կհամարձակուի իմ մասին մի որև է բան ասել... Ես ամբողջ կեանքս ազնիւ մարդ էի, բայց նայեցէք ինձ վերայ. ի՞նչ օգուտ ունեցայ, ինչի՞ նման եմ ես... ի՞նչ դարձրին նրանք ինձ... Այստեղ մի տանջանքների բանտ է... այստեղ տանջանքների կայարան է... (մեկնում է իւր ձեռքերը)։ Ահա, հիացէք, կաշին ու ոսկորն է մնացել։ Դուք բոլորդ խաբեբաներ էք, բոլորդ խաբեբաներ էք... առանց բացառութեան» (էջ 39)։

Երրորդ գործողութեան մէջ ջուլհակների դժգոհութիւնն արդէն սկսում է սուր կերպարանք ստանալ և մտքերը նախապատրաստւում են գործով ցոյց տալու իրենց վիճակի անտանելիութիւնը.

«Սրիկաներ առանց բացառութեան,
«Դուք դժոխային ահռելի դևեր,
«Դուք որ ծծում էք արիւնն աղքատի,
«Թող մեր անէծքը ձեր վարձքը լինի։» (էջ 62)։

Զորրորդ եւ հինգերորդ գործողութիւնների մէջ ջուլհակներն արդէն խօսքից գործի են անցնում և մեծաքանակ խմբերով յարձակուելով իրենց կեղեքող գործարանատէրերի բնակարանների ու գործարանների վրայ և ամեն բան քարուքանդ անում, փշրում, ջարդում, յափշտակում, տանում են։

Բոլոր նկարագրութիւնները կենդանի պատկերներ են և տաղանդաւոր ձեռքով յօրինուած. ինչպէս վերն էլ յիշեցի, թէև նիւթը վերցրած է քառասնական թուականների դէպքերից, սակայն այժմ իսկ և իսկ մեր իրական կեանքի ճշգրիտ պատկերն է ներկայացնում և ընթերցողի լարուած ուշադրութիւնը գրաւում։

«Ջուլհակները» կարող է մեր ժամանակակից թատրոնական բեմի զարդը կազմել. բայց շատ ափսոս, որ հայերէն թարգմանութիւնը հմուտ ձեռքով չէ կատարուած։ Բազմաթիւ սխալ ոճեր ու դարձուածքներ վխտում են գրքի ամեն մի էջում. քանիցս կրկնուած և շեշտուած է, որ բեմական գրուածքները պէտք է լինին մաքուր և ճիշտ հայերէն. թատրոնը լեզու սովորելու վայրերից մէկն է։ Թարգմանուած է ոչ թէ գերմաներէն բնագրից, այլ երևի (չէ ասուած) ռուսերէն թարգմանութիւնից, այդ պատճառով էլ շատ անունների տառադարձութիւնները ռուսերէնի հետևողութեամբ են. օրինակ պֆէյֆեր (պֆայֆեր) Վեյնհոլդ (Վայնհոլդ), Հէյդէ (Հայդէ), Իւհան (Եօհան. Պետերսվալդայում (Պետերսվալդաու քաղաքում), պֆենինգ (պֆենիգ) և այլն։ Հարկաւ սրանք այնքան էլ էական սխալներ չեն, բայց լեզուի թերութիւնները շատ են ու բազմակողմանի. տպագրական սխալներն էլ հօ քրոնիկական ցաւ են դարձել Պետերբուրգում տպագրուող հայերէն գրքերի համար. կարծես շատ դժուար է օրինաւոր հայերէն իմացող և հմուտ սրբագրիչ ունենալը տպարանում։ Լեզուի բազմաթիւ անճշտութիւններից մի քանի օրինակ. «Ամենքի երեսը արտայայտում է անյոյս մաշող մտատանջութեան դրոշմը» (էջ 4). «դրոշմ արտայայտել» չենք ասում հայերէն, այլ դրոշմ կրել». «Նրա երեւալուց (?)... խորհրդաւոր հայեացք են ձգում միմեանց վերայ» (էջ. 5) «մին (?) սիրու (?) երեխաներ ունեմ» (էջ 8). «Դրէյսիգեր. (կատաղաբար բառաչելով (?) (էջ 12).—բառաչում է կովը, ոչխարը...—«Եթէ եւ (?) չնայելով... (էջ 18). «Երևի անցնելուց (?) մտել է Հաուֆի մօտ» (էջ 24). «եթէ նա նոցա (?)—խօսքը փողի մասին է—գինետունում թողնի».. (էջ 24) «Ոտս խեցի (?!) է մտել», «ծայնով (?) հեկեկում է» (էջ

25).—հեկեկանքը հենց ձայնն է։—«չէի իմանում ինչ անել» (?) —էջ 26.— «կախաղանից դուրս (?) բերել» (էջ 29). «իսկ երբ հարձակում էինք գործում յառաջ, կուրծքս դէմ տուած հեռացիր ճանապարհից, սատանայ, միշտ արթուն էի.» (էջ 31). —.անհասկանալի է։— «բոլոր ոյժդ վեր ես դնում (?). (էջ 32)։ «..այդ փափկաթիշ (?!) բրդոտութիւնը..» (էջ 48) «Դուքս թաւազայ (?) արէք նրան» (էջ 48). «բացի այդ բոլորից էլ ազնուական է դարձել» (?). «ես քեզ նման մտածէի ուր կլինին (?) հիմա իմ եօթը աշակերտները» (էջ 48). «նա կարողանում է անասունների վրայ էլ ապականութիւն բերել» (?!) (էջ 49)։ «մի զոյգ կոճապղպեղ տուէք մեզ (էջ 50) անհասկանալի. հետևեալ նախադասութիւնից պարզ երևում է, որ այդ «կոճապղպեղ»-ը (?) օղի է. ուրմն էլ «մի զոյգը» ոչն է.—երևի երկու բաժակ օղի պէտք է լինի։ «Այնպէս լաւ արտ էր, եւ այդ բոլորը յանկարծ բարձրից քշեց դէպի տնակս»։ (?! —էջ 51. «քեզ ընակարան է հարկաւոր ռամիկը ասում է, ա՛յ քեզ ծակ եւ ինձ աւելի վճարիր, օգնիր եւ խոտ ու ցորենը հաւաքել...» (?!)—էջ 52։ «երբ 40 տարի մշտապէս ցցապատուես (??), վերջ ի վերջոյ մի բան կսովորես» (էջ 52)։ «Իւր վրայ վստահութիւն թողնելով (?).—էջ 54—. «կատուի ծիծաղը, մկների լացն է»—հայերէն ասում են՝ «կատուի խաղը—մկան մահը»։ «Նստած է առուակում ամենեւին մերկ» (?)— էջ 57—։ «Ախ, դու ինչ են հասկանում դրա մէջ» (?)—էջ 66—։ «Ուժով քաշում է կարովի (?) զանգը»—էջ 66—. «եթէ կարողանայի քեզ տեղ (?) բանել..» (էջ 85). երկու ջուլհակ միմեանց բարևելիս մէկն ասում է. «Աստուած օգնական». (էջ 86). այս խօսքերով բարևում ենք միայն—վարդապետներին «ինչ որ ամենալաւ ազնուական (?) կերակուր կայ, նա (?) է փորումն.» (էջ 98). «իսկ ինչ պիտի արձակէք դազանակները (??!)— էջ 101.— և այլն։ Արդեօք բարեխղճութիւն է Հաուպտմանի պէս համաշխարհային հռչակ վայելող հեղինակի մի լուրջ գրուածքն այսպիսի լեզուով հրատարակելը. այս թարգմանութեան վրայ առանձին ուշադրութիւն դարձրինք, որովհետև գրուածքի հետաքրքրական լինելու պատճառով կարող է պատահել, որ հայ դերասանական խմբերը կամ թատերասէրները ներկայացնեն «Ջուլհակները» այսպիսի թերի ու անճիշտ հայերէնով։ խորհուրդ ենք տալիս գերմանագէտներին՝ ընդգրից թարգմանել ժամանակիս ոգուն համապատասխանող այս հետաքրքրական գրուածքը։

ԲՐԻՉ

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ռ. Հաուպտման. Զուլհակներ. ռուս. թարգմ. տ. Ս. Արտեմեան. Ս. Պ. Բ. 1905 գ. 40 կ.

Պրոֆ. Վ. Զոմբարտ. Բանուորական հարց. գերմ. թարգմ. խմբագրութեամբ և յաւելուած բառաթերթով՝ Արտաշես Աբեղեան. Թիֆլիս 1906. գ. 40 կ.

« — » Տնտեսական և Սոցիալ-քաղաքական հարցեր. գերմ. թարգմ. նոյն. Թիֆլիս. 1906. գ. 10կ.

Գիւլիստանցի. Մկա վախ չունիմ. պատկեր հայ գաղթականների կեանքից. Թիֆլիս 1905.

Վարուժան Դանիէլ. Սարսուռներ. քնարական բանաստեղծութիւնք. Վենետիկ 1906

Армянскій календарь на 1906 г. М. Чимишкянъ. Тифлисъ. 20 к.

Գրիգոր Վանցեան. Հայ հեղինակներ. Բ. տպ. բարեփոխած-հարստացրած. Թիֆլիս 1906-ին.

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Հայ-Թուրքական համագումարը։ ԳԱՐ. ՆՆԳԻԲԱՐԵԱՆ։—Գարունը հայոց աշխարհում. հայ գիւղացու սէտքերը. ինչ տեսակ օգնութիւն է հարկաւոր նորան. գործունէութեան ընդարձակ ասպարէզ—Ս. Էջմիածնի միաբանութիւնը սթափւում է։ Խորհրդակցութիւն դպրոցական գործի համար։ Դպրոցական համագումար։—Երեւանի թեմական դպրոցի աշակերտների գործադուլը, Ղարաբաղի թեմի դպրոցի աշակերտների պահանջները եւ Ներսիսեան դպրոցի աշակերտների դասադուլը։—Թիֆլիզի հայոց բարեգործական ընկերութիւնը։ Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը եւ նորա գործունէութիւնը։ Դրամատիքական ընկերութիւն։ «Հայկազեան քաղաքակրթական միութիւն»։—Պետական խորհուրդ եւ Պետական Դուման։ ՏԵՂԵԱԿ—Ներքին լուրեր։—Նամակ խմբագրութեան։ ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

Վերջացաւ հայ-Թուրքական կատակերգութեան և վերջին պաշտօնական ներկայացումը։

Մենք արդէն փորձով գիտենք, թէ ինչ երեւելի հետեւանքներ կարելի է սպասել այս բոլոր ժողովներից։ Երբոր փետրուարեան սարսափներից յետոյ Բագու էլ գներալ—նահանգապետի համաձայնութեամբ նոյնատեսակ կոմիտէ կազմուեց, այնտեղ էլ կային մարդիկ, որոնք գիտէին թէ ինչ միջոցներով կարելի է վերջ տալ կոտորածներին և առաջարկեցին՝ նախ մեղաւորներին պատժելու կարևորութիւնը և երկրորդ վնասների հատուցումը։ Այն ժամանակ էլ Թուրքերը չհամաձայնեցին և հայերն էլ լռեցին և յետագայ սարսափները անխուսափելի դարձան։

Այս բոլոր նիստերի ժամանակ ամենից գլխաւոր հարցը չառաջարկուեց։ Ոչոք չհարցրեց իշխանութեան ներկայացուցիչներից՝ թէ արդեօք կայ Կովկասում կառավարութիւն թէ ոչ։ Եթէ կառավարութիւն կայ, այն ժամանակ նա պարտական է իւր հպատակների կեանքը և գոյքը պահպանել, որպէս և անմիջապէս իրօք պարզել տեղի ունեցած անկարգութիւնների պատճառները, երևան հանել մեղաւորներին և արդարացի պատ-

ժի ենթարկել։ Այս բոլորը մի ամբողջ տարի է չի կատարում։ Իսկ եթէ կառավարութիւն չկայ և կռուող կողմերը իրենք պիտի հնար գտնեն կոտորածների առաջն առնելու, այն ժամանակ համագումարները պիտի գաւառներում լինեն և առանց իշխանութեան ներկայացուցիչների։

Թուրք պատգամաւորների քսու վարմունքները, նրանց պաշտպանութիւնը ոստիկանութեան, նրանց բողոքը անկարգութիւնների պատճառները և մեղաւորները երևան հանելու դէմ, կառավարութեան մի ամբողջ տարուայ յանցաւոր անգործութեան հետ միասին վերցրած, մեզ բերում են այն անխախտ համոզման, որ այս համագումարից էլ ոչինչ չի դուրս գալ։

Չէ՞ որ Բագուի փետրուարեան անցքերի առիթով էլ Բարձրագոյն հրամանով սենատոր Կուզմինսկին եկաւ պատճառները և մեղաւորները երևան հանելու, բայց սենատորը իրօք մի հրաշալի հետազօտութիւն կատարեց Բագուի նահանգի վարչութեան, տնտեսական խնդիրների, արդարադատական խնդիրների վերաբերեալ, բայց ոչ փետրուարի անցքերի։ Հէնց գլխաւոր խնդիրը սենատորը ծամծմեց և սուաղեց և ես այդ մի քանի անգամ զանազան յօդուածներում ասել եմ։ Երևակայեցէք, որ սենատորը ամենայն լրջութեամբ գրում է, թէ իզուր հայերը հրաւիրում էին թուրքերին ապստամբուելու Ռուսաստանի դէմ, բայց թուրքերը (այս ամենահաւատարիմ տարրը) մերժեցին հայերին։ Եւ. ապացոյց էլ է բերում սենատորը, յիշելով, որ Եգիպտոսում հրատարակուող թուրքերէն «Զախրանումա» թերթի մարտի 25 համարում տպագրուած է հայերի այդ հրաւէրը։ Զարմանալի՞ ըէվիզիա, Եգիպտոսից էլ փաստեր. իսկ թէ արդեօք այդ հրաւէրը իրօք Կովկասում եղել է թէ ոչ, ոչ մի փաստ չէ բերում և սենատորը չի կամեցել հետաքրքրուել, թէ արդեօք փետրուարի անցքերի հեղինակները չէ՞ին կարող փետրուարի վեցից յետոյ իրենց յանցանքը ծածկելու համար ուղարկել մի հնարուած պրոկլամացիա և տպել տալ Եգիպտոսում, իսկ Ռուսաստանին շատ սիրող և հաւատարիմ չինովնիկ Կախանովսկուն խնդրել, որ թարգմանի սենատորի համար այդ հազուագիւտ դօկումէնտը (չար լեզուները ասում են, որ հենց այդպէս էլ եղել է)։ Այսպիսով մինչև անգամ սենատօրական ըէվիզիան իսկական պատճառները պարզելուց խուսափել է և բռնել է հայ յեղափոխականների պոչը, որ և թուրքերն են անում։

Արդ՝ էլ ի՞նչ են սպասում սրանցից հայ պատգամաւորները։ Նոյն սենատոր Կուզմինսկու հետ աշխատող քննիչ-

ները—Խլոդովսկին և Լեախովիչը բազմաթիւ նիւթեր ունին ժողոված փետրուարի անցքերի մասին, բայց այդ ցուցմունքները կամ մնացին առանց ուշադրութեան կամ նրանցից անխուսափելի եզրակացութիւններ չարուեցին։ Այժմ էլ նոյնն է լինելու, եթէ քննութիւնը չկատարուի հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ և արդար դատաստան չկատարուի մեղաւորների համար։ Բայց մենք համոզուած ենք, որ ոչ մէկն է լինելու և ոչ միւսը, քանի որ գոյութիւն կունենան կաշառակեր, ոտից մինչև գլուխ փտած չինովնիկներ և Ռուսաստանի կորստեան պատճառ դառնող պաշտօնեաներ։

ԳԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

---

Անցաւ դաժան, արիւնալի, մահաշունչ ձմեռը. դեռ քանի՞ սերունդներ պէտք է դառն վշտով ու խորին զայրոյթով յիշեն այս ձմեռուայ արհաւիրքներն ու աւերումները։ Մեր չնաշխարհիկ հայրենիքի մի մասը, ամբողջ բանաստեղծական Վրաստանը, շուրջ Բալտեան երկիրները, Լեհաստանը, ամբողջ Ռուսաստանը, կարելի է ասել, մարդկային արեան հեղեղներով ծածկուեցան, մասամբ աւերուեցան, մասամբ հրդեհուեցան և սոսկալի վիճակի մէջ են դիմաւորում ծաղկափթիթ գարնան գալստեանը։ Գարո՞ւն. արդեօք մեզ համար գարուն կգայ այս տարի. ահա այն սարսափելի հարցը, որ տալիս է ամեն մարդ ինքն իրեն. գարնանը կենդանանում է ամբողջ բնութիւնը և սթափւում ձմեռուան խոր քնից, երկրագործն իր դաշտն է հերկում, այգեգործն իր յօտոցն առնում...։ Բայց ո՞ւր են մեր երկրագործն ու այգեպանը և ի՞նչ վիճակի մէջ. շատերն են փախել իրենց ճակատի քրտինքով ոռոգած դաշտերից, շատերն են դառն արտասուք թափում իրենց նախկին շէն այգիների կտրտած որթերի ու ծառերի չորացած ու արմատահան եղած մնացորդները տեսնելով։ Քանի՞ քանի տներ ու օջաղներ են քանդուած, գետնի հետ հաւասարեցրած, երկրագործական գործիքները յափշտակուած. ո՞ւր են խեղճ ու մոլոր գիւղացիների միակ սփոփիչները, նրանց ուրախութեան ու ապրուստի աղբիւր «մարալներն» ու «ջէյրաններն», «սարդարներն» ու «շէկօները», գիշեր-ցերեկ իրենց զաւակների պէս փայփայած եզն ու գոմէշը, ձին ու կովը։ Չկան սրանք. յուսահատուած գիւղացին ձեռ քաշելով ու, ինչպէս ասում են, քթիցը ծուխ արձակելով որոնում է, սար ու ձոր է ընկնում, բայց իզո՞ւր. մի մասը թուրքերի կերպարանք ստացած գայ-



Լումայ

լերն են յափշտակել, միւս մասը ղազախների կերակուր դարձել կամ ոստիկանութեան ձեռքով ծախուել՝ տուրքերը վճարելու համար։ Ինչո՞վ պէտք է գետինը հերկէ գիւղացին, որ հետևեալ ձմեռը սովամահ չլինի. ահա մեծ և այս բոպէիս ամենաէական խնդիրը։

Լքուած ու տանջուած գիւղացուն պէտք է օգնութեան հասնի հասարակութիւնը. պէտք է անյապաղ տալ նրան ուրիշ «մարալներ» ու «ջէյրաններ», նոր բահ ու խոփեր, չութ ու գութաններ, խնոցիներ ու սամոդէններ։ Այս կերպ, միայն այս կերպ կարելի է նորից ոտքի կանգնեցնել հայ գիւղացուն, և ոչ թէ կոպէկներ ու մանէթներ բաժանելով. ցանկալի և անհրաժեշտ է, որ մեր արկածեալներին օգնող մասնաժողովն այս կերպ գործադրէր հայ ժողովրդից ու հաստատութիւններից ստացուած հարիւր հազարները։ Սբ. Էջմիածինը, Պետերբուրգի ու Մոսկուայի հայ եկեղեցիների կալուածքները կառավարող հոգաբարձունները, Ներսիսեան դպրոցի. վարչութիւնը և այլն չխնայեցին իրենց օգնութիւնը. ժողովուրդն էլ իւր կարողութեան չափ օգնեց և օգնում է. բայց այս բոլորը զուր կանցնի, եթէ մասնաժողովը մեծ աչալրջութեամբ և հոգացողութեամբ չբաշխի նպաստները։ Անհրաժեշտ է ձեռնհաս մարդիկ ուղարկել գաւառները, իմանալ իսկական կարիքները և առանց կողմնակի հաշիւների ու միտումների բաժանել կարևոր անասուններն ու երկրագործական գործիքները։ Թող մի կողմը մնան այս կամ այն կուսակցութիւններն ու քաղաքական դաւանանքները, թող հրապարակ գան մեր անկեղծ, բուռն զգացմունքներով օժտուած հայ երիտասարդները, ուսանողները, ուսանողուհիները, շրջեն գիւղերը, մխիթարեն, ցուցակագրեն կարիքները, ուսանողուհիները մօտենան ամօթխած և օտար տղամարդուն չմօտեցող կանանցն ու աղջիկներին, լսեն նրանց ծովացած դարդերն ու լեռնացած վշտերը, մի փոքր էլ նրանց կարիքները հոգան։

Ազատութեան ու հաւասարութեան գաղափարով ոգևորուող ինտելիգենտ երիտասարդներ, ժողովրդի անունով խօսող, նրանց իրաւունքների պաշտպան հանդիսացող իդէալիստներ, ահա ձեզ համար գործունէութեան լայն ասպարէզ. վերցրէք ճանապարհորդական ցուպը և մտէք թշուառների շրջանը. դիտեցէք, գրեցէք, նկարեցէք, զրուցէք, մխիթարեցէք, յուսադրեցէք և օգնեցէք կարօտեալներին։ Եթէ սիրում էք ժողովրդին, իւր քրտինքով օրական պարէնը վաստակող գիւղացուն, որ մեր ազգի ճնշող մեծամասնութիւնն է կազմում.

այս է այս բոպէիս նրա կարիքը, պահանջը և ոչ թէ Գետական դու�ային մասնակցելու կամ չմասնակցելու, այլի քննիչների ամուսնանալու, կամ արմատական ու չափաւոր դեմոկրատ լինելու խնդիրները։ Այժմ օգնեցէք, ոտքի կանգնեցրէք նրան, որ ապագայում, իւր հերթին, նա էլ գիտակցաբար օգնէ ձեզ, նպաստէ ձեր իդէալների իրականանալուն. այլապէս նա երեսը շուռ կտայ ձեզնից և պոռոտախօս անունը կդրոշմէ ձեր երիտասարդ ճակատին։

---

Գարնան շունչը սթափեցրեց և սբ. Էջմիածնի միաբան հայրերին. ալեզարդ Մասիսից փչող զով քամին շոյելով նրանց մռայլ դէմքերը, յիշեցրեց թէ բաւական չէ, որ իրենք լոկ խօսքով համաձայն են հայ ազգի ներկայացուցիչները, դպրոցական գործի պաշտօնական իրաւատէրը. բաւական չէ միայն խօսքով ասել հայ ժողովրդին՝ թէ մենք էլ ձեզ հետ ենք, ձեզ հետ միասին մտածենք, աշխատենք, կարգի բերենք և գործը ընդհանուր ազգի շահերին ծառայեցնենք։ Բաւական չէ միայն տրտնջալ և հոգևոր բարձրագոյն իշխանութիւնից դժգոհ մնալ, թէ ինչու ամեն բան, նոյն իսկ հոգևորն ու դպրոցականը աշխարհականներին են յանձնւում, մենք ի՞նչացու ենք այստեղ. մի՞թէ մենք ոչինչ չենք հասկանում և այլն։ Այո, սուրբ հայրեր, խօսելը բաւական չէ, գործ է հարկաւոր, գործ. շուտով մի տարի կլինի, որ մեր դպրոցները մեզ վերադարձրին լայն իրաւունքներով. ցայժմ դուք ի՞նչ արիք, մշակեցի՞ք ծրագիրներ, նպատակայարմար առաջարկութիւններ արի՞ք, գոնէ ուսումնասիրեցի՞ք, հարկաւոր նիւթերը հաւաքեցի՞ք ...։ Եթէ դուք չէք անում ձեր հասկացողութեան համեմատ, էլ ինչու՞ էք դժգոհում, որ աշխարհականներն են գործ անում՝ հարկաւ իրենց հասկացողութեամբ։ Ո՞ւր են ձեր գործերի ապացոյցները. մի հատ ամսագիր էք հրատարակում միաբանութեան անունով, այն էլ անգոյն, աննիւթ, անհետաքրքրական. ի՞նչ են անում ձեր համալսարանաւարտ ընկերները, էլ ո՞ր օրուայ համար են պահում իրենց գիտութիւնն ու հմտութիւնը...։

Ինչևիցէ, վերջապէս միաբանութիւնը շարժուեց։ Մարտի 3-ին Սուրբ Էջմիածնում տեղի ունեցաւ մի խորհրդակցութիւն դպրոցական գործի համար. մասնակցում էին միաբաններից շատերը և ճեմարանի ուսուցիչները։ Դիւանապետը յայտնում է թէ Վեհափառ Հայրապետը կարևոր համարեց հրաւիրել այս ժողովը, ի նկատի ունենալով, որ մեր դպրոցական կեանքում

առաջացել են նորանոր կարիքներ. հարկաւոր է դպրոցների և ճեմարանի համար մշակել նոր կանոնադրութիւն և ծրագիր, այլ և քննութեան ենթարկել Թիֆլիզի ուսումնական յանձնաժողովի կազմած ծրագիրը՝ ծխական դպրոցների համար։

Ժողովականներն երկար վիճաբանութիւններից գալիս են հետևեալ եզրակացութեան. անհրաժեշտ է մայիս ամսի սկզբներին սբ. Էջմիածնում դպրոցական համագումար հրաւիրել՝ ճեմարանի, թեմական և ծխական դպրոցների համար կանոնադրութիւն և ծրագիր մշակելու համար. համագումարին ընտրութեամբ պէտք է մասնակցեն սուրբ Էջմիածնի միաբանութեան, թեմական և ծխական դպրոցների ուսուցչական խմբերի և հոգաբարձութիւնների ու հայաշատ քաղաքների պատգամաւորները. առանձնապէս կը հրաւիրուեն նաև դպրոցական գործին հմուտ և այդ ասպարիզում երկար ծառայած մարդիկ։

Դպրոցական կանոնադրութիւնների ու ծրագիրների մշակութեան գործն արդէն հասունացած խնդիր լինելով, սրտանց կարելի է ողջունել սբ. Էջմիածնի ձեռներեցութիւնը՝ համագումար կազմելու վերաբերմամբ. պատգամաւորները թող լինեն ընտրովի և հրաւիրուած, միայն իսէր մեր դպրոցական գործի, դպրոցների հետ առնչութիւն, գործի մասին հասկացողութիւն չունեցող և անտեղեակ մարդիկ չլինեն համաժողովում. դրանք միայն խանգարում են պարապմունքը և արգելք լինում կանոնաւոր գործ առաջ տանելուն։

Սակայն... մարտի 3-ին տեղի ունեցած վէճերի մասին միայն լրագիրների մասնաւոր թղթակիցները հաղորդեցին. ահա մարտը վերջանում է և դեռ ևս ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չունինք՝ թէ արդեօք ճիշտ էր լրագիրների հաղորդածը. ոչ մի կարգադրութիւն չի եղել հոգևոր իշխանութեան կողմից։ Ինչու. չէ՞ որ ցանկալի էր, որ դպրոցական հաստատութիւնները ձեռնունայն պատգամաւորներ չուղարկէին Էջմիածին, այլ պատրաստի մշակուած հայեացքներով ու ծրագիրներով. ե՞րբ և ինչպէս նախապատրաստուեն դրանք, երբ ոչ մի կարգադրութիւն, նոյն իսկ լոկ պաշտօնական տեղեկութիւն էլ չի տրուում դրանց։ Էլ ինչու են դանդաղում. չէ՞ որ ընդամենը մի ամիս է մնում մինչև մայիս ամիսը. գուցէ նորից միտքը փոխեց հոգևոր վարչութիւնը...

---

Գարնան հովերն աշխուժութիւն, շարժունութիւն և վճռականութիւն ներշնչեցին նաև մեր դպրոցական պատա-

նիներին. նրանք էլ վերջապէս հրապարակ հանեցին իրենց արտի իղձերն ու ցանկութիւնները և դրա հետ միասին իրենց խոհականութեան, հեռատեսութեան և զարգացման չափը ցոյց տուին իրենց դպրոցի պատերից դուրս, ամբողջ հայ հասարակութեանը. հետևանքը՝ խորին հիասթափութիւն...։ Արդեօք յանցաւորը պատանի աշակերտներն են. ո՛չ, հազար անգամ ոչ. դպրոցնե՞րն են մեղաւորը-մասամբ։ Այս մտաւոր մանկութեան յանցանքի ամենից մեծ բաժինն ընկնում է ժամանակակից հասարակութեան, շրջապատող մթնոլորտի վրայ։

Երևանի թեմական դպրանոցի աշակերտների գործադուլին հետևեցին Ղարաբաղի թեմական դպրանոցի աշակերտների պահանջները և վերջապէս նաև Թիֆլիզի Ներսիսեան դպրանոցի, մեր ամենահին դպրոցական հաստատութեան աշակերտների դասադուլը։ Երևանի և Շուշուայ թեմական դպրոցների դէպքերը մեր մամուլի մեծամասնութիւնը դատապարտեց՝ իբրև հետևանք այդ դպրոցներում իշխող «տիրացուական» կրթութեան, յետադիմական ուղղութեան պատկանող վարիչների և այլն փառք Աստուծոյ, Ներսիսեան դպրոցի մասին նոյնը չեն կարող ասել. տասնեակ տարուց աւելի է, որ դպրոցը ղեկավարւում է ազատամիտ և յառաջադէմ հոգաբարձութիւններով և Սաղաթելեան-Բալաղեան-Մալխասեան ազատամիտ տեսուչներով։ Ինչո՞ւ նոյն երևոյթը կրկնուեց այստեղ միւս դպրոցների աշակերտները գոնէ իրենց հասկացողութեան չափ՝ սխալ թէ ուղիղ պահանջներ դրին դպրոցի կանոնադրութեան և ծրագրի վերաբերմամբ. իսկ ինչի՞ համար դասադուլ արին Ներսիսեան դպրոցի Սաղաթելեան-Բալաղեան-Մալխասեան ազատամիտ տրիս վարչութեան կրթած աշակերտները. մի մեծ բարոյական գաղափարի համար. ինչպէս որ վայել է սխալ հասկացուած ազատամտութեանը, նրանք մեծ զայրոյթով պաշտպան հանդիսացան... ամօթ է մինչև անգամ ասելը...։

Արդեօք աշխարհիս երեսին մի դպրոց կգտնուի, որ սրանից աւելի ողբալի դրութեան մէջ լինի...։ Ո՞վ է մեղաւորը, մի՞թէ այդ անփորձ պատանիները... ո՛չ. յանցաւոր են դպրոցական գործին անտեղեակ, ապաշնորհ և միայն իրենց մասին մտածող վարչութիւնները, որ փոխանակ աշակերտների դաստիարակութեան մասին հոգալու և այդ գործին սրբատանց նուիրելու՝ էժանագին ազատամտութեան ետևից են ընկնում և այդպիսով միայն ուզում յարգանք վայելել...։

Առաջ բերենք նաև Շուշուայ թեմական դպրոցի աշակերտների պահանջները։

1. Դպրոցը զատել միանգամայն կղերականութեան հսկողութիւնից և հովանաւորութիւնից, դարձնել նրան զուտ ժողովրդական հաստատութիւն, տեղական (դպրոցական) ներքին ամենալայն ինքնավարութեամբ։

Մանօթ. Ի հարկէ մանկավարժական ժողովը և աշակերտութիւնը կապ պահպանելով ուրիշ քաղաքների հայ դպրոցների մանկավարժական ժողովների և աշակերտութեան հետ։

2. Դպրոցը դասել տալ պետական միջնակարգ դպրոցների չարքը, իրաւական տեսակէտից՝ համալսարան ընդունելու համար։

3. Հիմնել եօթերորդ՝ իբրև լրացուցիչ դասարան։

4. Աշխարհաբարը տիրող լինի բոլոր դասարաններում, իսկ գրաբարը աւանդել իբրև կլասիկ լեզու Ե. դասարանից։

5. Ռուսաց լեզուն կանոնաւոր հիմքերի վրայ դնել. յաճախ տալ հայերէն և ռուսերէն շարադրութիւններ, որպէսզի աշակերտներն ընտելանան երկու լեզուներով կանոնաւոր գրելուն։

Գերմաներէնը սկսել Բ. դասարանից, դրուած կանոնաւոր հիմքերի վրայ։

Ֆրանսերէնն անցնել Դ-րդ դասարանից, իբրև լեզուական ծանօթութիւն։ Լեզուները շարունակուեն Ը-րդում։

6. Հայոց հին գրականութիւնը համառօտ անցնել Ե-րդ դասարանում, իսկ Զ-րդում նորագոյն գրականութիւնը. Զ-րդ դասարանում անցնել ռուսաց գրականութիւն։

7. Հայոց հինև միջին դարերի քննական պատմութիւնն անցնել Ե-րդում։ Նոր և նորագոյն դարերինը Զ-րդում և հիմնուելիք Է-րդում։

Ռուսաց պատմութիւնը չաւանդել լոկ իբրև առասպելական կամ չոր նիւթ՝ դէպքերի ժողովածու, դնել կանոնաւոր հիմքերի վրայ։ Անցնել նաև Ռուսաստանի 19-րդ դարի քաղաքական շարժումների մասին։ Պատմական առարկաները չարունակել Է-րդում։

8. Կրօնական առարկաները կրճատել մինչև Ե. դասարան, իսկ Ե-րդում և Զ-րդում Քրիստոնէական վարդապետութիւնը աւանդել իբրև փիլիսոփայական առարկայ։

Եկեղեցական պատմութիւնը համառօտ անցնել Հայոց պատմութեան հետ։

Սրբազան պատմութիւնները (հին և նոր ուխտ) համառօտ անցնել ընդհանուր պատմութեան հետ Գ-րդ դասարանում։

9. Բուսաբանութիւն և հանքաբանութիւն Գ.-ը դում։ Քիմիա Դ-ը դում. Հոգեբանութիւնը և մանկավարժութիւնն (տեսական և գործնական) ընդարձակ կերպով անցնել Զ.-ը դում և Է.-ը դում։

Բնագիտութիւնն անցնել նաև Է.-ը դում։

Է.-ը դ դասարանում ծանօթացնել քաղաքատնտեսութեան և քաղաքակրթութեան պատմութեան հետ։

Մաթեմատիկան ամբողջովին անցնել. մտցնել եռանկիւնաչափութիւն, երկրաչափական գծագրութիւն բարձր դասարաններում։

10. Հոգաբարձուներն ընտրուն ինտելիգենտ և ձեռնհաս մարդիկ ժողովրդի ձայնատուութեամբ և աշակերտութեան մասնակցութեամբ,

Հոգաբարձութեան պաշտօնն է.

I. Վարել դպրոցի նիւթական բոլոր գործերը։

II. Ամեն տարի ներկայացնել նիւթական հաշիւ ժողովրդի ներկայութեամբ։

III. Հրաւիրել աշխարհական տեսուչ աշակերտների մասնակցութեամբ։

IV. Հրաւիրել ուսուցիչներ տեսչի համաձայնութեամբ և աշակերտութեան մասնակցութեամբ։

11. Ուսուցիչները լինին մասնագէտներ։

Ուսուցիչները կանգնած լինին իրանց կոչման բարձրութեան վրայ և վերացնել բռնապետական վերաբերմունքը դէպի աշակերտները։

Ուսուցչական կազմը լուծուի միւս տարուանից և կայանան ընտրութիւններ վերոյիշեալ կանոնների համաձայն։

12. Աշակերտական ընկերական դատական մարմինը մանկավարժական ժողովից իրաւական համարուի. աշակերտութեան ընթացքի մասին յանձնառու է նաև ընկերական դատական մարմինը։

Դպրոցի տեսուչը և մանկավարժական ժողովը իրաւունք չունենան որ և է աշակերտ արձակել առանց ընկ. դատական մարմնի համաձայնութեան։

13. Վերացնել թուանշանները. ուսուցիչը միայն յուշանշանները նշանակէ իր համար աշակերտի որ և է առարկայի մէջ առաջադիմութեան մասին, իսկ դասարանի դաստիարակը երկամսեակի վերջին պարտաւոր է յայտնել աշակերտին նրա որ և է առարկայի թուլութեան մասին, իսկ մինչև Բ. դասարան նաև ծնողներին. ուսուցիչները պարտաւոր են աշակերտի թոյլ առարկաների մասին հոգալ, գլխաւորապէս ցածր դասարաններում։

Վերացնել թուանշանային ատեստատը և լինին միատեսակ վկայականներ։

Քննութիւն լինի միայն վերջին (7-րդ) դասարանում գլխաւոր առարկաներից։

14. Խզաւ վերացնել նկատողութեան ցուցակները։

15. Ցաճախ կազմել գրական երեկոյթներ. ուր պէտք է մասնակցութիւն ունենան, ոչ միայն աշակերտները, այլ և ուսուցիչները, դասախօսելու ժամանակակից հարցերի մասին, հեռու միայն կուսակցական հողից։

16. Ճոխացնել գրադարանը գիտական գրքերով։ Հիմնել ընթերցարան, ստանալ յառաջադէմ ուղղութեան լրագիրներ։

17. Վերացնել պանազան սրբերի տօներին աշակերտներին եկեղեցի տանելը և հանդիսաւոր կերպով տօնել միայն Վարդանանց ու Վեհափառ Հայրիկի (իբրև հայ հեղափոխութեան նախակարապետներից մէկի) տօնը։

Երգչական խումբը երգէ եկեղեցում միայն անհրաժեշտ դէպքերում։

18. Հոգ տանել աշակերտների առողջութեան մասին. մտցրնուի առողջապահական դասեր և հիմնել մարմնամարզարաններ։

19. Ֆպրոցի դահլիճը և սենեակների մէկը (աշակերտական ժողովների համար) դնել աշակերտների տրամադրութեան տակ։

Սրանք են ահա քաջ, հայրենասէր դարբաղցի մելիքների այժմեան գաճաճ սերունդների մեծադղորդ պահանջները. արդեօք այս չէ՞ նշանակում մեր ձեռքով մեր տունը քանդել. արդեօք շուշեցիներն այլ ևս չեն տեսնում իրենց հրդեհուած տները, աւերուած, քանդուած օջաղները, որ կարծում են թէ արդէն ամեն ազատութիւն ստացել ենք, այլ ևս ոչ մի երկիւղ չկայ և կարող ենք անել այն ամենը, ինչ որ քէֆներս տայ. անհեռատեսութիւնը պատանեկութեան բաժինն է, բայց...։

---

Գարունը բարերար ազդեցութիւն ունեցաւ նաև մեր ընկերութիւնների վրայ. Թիֆլիզի բարեգործական ընկերութիւնը ցանկալով դուրս գալ իւր այժմեան նեղ շրջանից՝ որոշեց վերականգնել նախկին «Կովկասեան բարեգործական ընկերութիւնը» և դիմեց պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութիւնը խնդրելու. յաջողութիւն ենք ցանկանում։ Սակայն մի թէ ընկերութեան անունը պէտք է մեծ լինի, որ վարչութիւնը գործ չինի, հասարակութեան մէջ հետաքրքրութիւն զարթեցնէ. ինչ դրութեան մէջ է այդ ընկերութեան ճաշարանը, որբանոցը.

ինչ աշխատանք և ջանք թափեցին վերջին համակրելի հաստատութիւնը բարեկարգելու, ժողովրդականացնելու այսպիսի մի յարմար ժամանակ, երբ մեր երկրում որբերի թիւը ոչ թէ տարէց տարի, այլ օր ըստ օրէ մեծանում, բազմապատկւում է. արդեօք այս դժբաղդ ժամանակներում ընկերութեան որբանոցում պատսպարուող որբերի թիւը ոչքանով աւելացաւ. աւերուած գիւղերից քանի՞ որբ ընդունեցին այդտեղ .. հաւատացէք, փոքր անուն ունենալով էլ կարելի է մեծ և կանոնաւոր գործ առաջացնել՝ եթէ... անձնուէր, գործով հետաքրքրուող մարդիկ լինէին ընկերութեան ղեկավարները։

Աւելի հաստատ և արդիւնաւոր գործունէութիւն ունի Թիֆլիզի հայուհեաց բարեգործական ընկերութիւնը. պահում է միայն մի կար ու ձևի դպրոց, որից տարեկան 12-15 օրիորդներ աւարտելով իրենց արհեստի ընթացքը, պատուաւոր աշխատանքով կերակրում են իրենց ընտանիքը. այս իսկական բարեգործութիւն է չքաւոր ընտանիքների համար։ Հայուհեաց ընկերութիւնն անցեալ տարի ունեցել է 123 աշակերտուհի, որոնցից 54 արհեստաւորների դուստրներ, 28 մանրավաճառների, 10 վաճառականների, 7 գործակատարների և այլն. սրանցից 8 բոլորովին որբ, իսկ 31 հայր չունեցող աղջիկներ։ Աշակերտուհիներից 21 բացի ձրի ուսումից ստացել են նաև կօշիկ, զգեստ, սպիտակեղէն, դասական և ձեռագործի պիտոյքներ և դեղօրայք։ Այդ թուին ընկերութիւնն ունեցել է 45 միանուագ վճարող գործադիր անդամ և 152 գործադիր անդամ. 1906 թ. յունուարի 1-ին ընկերութիւնն ունեցել է 30,776 ռուբլի. տարուայ ընթացքում մուտք եղել է 5274 ռ, իսկ ծախք 6265 ռուբլի։ Այս ընկերութեան հերթական խնդիրներից մէկն էլ կանոնադրութեան փոփոխութիւնն է. ցանկանք յաջողութիւն և աւելի արդիւնաւէտ գործունէութիւն։ Եթէ կար ու ձևի դպրոցի աշակերտուհիների թիւը կրկնապատկուէր և արհեստի հետ ի միասին նաև պատշաճաւոր ուսումն տրուէր նրանց, ամենացանկալի գործունէութիւնը կհամարէինք այդ համակրելի ընկերութեան համար։ Ուրիշ բաների ձգտելը կարող էր խոչնդոտ լինել այդ նպատակին։

Դրամատիկական ընկերութիւնն այս տարուայ անյաջող պայմաններից և դէֆիցիտներից յետոյ այնքան է կորցրել իւր նշանակութիւնն ու բարոյական վարկը, որ ահա չորս-հինգ անգամ ընդհանուր ժողով է հրաւիրում, բայց ոչ մի անգամ ժողով չէ կայանում. ոչ ոք չէ հետաքրքրւում այդ ընկերութեամբ. արդեօք ի՞նչ է նշանակում այս. Թիֆլիսի

հայ հասարակութիւնն այլ ևս թատրոն չէ՞ ուզում ունենալ, թէ ընկերութեան վարչութիւնից է դժգոհ. եթէ վերջին հանգամանքը տեղի ունի, վարչութեանը մնում է միայն in corpore հրաժարական տալ և ուրիշներին յանձնել գործի ղեկավարութիւնը։

Բացի արդէն գոյութիւն ունեցող ընկերութիւններից, Թիֆլիսի հայ ինտելիգենտ շրջաններում այժմ եռանդով կազմւում են նոր ընկերութիւնների կանոնադրութեանց նախագծեր։ այսպէս օրինակ կարող ենք յիշել «հայ գրագէտների միութեան», «հայ դպրոցների ուսուցիչների միութեան» և «Հայկազեան քաղաքակրթական միութեան» անունները, որոնց ծրագիրները պատրաստւում են ներկայումս։ Վերջին ընկերութեան ծրագիրն արդէն մշակուած, թարգմանուած է ռուսերէն և շուտով կառաջարկուի պատշաճաւոր իշխանութեան ի հաստատութիւն։ Բագու նոյնպէս կազմուել է «հայ քաղաքակրթական միութիւն» անունով մի ընկերութիւն, որի նպատակն է «բացառապէս խաղաղ և օրինական միջոցներով նպաստել Բագուի, իսկ հնարաւոր եղած դէպքում և հարևան նահանգների հայերի քաղաքակրթական և տնտեսական զարգացման». նոյն նպատակն աւելի լայն ծաւալով պիտի ունենայ և «Հայկազեան քաղաքակրթական միութիւնը». արդեօք այս հանգամանքը լոկ զուգադիպութիւն է՝ թէ մի «և» կայ այդտեղ, առ այժմ հասկանալի չէ մեզ։ Այնուամենայնիւ ցանկանում ենք լիուլի յաջողութիւն։

---

Հոկտեմբերի 17-ի բարձրագոյն հրովարտակից յետոյ, որով Ռուսաստանի ժողովրդին սահմանադրական իրաւունքներ տրուեցին, թէ ռուս մամուլը և թէ քաղաքական շրջաններում վիճաբանութեան խնդիր դարձաւ՝ թէ արդեօք մի պալատեան սիստեմն է օգտակար, թէ երկպալատեանը, որ առհասարակ ընդհանրացած է Եւրոպական պետութիւնների մեծամասնութեանց մէջ։ Յայտնի է նոյնպէս, որ Ռուսաստանում գոյութիւն ունի և պետական խորհուրդ կոչուած հիմնարկութիւնը, որի բոլոր անդամները նշանակուի են. պետական դումայի հաստատուելուց յետոյ՝ վերոյիշեալ հաստատութեան գոյութիւնը այլ ևս չէր կարող համապատասխանել հոկտեմբերի 17-ի հրովարտակի ոգուն, ուստի հարց ծագեց՝ թէ ինչ նշանակութիւն պէտք է տալ պետական խորհրդին։ Ոմանք առաջարկում էին բոլորովին ոչնչացնել այդ հիմնարկութիւնը, ոմանք էլ ուզում էին ձևափոխել և դարձնել վերին պալատ։ Կառավարութիւնը հակուեց ձևակերպութեան գաղափարին և փետրուարի 20-ին

հրատարակուած բարձրագոյն հրովարտակով այդ որոշումը յայտարարուեց ժողովրդին։ Այսպիսով յաղթող հանդիսացաւ երկպալատեան սիստեմը. ստորին պալատը կլինի պետական դուման, իսկ վերին պալատը՝ պետական խորհուրդը։ Առաջինի անդամները բոլորն ընտրովի են, իսկ երկրորդինը՝ կէսն ընտրովի, կէսը նշանակովի։

Պետական խորհուրդը պէտք է վերակազմուի հետևեալ հիմունքներով.

1) Խորհուրդը կազմուում է բարձրագոյն նշանակուած և ուղղափառ հոգևորականութեան, նահանգների զեմստվոյի ժողովների, ազնուականութեան, գիտութիւնների ճեմարանի, համալսարանների, առևտրի ու արդիւնաբերութեան խորհրդի, նրա Մոսկուայի բաժանմունքի, բորսային կոմիտէների և վաճառականական վարչութիւնների ընտրած անդամներից։ 2) Բարձրագոյն նշանակած անդամների թիւն ընտրովի անդամների թուից աւելի չպէտք է լինի։ 3) Խորհրդի նախագահն ու փոխնախագահը նշանակուում են բարձրագոյն իշխանութիւնից։ 4) Ուղղափառ հոգևորականութեան անդամներն ընտրուում են սինոդի կողմից-թուով վեց. երեքը կուսակրօններից, երեքն աշխարհիկներից։ 5) Իւրաքանչիւր նահանգական զեմստվոյի ժողով ընտրում է խորհրդի մի անդամ և այլն։ 6) խորհրդի անդամ չեն կարող ընտրուել 40 տարեկանից պակաս անձինք, միջնակարգ դպրոց չաւարտողները, օտարահպատակները։ 7) խորհրդի ընտրուած անդամներն ամբողջ նստաշրջանի ընթացքում օրական 25 ռուբլի են ստանում։ Ճանապարհածախս է տրուում տարեկան մի անդամ վերստին 5 կոպէկ։ 8) Ընտրուած անդամներն երդուում են։ 9) Խորհրդի օրինական կազմի համար հարկաւոր է բոլոր անդամների $^1/_3$ մասի ներկայութիւնը։ 10) Խորհրդի նիստերը նախագահի թոյլտուութեամբ կարող են հրապարակական լինել։ 11) Պետական խորհուրդը քննում է պետական դումայի քննած օրինագիծը և նրան է պատկանում օրէնսդրական նախաձեռնութեան իրաւունքը։ 12) Դումայից հաւանութիւն գտած օրինագծերը մտնում են պետական խորհուրդը։ 13) Պետական խորհրդի նախագծած և նրա կողմից հաւանութիւն գտած օրինագծերը մտնում են պետ. դումա։ 14) խորհրդից կամ դումայից չընդունուած օրինագծերը համարուում են մերժուած. 15) Բարձրագոյն հաստատուած օրինագծերը նոյն նստաշրջանի ընթացքում չեն կարող քննութեան ընթարկուել։ 16) Արգելուում է պատգամաւորների ներկայանալն ու խնդիր մատուցանելը, ինչպէս խորհրդին, այնպէս էլ

դումային. 17) խորհրդի անդամներն ընտրում են հողատէրերի որոշուած հողային ցենզ ունեցողների, նահանգական ազնուականութեան պարագլուխների նախագահութեամբ կայացած հաւաքումներում և այլն։

Բացատրուած են նաև Պետական Դումայի կանոնների միքանի յաւելումները. 1) դուման կարող է կազմել առանձին բաժիններ ու մասնաժողովներ. 2) դուման ընտրում է նախագահ, 2 օգնական, քարտուղար՝ օգնականներով։ 3) Դումայի անդամը զրկւում է ազատութիւնից նստաշրջանի ընթացքում դումայի նախօրօք տուած թոյլտուութեան հաւաձայն, բացի այն դէպքերից, երբ նրան բռնել են ոճիր գործելու ժամանակ։ 4) Նախարարները և պետութեան առանձին մասերի կառավարիչները կարող են ընտրուել դումայի անդամ։ 5) դուման կարող է հարցմունք տալ նախարարներին։ 6) Նախարարներն ու կառավարչապետները ներկայ են լինում դումայում, բայց ձայնի իրաւունք են ստանում այն դէպքում, եթէ դումայի անդամ են։ 7) Ընդհանուր ձայների մեծամասնութեամբ ընդունուած կարծիքը համարւում է դումայի կարծիք։ 8) Դումայի նախագահն իրաւունք ունի թոյլ տալ ժողովրդի և մամուլի ներկայացուցիչների ներկայութիւնն ընդհանուր ժողովում։ 9) Եթէ դումայի որոշմամբ հարցը պարզուած է համարւում, այդ առթիւ դատողութիւններն ընդհատւում են։ 10) դումայի այն անդամը, որ դումա մտնելիս հրաժարւում է տալ պահանջուած խոստումը, համարւում է կոչումից զրկուած։

Դումայի հիմնարկութեան առաջին յօդուածն ամփոփում է հետևեալ խօսքերով. «Պետական Դուման հիմնւում է հիմնական օրէնքների ոյժով ու այդ հիմնարկութեան և պետական խորհրդի որոշած կարգով բարձրագոյն Ինքնակալի իշխանութեանն ուղարկուող օրէնսդրական նախագծերը քննելու»։

Ապրիլի 27 ից յետոյ, երբ պաշտօնապէս կսկսուին պետական դումայի նիստերը, Ռուսաստանը կկառավարուի վերոլիշեալ հիմունքների վրայ հաստատուած ժողովրդական ներկայացուցիչների սահմանած օրէնքներով։

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Վեհ. Հայրապետի կոնդակով ճարտարապետ Նիկողայոս Գրիգորեանը նշանակուել է Թիֆլիսի թեմի եկեղեցական կալուածների ճարտարապետ և Էջմիածնի տաճարի վերանորոգութեան վերահսկող։

▬ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնն իւր դրամագլխից 20,000 ռուբլի յատկացրեց Կովկասի հայ արկածեալների օգտին և 5000 ռուբլի Նուշուայ հայոց թեմական դպրոցին՝ իբրև նպաստ։

▬ Լրագիրները հաղորդում են, որ Թիֆլիսի նախկին թեմական առաջնորդ Բ. Սրբ. Գէորգ արքեպս. Սուրենեանը և գերնահապետ եպիսկոպոսը բարձրագոյնս նշանակուել են Էջմիածնի Սինոդի անդամ։

▬ Թիֆլիսի քաղաքային դուման իրաւասու պ. Արշակ Բաբեանին ընտրել է պատուաւոր հոգաբարձու Հաւլաբարի նորաբաց պրոգիմնազիայի, որի բացման սկզբնապատճառը եղել է ինքը Բաբեանը։

▬ Ս. Էջմիածնում առաջիկայ մայիսին կայանալու է մի համագումար, ուր պիտի մշակուի նոր կանոնադրութիւն մեր դպրոցների համար։

▬ Արդէն մշակուած պատրաստ է Թիֆլիզում կազմուող «Հայկազեան քաղաքակրթական միութեան» կանոնադրութիւնը և այսօրերս կներկայացուի փոխարքային ի հաստատութիւն։

▬ Այս օրերս մամուլին կյանձնուի Տիցի «Հողաչափութիւն» անունով աշխատութիւնը, բազմաթիւ նկարներով, որ փոխադրել է մեր աշխատակից օր. Նուարդ Աղանեանը։ Այդ գիրքը մի կարևոր ձեռնարկ է գիւղացիների համար, որ պարունակում է իւր մէջ այն բոլոր գիտելիքները, ինչ որ պէտք է խմանան գիւղացիները հողը չափելու համար։

## Նամակ խմբագրութեան

Amicus Plato, sed magis
amicus veritas est.

Որքան ընորոշ են այս խօսքերը և ինչ աստիճանի յարմար են, երբ հարցը մի անարդար յարձակման է վերաբերումն կան անհատներ, որոնք Մարկոսի խաթեր համար արդար Կիրակոսին խաչում են և հասարակութիւնը լուռ հանդիսատես է լինում, նա խաբուած է, սակայն անդէտ լինելով՝ անտարբեր է։

Կարդացի պ. Կ. Կոստանեանի և նրա հակառակորդների նամակները և սպասում էի, որ վերջապէս հրապարակ կըգան և այն մարդիկը, որոնք Կ. Կոստանեանին լաւ ուսումնասիրել են, սակայն խօսողները դարձեալ երդուեալ հակառակորդների

բանակին են պատկանում, որոնք աշխարհին հաւատացնում են, թէ Կ. Կոստանեանը դեսպոտ է, անընդունակ է, մանկավարժ չէ և տեսուչ չը պէտք է լինի։

Ահա այդ պարոններին մի կարճ պատասխան.

—Պարոններ, ոչ թէ Կոստանեանը, այլ եթէ ձեզ համար հանգ. Ֆրուբեցկոյի նման մարդ բերեն, միևնոյն է, եթէ նա ձեր մարդը չէ, նա անընդունակ է։

Բայց այսքանը բաւական չէ, պէտք է առաջ գնալ և ի լուր աշխարհի ասել ճշմարիտը, որովհետև այժմ սարդենիների աշխարհ է, սարդենիով է պսակւում միայն մեր մարդը։ Բայց խիղճը, որի համար հազարաւոր զոհեր ենք տալիս, այդ է թեյադրում խիղճը, ի հարկէ ոչ։

Պ. Կ. Կոստանեանը 1899 թ. նոյեմբեր 19-ին ինձ արձակեց Մայր Աթոռի ճեմարանի Զ. դասարանից, միայն նրա համար, որպէս զի յանդգնութիւնից միւսները չը վարակուին, բայց ես ձեռս դնում եմ խղճիս վրայ և ասում միայն ճշմարտութիւնը։ Երբ ես Ներսիսեան դպրոցումն էի, տեսուչ էր պ. Յ. Սաղաթելեանը (որի տեսչական ընդունակութիւնները բողոքող պարոններին լաւ յայտնի է. ինչու հեռու գնանք, նոյնը չէ արդեօք Ներս. դպրոցը նաև պ. պ. Ս. Բալաղեանի և այսօր Ստ. Մալխասեանի օրով), որի օրով Ներս. դպրոցը Արշակաւանի էր փոխուած, և արդեօք ի՞նչ է տուել այդ դպրոցը հասարակութեան այս վերջին տարիների ընթացքում, թող խօսի ինքը հասարակութիւնը, թող խոստովանուեն շրջանաւարտները։ Բացառապէս ոչինչ։ Մենք միայն տեսել ենք, որ հայկաբանները աստուածաբանութիւն են դաս տուել, անտրոպոլոգները ֆիզիկա կամ թէ մատեմատիկները հայոց պատմութիւն։

Սրանք այդ լիբերալ (պ. Կոստանեանը բանից դուրս եկաւ, որ խաւարամիտ է եղել, օբսկուրանտ, դա հօ անտանելի բան է) տեսուչների վարչական ընդունակութեան զոհարներն են և եթէ նրանք ուրանան՝ ես կապացուցանեմ։ Ահա վարչական հերոսներ, ինչու սրանց չը հրաւիրել, չէ՞ որ սրանք մեր մարդիկն են։

Գնացի ճեմարան։ Ճեմարանում կար նախ և առաջ կարգապահութիւն, մարդավարութիւն, պարտաճանաչութիւն, կրթութիւն, դասաւանդման մեթոդ (որից զրկուած էր Ներսիսեան դպրոցը յիշեալ տխրահռչակ տեսուչների օրով) և այս բոլորի ճեմարան մտցնողը միայն և միայն Կ. Կոստանեանցն էր, այն մարդը, որի վարչական ու մանկավարժական ընդունակութիւնների մասին կայծակներ են արձակում-ականները։

Միրեցէք Պլատոնին, բայց մի՛ մերժէք ճշմարտութիւնը։ Մի մոռանաք այն կեանքը, որ դուք վարել էք Էջմիածնի ճեմարանում, մի՛ ուրանաք, որ դուք երկար ժամանակ աշխատում էիք այդ գործի կամ աւելի լաւ ասած՝ հալածանքի համար, որին ենթարկուեցաք։ Եւ ո՞վ էր մեղաւորը, նրանք, որոնք այսօր Կ. Կոստանեանի դէմ են ելած, 'ի հարկէ դուք այդպիսի մարդկանց մարսել չէք կարող։ Կ. Կ. իսկական տեսչացու է, գործին հմուտ և (լաւ լսեցէք) միայն նա կարող էր Յովհաննեանի նման անկերպարան դպրոցի համար ծրագիր կազմել, դպրոցը կարգի դնել, և եթէ Կ. Կոստանեանը համաձայնուել է ստանձնելու այդ՝ իրեն բարձրութեան անհամապատասխան պաշտօնը, փառք ու պատիւ Յովհաննեան դպրոցին, փառք ու պատիւ նրա հոգաբարձութեան, յաղթողները սրանք են և ոչ թէ Կ. Կոստանեանը։

Բայց կայ նաև «люди ни чѣмъ не брезгаютъ» և ահա թափուում են սպառնալիքներ,... ..,դպրոցը կայրենք, աշակերտուհիներին չենք թողնիլ, որ դպրոց յաճախեն և այլն և այլն։

Բայց ներեցէք, պարոնա՛յք, սա երկրորդ հերոսութիւննէ, որ անում էք։

Ահա թէ ինչպէս։

Թանդոյեան եկեղեցու համար հոգաբարձութիւնը որոշել էր տեսուչ հրաւիրել մի հմուտ հայագէտ անձն, բայց տես որ —ականները միջոցներ ձեռք առան և անստորագիր նամակներով... սպառնացին, ստիպեցին հոգաբարձուներին տեսուչ պ. Մուշայիձէին ընտրել. մինչդեռ պ. Մուշայիձէն իր ձեռները կը դնի կրծքի վրայ և կը խոստովանուի, որ ինքը հայերէն չը գիտէ։

Նոյնը եղաւ այժմ և պ. Կ. Կոստանեանի վերաբերեալ, որովհետև ականներն ունեն իրենց թեկնածուները, որոնց անունները եթէ տամ այստեղ, կը տեսնէք, որ մանկավարժութեան հոտ անգամ չեն զգացել։ Բայց դրանք յաւիտեանս յաւիտենից ընտրեալներ են իբրև որոշ ուղղութեան մարդիկ։

Մենք ժամանակով կը տպենք ճեմարանի խռովութեան պատմութիւնը, կպարզենք բարոյականն ու անբարոյականը, սխալն ու ուղիղը և այն ժամանակ հասարակութիւնը կը գնահատէ թէ պ. Կոստանեանին և թէ նրա հակառակորդներին։

ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

(Նախկին սան Էջմ. Ճեմարանի)

## «Լումայ» նուիրողներ

1906 թ. «Լումայ» նուիրում են հետեւեալները.—

Կարսից պ. Ա. Բէկ-Յովսէփեանը. «Լումայի» տասնամեակի առիթով թողնում է խմբագրութեանս տնօրինութեան մի օրինակ, որ մենք ուղարկեցինք Թիֆլիսի հայ բանտարկեալներին։

Թիֆլիսից տ. Ե. Միրզոյեանը 4 օրինակ «Լումայ» նուիրում է Վանի՝ կենտրոնական, Սանդխտեան և Յայն կոյսերի եկեղեցու ուսումնարաններին և Վարագի ժառանգաւորաց դպրոցին։

« պ. Աղ. Միրիմանեանցը մի օր. թողնում է խմբ. տնօրինութեան, որ ուղարկեցինք Լայպցիգի հայ ուսանողներին։

« պ. Ա. Բաբեանը մի օր. նուիրեց Թիֆլիսի Կուսանաց մենաստանին։

« պ. Գր. Արաքելեանը մի օր. թողնում է խմբ. տնօրինութեան, որ ուղարկեցինք Կ. Պոլսի ա. Փրկչեան հիւանդանոցին։

« պ. Ա. Լիսինեանը մի օր. նուիրեց Թիֆլիսի էժանագին գրադարանին։

## Նամակ խմբագրութեան

«Հուսայ» . . . ամսագրի Հ. խմբագրին

Նուաստիս «Մկա վախ չունիմ» գրքոյկի վաճառումից մինչև օրս ստացել եմ արդիւնք ընդամենը քսան ռուբլի, որպիսի գումարը սորա հետ ուղարկելով Ձեզ խնդրում եմ հասցնել այն Ազգիս Վեհափառ Հայրիկից հաստատուած Ցանձնաժողովին՝ Կովկասու հայ արկածեալների օգտին գործադրելու համար։

Քաղցր է ինձ յուսալ, որ իմ բարեկամները կօգնեն ինձ տարածելով այդ գրքոյկը իրենց շրջանում, որով հնարաւորութիւն կտան ինձ վաճառքի արդիւնքը գոնէ մաս-մաս ղրկելով՝ կատարել մասամբ իմ բարոյական պարտքը դէպի իմ թշուառացած բազմաթիւ քոյրերն ու եղբայրները։

Աստուածատուր Բէկ-Յովսէփեանց

20 մարտ 1906, Կարս։

— Խմբագրութիւնս յիշեալ 20 ռուբլին ներկայացրեց Թեմիս Սրբ. Առաջնորդին։

# ՄԱՀԳՈՅԺ

## † ՄԻՆԱՍ ԽՈՒՆՈՒՆՑ

Փետր. 26-ին Թիֆլիսում վախճանուեցաւ Մինաս Խունունցը 73 տարեկան հասակում։ Հանգուցեալը շատ շատերին ծանօթ է. նա Շուշուայ յայտնի Խունունց տանից էր. մի խոհական և գործունեայ մարդ, որ իւր կեանքը դրեց ազգային գործերի վերայ։ Նորա հասարակական գործունէութիւնը բազմարդիւն էր և անշահասէր։ Երկար տարիներ նա վարել է Շուշուայ բէալական և Մարիինսկի դպրոցին կից յօգուտ չքաւոր աշակերտների հիմնած ընկերութիւնների գանձապահի պաշտօնը, բէալական ուսումնարանի հիմնադիրներից մէկն էր, բազմամեայ քաղաքային դեպուտատ և վերջապէս օրինակելի երեցփոխան Ղազանչեցւոց եկեղեցու 8 տարի շարունակ։ Շուշուայ յայտնի սովի ժամանակ մեծ ծառայութիւն է արել ժողովրդին հանգ. Մինասը թէ իւր կարողութիւնից և թէ հանգանակութեամբ։

Գոլիցինի ժամանակ հայոց կալուածների գրաւման ժամանակ իբրև երեցփոխան դիմադրութիւն ցոյց տալու համար՝ Մ. Խունունցը 1903 սեպտ. բանտարկուեց և 1904 թ. յունուարին աքսորուեց Զիստոպոլ, ուր մնալով 8 ամիս՝ հիւանդացաւ և ընդհանուր ներման ժամանակ վերադարձաւ Շուշի։ Թիւրքհայ ընդհարումներին Շուշուայ հրկիզութեան միջոցին հիմնովին այրուեցան նորա երկու խոշոր տները բոլոր պատկանելիքներով, որից յետ Մինասը միմիայն մի ձեռք շորով իւր բազմանդամ գերդաստանով տեղափոխուեց Թիֆլիս՝ զուրկ ապրուստի ամէն միջոցից, ուր և գոհ գնաց իւր հասարակական պարտականութիւնների ճշտիւ կատարման։

Օրհնուած լինի նորա յիշատակը։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

—

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

«Անահիտ»-ի մէջ կարդում ենք, որ Կայիրէի մէջ մի խումբ հայեր որոշել են հիմնել «Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն» «Ալիանս Իսրայէլիտ»-ի ծրագրով և թէ Պօղոս փաշա Նուբարը յանձն է առել պատուի նախագահութիւնը, իսկ իր որդի Առաքել բէյն գանձապահի պաշտօնը։ Արդէն բացուած է հանգանակութիւնն և ինքը Պօղոս փաշան նուիրել է 1000 ոսկի (մօտ 8650 ռուբլի), ամսական էլ 20 ոսկի խոստացել։ Կանոնագրութիւնը դեռ չէ խմբագրուած և վարչութիւն չէ ընտրուած։ Ընկերութիւնը, որ պիտի հիմնուի, ասում է «Անահիտ»ը, ոչ միայն թշնամի չպէտք է լինի յեղափոխական մարմիններին, այլ պէտք է ջանայ նոցա վերայ բարերար ազդեցութիւն ունենալ, պէտք է նոցա պառակտող գրգռութիւնները ջնջէ, նոցա մխեանց մօտեցնելու աշխատէ, ճշնի մեղմացնել նոցանից ոմանց ծայրահեղ յանդգնութիւնները։ Իսկ իր բուն գործունէութիւնը պիտի լինի քաղաքակիրթ աշխարհին ճանաչեցնել մեր ազգի պատմութիւնը, քաղաքակրթութիւնն ու ցաւերը, եւրոպական և ամերիկեան կառավարութեանց ուշադրութիւնը միշտ հրաւիրել մեր դատի վերայ, նպաստել մեր ազգի պահպանմանը, նիւթական ու մտաւոր զարգացման, օգնել հանրօգուտ մտաւորականների (օր. Նորայր Բիւզանդացու նման գիտնականներին) արտադրութեանց երևան գալուն, օգնել ապագայ խոստացող ուսանողներին, վաղուան հայութեան համար «մարդիկ» պատրաստել և այլն և այլն։

—

## ՃԱՇԿԵՐՈՑԹ 'Ի ՊԱՏԻՒ ՋԷՄՍ ԲՐԱՅՍԻ

Ցայտնի է, որ անցեալները Տաճկահայոց դատը անցեա-

զում պաշտպանող յայտնի հայասէր Ջէյմս Բրայսը կարգուեցաւ նախարար։ Փետրուար 23-ին (ն. տ.) ուրբաթ օրը, ինչպէս տեղեկանում ենք «Անահիտ»-ից, վէստմինիստր Պալէս Հոտէլի մէջ տեղի է ունեցել միջազգային խորհրդաժողով՝ կազմակերպուած Արևելեան հարցի Միջազգային ընկերակցութիւնից՝ ի նպաստ Օսմանեան Պետութեան կեղեքուած ժողովուրդների։ և նոյն իրիկուն տրուել է հացկերոյթ ի պատիւ Ջէյմս Բրայսի՝ նախարար նշանակուելու առթիւ։

Խորհրդաժողովին և հացկերոյթին ներկայ են գտնուել լոնդոնաբնակ հայերից՝ Յ. Յակոբեան և Ն. Մօստիչեան, փարիզաբնակ հայերից՝ Յ. Իսկենդեր և Ա. Զօպանեան («Անահիտ»-ի խմբագիր և մեր աշխատակիցը)։ Հրաւիրուած է եղել և Մ. Չերազը, բայց տկարութեան պատճառով չէր կարողացել ներկայ գտնուել։ Օտարազգիներից ներկայ են գտնուել. Ֆրանսիայից՝ Բառոն դ'Էստուրնէլ դը Կոնստան, Պիեր Բիար և Ժան Լոնկէ։ Անգլիայից՝ Սաուտուօրքի եպիսկոպոսը, Լորդ Սթանժոր, Անգլօ-Հայկական ընկերակցութեան նախագահ Ստիվէնսընը, Նօէլ Բըքստնը, դր. Ռէյնոլդսը, Վանի Ամերիկացի միսիօնար Ա. Ֆէրբէրն, Մակ Կոլ Կանոնիկոսը, պրոֆ. Ագար Բիտը, Ի. Մուրը և այլն։ Շատ շատերը, այս ու այն պատճառով չկարողանալով ներկայ լինել՝ համակրական նամակներ էին ուղղել։

Նախագահ դ, Էստուրնէլը և վերը յիշած անգլիացիները բացատրեցին Օսմ. Պետութեան կեղեքուած ժողովրդների դատը և մասնաւորապէս հայկական հարցը արմատապէս լուծելու անհրաժեշտութիւնը. պ. Յակոբեանը շնորհակալութիւն յայտնելով Դէստուրնէլին՝ յայտնեց, որ հակառակ Հայոց թափած այնքան արիւնին և Եւրոպացի հայասէրների տարիներից ի վեր ջանքերին՝ հայ ժողովրդի կացութիւնը ոչ միայն չէ բարւոքուած, այլ տասնիցս աւելի վատթարացած է քան 1876 ի-ն։ Դէստուրնելը հասկանալի դտաւ Հայոց զգացած դառնութիւնը, բայց, ասաց, պէտք չէ վհատուիլ. Եւրոպան մինչև այժմ պառակտուած լինելով՝ չէր կարող արևելեան հարցը լուծել. այժմ նոքա բարեկամութեամբ կապուած լինելով՝ պէտք է կարող լինին սկսել այդ հարցը լուծել։

Հացկերութեան նախագահ էր Ստէվէնսընն, ներկայ էին մօտ հարիւր յիսուն հոգի, որոնք ամենքն էլ համաձայն էին Օսմ. Պետութեան արդի խայտառակ կացութիւնը բարեփոխելու անհրաժեշտութեան մասին։

Հայ հեռաւոր գաղութներից միայն Աղէքսանդրիայի հայ

գաղութը երախտագիտական հեռագիր էր ուղղել պ. Բրայսին։

Գ. Իսքէնտէրը մի քանի զգայուն խօսքերով արտայայտեց հայ ժողովրդի երախտագիտութիւնն ու սէրը դէպի պ. Բրայսը, այդ մեծ հայասէրը, որ հիմնադիրն է Անգլօ-Հայկական ընկերութեան և որ երեսուն տարուց ի վեր ամենայն անձնուիրութեամբ աշխատել է ի նպաստ տառապեալ հայութեան։

Նորանից յետոյ պ. Ա. Զօպանեանը մի ընդարձակ և սրտառուչ ճառով բացատրեց տաննեհինգ դար առաջ Յազկերտի բռնութեան տակ հեծող հայ ժողովրդի տառապանքը և այժմեան նոր Յազկերտի բռնութեան գերազանցութիւնը հնից. «Հայերը, ասաց նա, աշխարհակալ ձգտումներէ չէ որ մղուած են, ոչ մէկուն շահերուն վնասել չէ իրենց նպատակը. կուգեն որ իրենց պահանջները, որ օրինաւոր նկատուած են Պերլինի դաշնագրով և անկից բղխած միջազգային բոլոր որոշմնագրերով, լրջօրէն և ամբողջապէս գործադրուին. և իրենք համոզուած են թէ հայկական հարցին արժատական լուծումը, բուժելով Օսմ. Պետութեան ամենէն ծանր վէրքերէն մին, օգտակար կրնայ ըլլալ այդ պետութեան ամբողջութեան և բանալ Արեւելքի համար վերանորոգման թուականը»։

Հացկերոյթից յետոյ հայ պատգամաւորները յայտնեցին պ. Բրայսին իրենց յարգանքն ու շնորհաւորութիւնը։ Պ. Բրայսը այդ միջոցին նոցանից մէկին ասել է հետեւեալը.

«Այժմ՝ ինչպէս ցարդ, պիտի անեմ ինչ որ կարող եմ նպաստելու համար Հայոց կացութեան բարոքման։ Բայց մինչև որ Ռուսիա չաջակցէ մեր ջանքերին, մեր ջանքերը չեն կարող յաջողուիլ. Իտալիա, Ֆրանսիա, և Անգլիա՝ միացած կարող են մի բան անել Մակեդոնիայի համար. բայց Հայաստանի համար՝ երեքը միասին չեն կարող մի արժատական փոփոխութիւն առաջ բերել՝ եթէ Ռուսիան հակառակէ. բայց յոյս ունիմ որ Ռուսիա այլ ևս չպիտի հակառակի»։

ՀԱՅ

---

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՑԵՐԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՆԱԽ. ՌՈՒԶՎԷԼԹԻՆ

Ռուշճուգի հայերի միտինգը հետեւեալ հեռագիրն է ուղղել Նախ. Ռուզվէլթին.

«Մէկ միտինգում հաւաքուած 3000 հայերը խորապէս

յուզուած են այն դիմումից, որ Ֆրանսիայի, Անգլիայի և միւս քաղաքակիրթ երկրների մարդկութեան պաշտպանները ուղղել են Ձեր վեհանձն համակրութեան, ի նպաստ արիւնաշաղախ Հայաստանի հարցին։

Ձեր պաշտպանութեան տակ առնելով խաղաղ, աշխատասէր և քաղաքակրթութեան կապուած մի ազգ, որին իր բռնաւորները զլանում են մինչև իսկ գոյութեան ամենատարրական իրաւունքները, դուք ամենափայլուն մարդկօգուտ մի գործով պսակած պիտի լինիք ձեր բարիքների շարքը, և այնքան փառաւոր կերպով նախագահած Ձեր մեծ ազգը պիտի լիացնէք այն մարտիրոսների յաւիտենական երախտագիտութեամբ, որոնք կեանքի պիտ կոչած լինիք։

Նման բովանդակութեան հեռագիրներ էլ ուղղել են Բրայլայի, Աղէքսանդրիայի, Կաիրէի և Լօզանի հայերը և մի հանրագրութիւն է ուղարկուած Սլիվէնի հայերի կողմից։

---

## ՐՈՒԶՎԷԼՏԻ ՄԵՐԺՈՒՄԸ

Ջէյմս պ. Ռէյնօլդսին,

Պարոն,

Նախագահը յանձնել է ինձ յայտնելու ձեզ, որ ընդունուած է ձեր յունուար 13-ի նամակը, որի հետ ներկայացրել էիք և մի խնդրագիր, հաւաքաբար ստորագրուած Ֆրանսիայի, Իտալիայի, Բէլգիայի, Շուէդիայի, Դանիայի, Մեծն-Բրիտանիայի, Հոլլանդիայի, Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի ազդեցիկ անձնաւորութիւնների կողմից, որով կոչ են անում նախագահին թիւրքահպատակ հայերի կրած անգթութիւնների առաջն առնելու։

Այդ խնդրատուների բարձր դիրքը, եթէ հնարաւոր լինէր աւելի ևս պիտի չահագրգռէր նախագահին այդ խնդրով, որին արդէն անցած տարիների ընթացքում նա իր անկեղծ ուշադրութիւնն էր նուիրած։

Բոլոր երկրների ճնշուածների հանդէպ տածած ամերիկացի ժողովուրդի կարեկցութիւնը, որ յաջորդաբար արտայայտուած էր այս կառավարութեան այլ և այլ միջոցներով, անբախտ հայերի նկատմամբ էլ արտայայտուել է պերճախօս կերպով։ Միանգամայն դուրս է ամեն կասկածից, որ նախագահը կը ցանկայ, որ հայերը վայելեն կեանքի ու գոյքի ապահովութիւն, այն, ինչ որ Եւրոպական միացեալ կառավարութիւնները նպատակ են ունեցել նրանց համար ձեռք բերելու։

Թուրքահպատակ հայերի տառապանքները բարձրաձայն օգնութիւն և դարման են աղաղակում: Այդ տառապանքները վրդովել են համայն մարդկութեան մարդասիրական զգացումները և աշխարհը միացած է ոչնչացու ու դատապարտելու այն ցեղային թշնամութիւնները, որոնք տիրում են Թուրքիայի բնակչութեան տարբեր տարրերի մէջ: Ոչ մի ճշմարտասէր մարդ չէ կարող ականատես լինել նմանօրինակ դէպքերի առանց ուզենալու ոյժի դիմել նրանց առաջն առնելու համար: Ես ամենայն անկեղծութեամբ կը ցանկայի, որ Միացեալ-Նահանգները այդ ոյժը ունենային, բայց համահաւասար անկեղծութեամբ համոզուած եմ թէ Միացեալ-Նահանգների ջանքերը, որոնք անհրաժեշտօրէն օրինական և հզօր միջամտութեան ոյժը չունեն, կամ աննշան և կամ ոչ մի արդիւնք չպիտի բերեն, ի նկատի ունենալով մի ուրիշ պետութեան գործերի ու շարժառիթների բացասականութիւնը, անխուսափելի կերպով պէտք է յայտնուի, աւելի վնասակար հանդիսանալով, քան օգտակար այն անբախտ արարածների համար որոնց ցանկալի կը լինէր նպաստել:

Ձեր խոնարհ ծառայ՝

(Արշ.) Է. ՌՈՒՏ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

*Կարս.*—Բ. Թորոյեանց.—Մէկը լոյս է տեսնում այս համարում, միւսը կմնայ ապագային, երբ իր հերթը կգայ։

*Պարիզ.*—Ա. Զ. — Ստացանք չորրորդ երգը և բանաստեղծութիւնը, իսկ պատկերը մէջը չկար. գիրքը ուղարկեցինք։

*Անապա.* Մ. Շուտ.—ստացանք, մէկը յանձնեցինք ըստ պատկանելոյն, միւսները հետզհետէ կտպուին, միայն հերթին պիտի սպասեն։ Հնար չկայ բոլոր նիւթերը միանգամից տպելու։

*Կարս.* Ա. Բէգ-Յովսեփեան.—գրքերն ուղարկեցինք։

*Արշալոյսի.* Ֆելիէտոնիստին.—

Այդ լրագրի № 55-ում գրուած է, որ Պետական Դումայի համար դրուած է Թիֆլիզի միակ պատգամաւոր Գիւտ քահ. Աղանեանի թեկնածութիւնը այստեղ, Բարդուղիմէոս եպիսկոպոսինը Էջմիածին և Սուրմալուի գաւառների հայ ժողովրդի կողմից, իսկ Գրիգոր քահ. Սուքիասեանինը՝ Երևանի կողմից։

Արդ՝ մեզ հաստատ ալրիւրից հաղորդուում են, որ այդտեղ տեղի է ունեցել մի տպագրական սխալ. ճիշտն այն է՝ որ Երևանից ընտրուած է «Սալմանի» հայր Ղևոնդ քահ. Աթանասեանցը և Ղուբայի Մխչկիւր գաւառից ընտրուած է հանգ. Առաքել ապօր նախկին կառավարիչ Աշոտ Աթանասեանցը, այդ պաշտօնից դուրս արած լինելու արժանիքի համար, որովհետև նոյն արժանիքի համար ընտրուած էր և Էջմիածնի Ճեմարանի կողմից, բայց վիհանձնաբար մերժել էր։ Իսկ Գեր. Բարդուղիմէոս եպս. Գէորգեանը Պետական կազմուելիք Դումայի անդամ լինելուց աւելի արժանիք ունի և հայոց եկեղեցուն այժմ աւելի շատ ծառայութիւն է մատուցանում, քան թէ նորա վերայ քար շպրտող ծուլութիւնից բղխած «Աշխատանք» թերթի հրատարակողները։

«Ընկեր»ին.—

«Հիւսիսափայլի թոռը, Մշակի և ուրիշ շատ հայրերի

որդի (որպէս ինքն է խոստովանուել, բայց մօր ով լինելը մնացել է անյայտ) «Ընկեր»ը գրել է «Լումայի» մասին, թէ նորանում մուտք գործեցին թէ ամենածայրայեղ ազատամիտ, թէ երդուեալ խաւարասէր գրողները և... տեղ ստացան Շիրվանզադէի կեղտոտ պասկուիլները. և հարցնում է թէ *ինքը արդեօք լուրջ մարդկանց հետ գործ ունի։—*

«Լուման» հրատարակւում է արդէն 11-դ տարին, որի գրական և պատմական լուրջ յօդուածների արժէքը շատ անգամ խոստովանուել են նոյն իսկ նորա ամենաոխերիմ թշնամիները։ Այժմ Թիֆլիզում հրատարակւում է 77 հայերէն թերթ, որոնց հետ միասին ծնունդ առաւ և «Ընկեր»ը։ այս թերթի խմբագրութեան Եզովպոսին առաջարկում ենք և խորհուրդ ենք տալիս ձեռք բերել այն նոր տեսակի հայելին, որ վերջերս գտել են Եւրոպայում և որևէ մէկի մասին առանց փաստերի վատաբանութիւն անելիս՝ նախ նայել այդ հայելուն, որ ցոյց է տալիս ոչ մարդու կերպարանքը, այլ նորա մտաւոր և հոգեկան պատկերը։ Այս օպերացիան անելուց յետոյ՝ մենք իրաւունք ենք տալիս նորան գրիչ առնել և ազատ գրել ինչ որ կամենայ։ Այս դէպքում երևի նորան ոչոք պատասխանի չի արժանացնի։ «Կեղծաւոր, նախ հանիր քո աչքի գերանը և ապա եղբօրդ աչքի շիւղը տես։»

---

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ռ. ԱՂԱՆԵԱՆՑ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Է 1906 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՍԿԵՐ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳՐԻ

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով։

Ամսագրի նպատակն է՝ ա) ներշնչել մանուկ ընթերցողներին արծարծելով նրանց մէջ սէր դէպի մարդը և դէպի հայրենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշտ հասկացողութիւններ բնութեան և մարդու մասին, գ) զարգացնել նրանց ճաշակը և դ) ուրախութիւն եւ աշխոյժ մտցնել մանկական կեանքի մէջ։

Ամսագիրը ունենալու է նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ որ կազմուած կը լինի հետեւեալ գրքերի ԳՐԱԴԱՐԱՆԻՑ

1. Երեխայի կրթութիւնը մինչև 6-8 տարեկան հասակը։ 2. Երկիւղն ու քաջութիւնը սկզբնական կրթութեան մէջ։ 3. Երեխաների քուն։ 4. Երեխաների քմահաճութիւններն և դիւրագրգռութիւնը։ 5. Սովորութիւնները, նրանց նշանակութիւնն ու կրթութիւնը։ 6. Ինչպէս պէտք է ծանօթացնել երեխաներին սեռական կեանքի հետ։

Բաժանորդագին է Ճանապարհածախսով

| | | | |
|---|---|---|---|
| Տարեկան. ՀԱՍԿԵՐ | 4 ռ, առանց մանկավարժ. բաժնի | 3 ռ. | |
| Հին բաժանորդների համար | 3 ռ. կ. | 2 ռ. 75 կ. | |
| Դէս տարուանը | 2 ռ. | 1 ռ. 50 կ. | |
| Արտասահմանում տարեկան | 12 ֆր. | 9 ֆր. | |

Հրատարակ. սկզբից մինչև 1906 Թ. վերջը. 4 ռ.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Գաբարիել Լիսիցեանց

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բէհբութեան փող. 25.

(Тифлисъ, Редакція журнала „Аскеръ", կամ Tiflis, (Caucase) Rèdaction du jurn. «Hasker». Թիֆլիսում կարելի է գրուել նաև «Գուտտենբերգ» գրախանութում և «Հէրմէս» տպարանում, իսկ Բագուում՝ Сотрудникъ գրախանութում։

---

ԲԱՑՈՒԱԾ Է 1906 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## „ԱՐՇԱԼՈՅՍ"

գրական, հասարակական, քաղաքական, տնտեսագիտական

## ՕՐԱԹԵՐԹԻ

**24** պատկերազարդ յաւելուածներով որ կանոնաւորապէս լոյս կը տեսնեն ամիսը երկու անգամ

Թերթի ձգտումն է պետական սահմանադրական կազմ, ովկասեան ներքին լայն ինքնավարութիւն, տեղական զեմստվո, զեմստվոյական մանր միութիւններ և ազատ կապակցում այդ մանր միութիւնների։

Հողի բաւարար բաժիններ տակաւահող գիւղացուն եռական և կալուածական հողերից ,և օրէնսդրական բաւարարութիւն բանուորի կենսական պահանջներին։

Ընտրական սկզբունքի լայն գործադրումը ընդհանրապէս, մասնաւորապէս մեր դպրոցական գործի կազմակերպութեան եկեղեցական կալուածների տնտեսութեան և հասարակական հիմնարկութիւնների ղեկավարութեան մէջ։

Թերթի գլխաւոր ուժը ուղղուած կըլինի հայ կեանքի պահանջներն առաջ մղելու և աշխատելու նրանց իրականացմանը դեմոկրատ ոգով։

### Բաժանորդագրութեան պայմանները

| | ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ | ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ |
|---|---|---|
| Տարեկան . | 7 ռ. — — 32 ֆր. | 28 մարկ. 28 շիլ 7 դոլ. |
| Վեց ամիսը . | 4 » — — 20 » | 16 » 16 » 4 » |
| Երեք ամիսը | 2 » 75 կ. 12 » | 10 » 10 » 2 » |
| Մի ամիսը . | — — 25 « 4 » | 3 » 3 » 1 |

Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս. Յունուար. 4. ռ. և յունիս. 3 ռ.։

*Ապատիկ բաժանորդագրութիւն չի ընդունում.*

Կարելի է գրուել խմբագրատանը (Թիֆլիս, Դանովսկայա փող. № 11). կամ գործակալների մօտ։ Ուրիշ տեղերից դիմել. Тифлисъ, Редакція газеты «Аршалуйсъ» կամ *Tiflis, Rédaction du journal «Arschalouis*

Խմբագիր-Հրատարակիչ՝ Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՈԶԵԱՆՑ

---

**ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 ГОДЪ**

**ЗАДУШЕВНОЕ СЛОВО**

ДВА еженедѣльные иллюстрированные журнала для дѣтей и юношества основанные С. М. МАКАРОВОЙ и издаваемые подъ редакціей П. М. ОЛЬХИНА.

**ЗАДУШЕВНОЕ СЛОВО**
**ДЛЯ ДѢТЕЙ**
**МЛАДШАГО ВОЗРАСТА**
(отъ 5 до 9 лѣтъ)

Гг. годовымъ подписчикамъ будетъ выслано:
интереснаго,
**52 №№** богато иллюстрированнаго **52 №№**
журнала,
съ массою новостей, разсказовъ, очерковъ, стихотвореній,
**и 42 ПРЕМІИ И ПРИЛОЖЕНІЯ,**
въ числѣ которыхъ:

1) Болшая картина въ 24 краски художника К. Тима: „ЖУЧКИНА СЕМЬЯ“
2) 12 игръ и занятій для дѣтей на больш. раскраш. и черн. листахъ.
3) 12 отдѣльныхъ картинъ изъ дѣтской жизни
4) 6 книгъ „Библіотечки Задушевнаго Слова“
5) Маленькій русскій историкъ Родная исторія въ разсказъ захи рисункахъ
6) Игра — „Звѣринецъ-Лото“, съ 28 раскрашенными фигурами.

**II. ЗАДУШЕВНОЕ СЛОВО**
**ДЛЯ ДѢТЕЙ**
**СТАРШАГО ВОЗРАСТА**
(отъ 9 до 14 лѣтъ)

Гг. годовымъ подписчикамъ будетъ выслано:
интереснаго,
**52 №№** богато иллюстрированнаго **52 №№**
журнала,
съ массою повѣстей, разсказовъ, очерковъ, стихотвореній.
и РЯДЪ ПРЕМІЙ И ПРИЛОЖЕНІЙ,
въ числѣ которыхъ:

1) 12 иллюстриров. кн. сочин. извѣстныхъ писателей для юношества: М. Б. ЧИСТАКОВА и В. САМОЙЛОВИЧЪ
2) Исторія 349-ти великихъ дней, съ массою илюстрацій.
3) 6 кн. „Исторической Библіотеки“, въ попочныхъ переплетахъ.
4) Альбомъ „На память“
5) Запасная книжка-календарь: въ изящномъ переплетѣ.
6) Настольцый отрывной календарь-ежемѣсячникъ.

# СО МНОГИМИ ПРЕМІЯМИ

Подписной годъ начался I-го ноября 1904 г.—Первые №№ высылаются немедленно.

Гг. годовые подпичики журнала «З. Сл.“ для дѣтей

## МЛАДШАГО ВОЗРАСТА

(отъ 5 до 9 лѣтъ) получатъ

## 52 №№ И 43 ПРЕМІИ.

Въ числѣ послѣднихъ: БОЛЬШУЮ КАРТИНУ въ краски „МОЛОДАЯ БАБУШКА“, 12 ИГРЪ И ЗАНЯТІЙ на большихъ, раскрашенныхъ и черныхъ, листахъ; МАЛЕНЬКІЙ РУССКІЙ ИСТОРИКЪ; 6 книгъ „БИБЛІОТЕЧКИ-МАЛЮТКИ“ и мн. др.

Гг годовые подписчики журнала “З. Сл.“ для дѣтей

## СТАРШАГО ВОЗРАСТА

(отъ 9 до 14 лѣтъ) получатъ

## 52 №№ И 38 ПРЕМІЙ.

ъ числѣ послѣдныхъ: богато иллюстриров. “ИСТОРІЮ НАПОЛЕОА“ въ 12 вып.;12 иллюстр. кн. СОЧИНЕНІЙ РУССКИХЪ И ИНОСТР. ПИСАТЕЛЕЙ; роск. худож. изд. „ПУШКИНЪ ВЪ ИЛЛЮСТРАЦІ-

ЯХЪ", АЛЬБОМЪ СТИХОТВОР. на 12 иллюстр. откр. писем. мн. др

Кромѣ того, при каждомъ изданіи будутъ высылаться ПЕДАГОГИЧЕСКАЯ БИБЛІОТЕКА и „ДѢТСКІЯ МОДЫ". Подписная цѣна каждаго изданія „Задушевнаго Слова", со всѣми объявленными преміями и приложеніями, съ доставкой и пересылкой на годъ 6 рублей.

Допускается разсрочка на 3 срока: 1) при подпискѣ, 2) къ 1 февраля и 3) къ 1 мая—по 2 р. Съ требованіями, съ обозначеніемъ изданія (возраста), въ контору журнала „ЗАДУШЕВНОЕ СЛОВО" при книжномъ магазинѣ ТОВАРИЩЕСТВА М. О. ВОЛЬФЪ—С.-Петербургъ, Гостиный Дворъ. 18.

# ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ БАКУ

## НА 1906 ГОДЪ, IV ГОДЪ ИЗДАНІЯ

### ПОДПИСНАЯ ЦѢНА НА ГАЗЕТУ „БАКУ".

Съ доставкой въ Баку: на годъ 7 р. 11 м. 6 р. 50 к., 10 м 6 р. 9 м 5 р. 50 к. 8 м. 5 р., 7 м. 4 р. 50, 6 м. 4 р., 5 м. 3 р. 50 к., 4 м. 3 р., 3 м. 2 р 50 к., 2 м. 1 р. 50 к., 1 м. 1 р.

Съ пересылкой въ другіе города: на годъ 8 р. 50 к., 11 м. 7 р. 50 к. к. к., н. 7 р., 9 м, 6 р. 50 к., 8 м. 6 р. 7 м. 5 р. 50 к., 6 м. 5 р. 5 м. 4 р. 50 10 4 м. 4 р., 3 м. 3 р. 2 м. 2 р. 50 к., 1 р 50 к.

За границу: на годъ 15 р., на полгода 8 р.

Подписываться можно на всѣ сроки, но неиначе какъ съ перваго числа каждаго мѣсяца.

За перемѣну адреса просятъ высылать 5 семикопѣйчныхъ марокъ.

Отдѣльные номера «Баку" продаются въ конторѣ газеты и у разносчиковъ по 5 к.

### Пріемъ и печатаніе объявленій

Плата за объявленія: для мѣстныхъ впереди текста за строку петита (или занимаемое ею мѣсто)—15 к., позади текста—10 к. Для иногородныхъ впереди текста 20 к., позади текста 10 к. за строку петита. Многократныя объявленія по соглашенію съ конторой. Объявленія отъ лицъ ищущихъ труда печатаются за половиную плату.

Подписка и объявленія принимаются въ конторѣ редакцій и ежедневно кромѣ праздниковъ, отъ 9 до ч. дня и отъ 5 до 8 ч. веч.; въ праздники—от 10 до 12 ч. дня

Редакторъ-издатель принимаетъ для личныхъ объясненій ежедневно, кромѣ праздниковъ, отъ 1 до час. дня.

Статьи, присылаемыя въ редакцію, въ случаѣ надобности подлежатъ исправленію и сокращенію. Крупныя не принятыя статьи сохраняются въ продолженіи 1 мѣс., мелкія ни возвращаются. На рукописяхъ должны быть означены: фамилія автора, его адреса, и условіея гонорара; безъ этого послѣдняго условія статьи считаются безплатными.

Баку, Великокняжеская, Гранд-Отель.—Телефонъ № 518.

Մos ապագայում Թիֆլիսում կսկսեմ հրատարակել

# ՀԱՅՐԵՆԻՔ

ՀԱՆՐԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԸ

Եւ **ՀԱՅՐԵՆԻՔ** շաբաթաթերթը

հետեւեալ ծրագրով

1. Պետական կարգադրութիւններ։ Հեռագիրներ։
2. Առաջնորդող յօդուածներ հանրային հարցերին վերաբերեալ։
3. Ներքին տեսութիւն։
4. Արտաքին տեսութիւն։
5. Ֆելիէտոն։
6. Դպրոց և մանկավարժութիւն։
7. Մամուլի տեսութիւն։
8. Մատենագիտութիւն և գրախօսութիւն։
9. Գեղեցիկ գրականութիւն և ճանապարհորդութիւններ։
10. Գիտութիւն և արուեստ.
11. Թատրոն և երաժշտութիւն։
12. Օրագրութիւն։
13. Թղթակցութիւններ։
14. Արդիւնաբերութեան տեսութիւն։
15. Տեղեկագիր։
16. Խմբագրութեան պատասխաններ։
17. Յայտարարութիւններ։
18. Պատկերներ և ծաղրանկարներ։
19. Զանազան յաւելուածներ առանձին գրքոյկներով։

ԲԱԺՆԵԼԻԳԻՆ

| օրաթերթի | | շաբաթաթերթի |
|---|---|---|
| Տարեկան 6 ռուբլի | . . | 3 ռուբլի |
| 6 ամսուան 3—50 կ. | . . | 1—50 կոպ. |
| 3 « —1—80— | . . | —75 » |
| 1 « —75— . | . . | —25 » |
| առանձին համարը 3 կոպէկ. | . . | 7 » |
| Արտասահման՝ տարին 20 ֆրանք. | . . | տարին 10 ֆրանք |

Խմբագիր՝ Գիւտ ա. ք. Աղանեանց

Հրատարակիչ՝ Օր. Նուարդ Աղանեանց

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Полицейская, 7.

---

Թէ օրաթերթի և թէ շաբաթաթերթի հրատարակութեան վերաբերմամբ կտանք առանձին ծանուցում։

# 1906 ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1906

*Բացուած է բաժանորդագրութիւն*

# ԼՈՒՄԱՅ

**Գրական, բաղաքական, պատմական եւ հանրային**

## ԱՄՍԱԳՐԻ

**ԼՈՒՄԱՆ ՑՈՒՆՈՒԱՐԻՑ ԿՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԵՏԵՒՈՒՆԱԼ ԼՒԱԿԱՏԱՐ ԾՐԱԳՐՈՎ**

1. Ինքնուրոյն և ռուսերէնից ու օտար լեզուներից թարգմանուած վէպեր, պատմուածքներ և ոտանաւորներ՝ այլ և կենսագրութիւններ:
2. Կովկասագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ պատմական վաւերագրեր և յօդուածներ:
3. Ճանապարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագիրներ:
4. Բարոյագիտական յօդուածներ:
5. Մատենախօսութիւն և կրիտիկա գրական երկերի:
6. Ներքին տեսութիւն:
7. Քաղաքական տեսութիւն.
8. Այլ և այլք. տեղեկութիւններ գիտութիւնից և արուեստից:
9. Խմբագրութեան պատասխաններ:
10. Ցայտարարութիւններ:

«ԼՈՒՄԱՅ»-ին կաշխատակցեն մեր հետեւեալ աշխատակիցները.—Օր Նուարդ Աղանեան, ս. ս. Զատիկ Շիլինկարեան, Տիրուհի Կոսեանեան, պ. պ. Ասրպես, Արշակ Շիլինկարեան, Արշակ Շուպանեան, Բենիկ վարդապետ, Դարենցիբարեան, Գրիգոր Վանցեան, Երուանդ Ջահազիզ, Խաչիկ Յարութիւնեան, Իւրիյ Վիսելովսկի, Կարապետ Կոսեանեան, Մինաս Բերբերեան, բժ. Մ. Արամեան, Միքայէլ Թամամշեան, Մկրտիչ Բարխուդարեան, Մկրտիչ Զազարեան, Մուրացան, Մուշէ Վ., MARS, Մ. Շովրեան, Յովհաննէս Յովհաննիսեան. Ն. Յարոյ, Նիկ. Քարամեան, Շիրվանզադէ, Պետ Պոշեան, Տար. գիս Մանասեան, Սեւերիան Գաբրիելեան, Վրդանէս Փափազեան, Տ. Վ., Քաջբերունի, Քենասէր, *_*, Յար. Թումանեան եւ այլն եւ այլն:

*Տարեկան բաժանորդագրին է Ռուսաստանում 8 ռուբլի, կէս տարուանը՝ 5 ռուբլի, իւրաքանչիւր համարը՝ մի ռուբլի, Արտասահմանում 27 Ֆրանկ:*

*Բաժանորդագրութիւնն ընդունւում է Թիֆլիսում «Լումայ»ի խմբագրատանը Պոլիցէյսկի 7, և Կենտրոնական գրավաճառանոցում. իսկ գաւառներում մեր գործակալների մօտ:*

*Յայտարարութիւնների տողը արժէ 10 կոպէկ:*

*Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:*

*Խմբագրութեան հասցէն.* Тифлисъ, Редакція ежемѣсячнаго журнала „ЛУМА“, արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „LOUMA“.

*Խմբագիր-հրատարակիչ* ԴՈՒՍ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ